

# ՄԱՒՐՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

## ԱՄՍԱՋԻՐ

№ 2 1892

ՓԵՏՐԻԱՐ

1892 № 2

ԶՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՖԼԻՍ  
ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԵՆԵԱՆՑԻ  
1892

Дозволено цензурою. Тифлісъ, 20 Января 1892 г.

Типографія М. Д. Ротиніанца. На Гол. просп. соб. домъ № 41.

# ՏԻԳՐԱՆՈՒՅԻՆ

պատմական դրամա հինգ արարածով

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒՔԵՆՑՆՅԻ

(Շաբուհակութիւն <sup>1)</sup>)

## ԵՐԿՐՈՐԴ ԱՐԱՐԻԱԾ

Աժդահակի պալատը. փառաւոր ճեմելիք:

Տիգրանուհին՝ շքեղ դահաւորակի վերաէ թեք ընկած նակում է հեռու,  
մոտնում է Աժդահակը և կամաց կամաց մօտենալով նասում է կողքին.

### ԵՐԵՒՈՅԹ. I

ԱԺԴԱՀԱԿԻ (Համբուրելով)

Առողջութիւնը, ով մեծ թագուհի  
թագուհիների:

ՏԻԳՐԱՆՈՒՅԻՆ

Շնորհակալ եմ: Իսկ զու լինչպէս ես:

1) Տես «ՄուբՃ» № 1:

## ԱԺԴԱՆԱԿԱՆ

Քանի դու ինձ հետ ես, Տիգրաննուհի,  
Տըկարութիւնը մի՞թէ կը յանդզնէ  
Ինձ մօտիկանալ, երբ քո մի հայեացքդ  
Դեղ ու դարսնն է ամեն մի ցաւի,  
Երբ իւրաքանչիւր քո մի հընչիւնը հեռու է վաճառմ  
Ամենայն մի վիշտ ես երջանիկ եմ  
Եւ կենդանի եմ քեզանով միայն:  
Բայց մինչև այսօր չը կարողացայ  
Հասկանալ մի բան. ի՞նչ է պատճառը,  
Որ ացդ թախիծը և ացդ մըռացը՝  
Ամպերի նըման քո դէմքին սեցած՝  
Երբէք չեն ցըրւում և չեն հեռանում.  
Մի անգամ գոնէ ես քո երեսը  
Չը տեսայ պայծառ:

## ՏԻԳՐԱՆԱԿԱՆ

Կարող թազաւոր,  
Այստեղ բոլորը – նոր է ինձ համար  
Բոլորըն օտար, կը գայ ժամանակ  
Ես կ'ընտելանամ:

## ԱԺԴԱՆԱԿԱՆ

Ինչ կ'ուզես, ասմա: Բայց կարծես մի վիշտ  
Քայքացող մի ախտ՝  
Անդադար ուտում մաշում է հոգիոյ,  
Ինչպէս մի գարշ որթ կեղևի տակից,  
Որ գիշեր-ցերեկ մաշում է ծառը՝  
Վաղ արշալուսից մինչև վերջալոյս  
Այս ճեմելիքից դու չես հեռանում  
Եւ դէպի հիւսիս աչերըդ յառած՝  
Նայում ես անթարթ և մըսփամոլոր:  
Օ՛ մե՛ծ թագուհի, մի՞թէ ոչ մի բան  
Քեզ չը զրաւեց այստեղ, այս շըքեղ

Քո շըրջակացքում; Ո՛չ մարգարտափայլ  
 Այս շատրւաններ, ոչ այս կաթիներըն,  
 Որ նախանձացոյզ անուշ զովութեամբ  
 Համբոյր են տալիս քո լի այսերին  
 Ո՛չ այն դալարը, ոչ այն ծառերի  
 Մեղմ սօսաւիւնը և ոչ երգեցիկ  
 Այն սոխակները, որ այնքան աշխոյժ  
 Դեղգեղանքներով  
 Քո ուշքն ու միտքըն են ուզում թովել  
 Ուշնչ, մի խօսքով, չէ արժանանում  
 Քաղցր նայւածքիդ,  
 Բացի հեռաւոր այն հիւսիսային  
 Մերկ հորիզոնից: Ի՞նչ է քեզ այնոեղ  
 Ազգպէս կախարդել, ինչըդ է պակաս:  
 Ի՞նչ ես կամենում, որ այս բուդէիս  
 Ես կատարէի. ի՞նչ ես կամենում  
 Երկրիս երեսից ջընջւեր բլնաւին:  
 Այս կամ այն ծաղիկլն գուցէ չը կայ  
 Քո ծաղկանոցում, կամ թէ զուտ ոսկո: Կ  
 Կամենում ես դու ձուլեն քո սենեակ,  
 Կամ ականակուռ քո հանդերձանքը  
 Դուցէ դեռ կարօտ է գոհարների:  
 Ասա բոլորը ի՞նչ ցանկանում ես՝  
 Այդքան ծածկամիտ մի՛ լինիր ինձ մօս.  
 Սիրուըդ բաց պահիր ինչպէս ճակատըդ.  
 Իմ գանձարանիս երկաթէ գոներըն,  
 Որ անհիւրընկալ, անմատչելի են  
 Բոլորի համար, բաց են քո առջեւ:  
 Եւ կըրէսոսըն՝ աշխարհահրաւակ  
 Եւր կարողութեամբ չէ կարող մըրցել  
 Իմ գանձարանիս հարըստութեան հետ:  
 Հըրամայիր դու ինչ կամենում ես:

## ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Կարող թագաւոր

Ծաղիկ, կամ լզգեստ, արծաթ կամ ոսկի  
Ազնիւ քարեր և աղամանդ  
Չեն կարող հեռու քըշէլ ինձանից  
Իմ այս թախիծը:

## Ա.Ժ.Պ.Հ.Ա.Կ

Անզին թագուհի, տեսնում ես դու ինձ,  
Ես, որի առաջ ծունը են զընում  
Հազար հազարներ, ես, որի ձայնից  
Իմ ողջ Մարատանը ծայրէ ի ծայր  
Յընցւում է յանկարծ ինչպէս կայծակից.  
Որի մի խօսքից կախւած է — մեռնել  
Թէ ապրել մարդուն, — ես քո առաջին  
Խոնարհ գերի եմ: —  
Ըսկըսած այն օրից երբ քո աչերըն,  
Ինչպէս զոյտ ասաղ լուսաւորեցին  
Իմ այս պալատը, մի բան չէ շարժւել  
Իւր աեղից առանց քո հաւանութեան.  
Իմ պատէրները, իմ հըրամանը —  
Վաւերացւել են միշտ քո վեհագոյն  
Համաձայնութեամբ:  
Ամբողջ տէրութեան զեկը քո ձեռին, —  
Դու դարձեալ զժգոհ, զարձեալ մըսատանչ:  
Միթէ, ինձ ասա՞ քո հայրենիքում  
Վայելում էիր դու այս անսահման  
Փառք ու պատիւը ու պատկառանքը:  
Նայիր քո շուրջըդ,  
Եւ ասա՞ ի՞նչ բան քո հայրենիքում  
Դու զըստում էիր, և այստեղ չը կայ,  
Կամ ի՞նչ առաւել շըքեղ էր այնտեղ,  
Վյստեղ առաւել տըզեղ ու վատթար:  
Տես — սըրբանւէր ահա մեր նլւենդ՝

Պլանւած անթառամ՝ բուսականութեամբ,  
Որ, ինչպէս ողի, Ահուրա-Մազդին  
Դիտում է իւր շուրջ պայծառ գագաթից՝  
Զար Ահրիմանի հողմերի դիմաց  
Ամուր ախոյեան կանգնած մեղ համար;  
Ասա, որն է առաւել շըքեղ—  
Մեր մըշտականաշ այս տուրբ էլեենդը,  
Թէ ձեր չոր-ցամաք, ձեր ժէռոտ Մասիս:  
Համեմատիր, տես, —արծաթապարիսպ  
Ահա ոսկեփայլ իմ Եկբատանը,  
Եւ այնտեղ հեռու ձեր Արմաւիրը—  
Ինչո՞ւ ես լրուել չես խօսում ոչինչ:

ՏԻԳՐԱՆՈՒՃԻ

Ե՞նչ ասեմ, արքայ, — չը գիտեմ ինքըս:

ԱԺԴԱՀԱԿ

Օ՛հ, ես լաւ գիտեմ—Դու ինձ ատում ես.  
Ես ծերացել եմ, իսկ դու տակաւին  
Ծաղիկ հասակում, ես գիտեմ նոյնպէս  
Որ իմ նայւածքըն անգամ ատելի  
Եւ անտանելի է քեզ համար:

ՏԻԳՐԱՆՈՒՃԻ

Երբէ՛ք,

Ատել այն մարդուն, որ ինձ սիրում է,  
Որ կենդանի է միայն ինձանով, —  
Ես այդ կարող չեմ, բարի թագաւոր:

ԱԺԴԱՀԱԿ

Ո՛հ թնդ համբուրեմ

Քո անուշաբոյր շըրթունքները,  
Այդ քո խելացի խօսքերի համար:  
(Թէք է ընկնում նրա ծնկների վերաբէ)  
Այսուեղ ճակատիս

Զեռըդ գիր և տես՝ թէ ի՞նչ եռանդով  
Աւ պինդ զարկում են այս երակները։  
Այդպէս ուրեմն դու ինչ ուզմում ես։

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Այս:

ԱԺԴԱՀԱԿ

Սակայն ում մեզնից աւելի։  
Ի՞նձ թէ քո եղբօր։

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Ի՞նչպէս յանդըգնեմ  
Ես համեմատել, — նա եղբայրըս է,  
Դու ամուսինըս։

ԱԺԴԱՀԱԿ

Բայց թէ խմանառ  
Թէ ի՞նչ սլրտուղ է քո այդ եղբայրը,  
Սարսափած իսկոյն դու կը հրաժարւես  
Քո այն պաշտելի արիւնակցիցըդ։

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Ի՞նչպէս, թագաւոր։ Ե՞ս կը հրաժարւեմ  
Նորանից—երբէք։

ԱԺԴԱՀԱԿ (ՆԱՍԻԼՈՎ)

Լըսիր ուրեմն։ Նոյնպէս մի որթն  
Եմ սիրտըս է ուտում և դիշեր ցերեկ  
Հանդիսա չէ տալիս։ Քընիս մէջ անգամ,  
Երբ տանջանքները նիրհում են մեզ հետ,  
Խըլացած որթըն դարձեալ անընդհատ  
Կընծում է ներքուսու 0'հ, Տիգրանուհի,  
Քեզ յայտնի չէ թէ քո այն եղբայրը  
Ի՞նչ օձ է եղել—հարիւր զըլսանի ահաելի վիշապ։  
Թէ խմանայիր քանի՛ դիշեր եմ

Ես լուսացըրել աչքաբաց, արթուն...  
 Երբ զօրեղ քնից ես յաղթահարւած  
 Խըփում եմ աչքերս, նայում եմ—ահա  
 Այս գոռ հըրէշն  
 Առաջիս կանգնած անդընդանման  
 Եւր բերանը բաց՝ ըսպառնում է ինձ:  
 Ես գողգողալով  
 Ուզում եմ գոռալ, թիկնապահներիս  
 Օգնութիւն կանչել —  
 Զայնըս մեռնում է դեռ կոկորդիս մէջ,  
 Փախչել եմ ուզում—ոսներըս մեխւած  
 Չեն շարժւում տեղից...  
 Անգին թագուհի, պիտի չըքանայ  
 Այդ գոռ վիշապը.

## ՏԻԳՐԱՆՈՒԶԻ

Բայց ի՞նչու արդեօք նա, որին մի ժամ՝  
 Դու կոչում էիր սրբացաւ եղբայր,  
 Անգին բարեկամ,  
 Այժըմ, ինչպէս ժանոտ, սոսկալի վիշապ,  
 Քեզ գիշեր ցերեկ հանգիստ չէ տալիս  
 Եւ երազներում տանջում է հոգիդ:

## Ա.Ժ.ՊԱՀԱԿ

Դու ինձ լաւ լըսիր: Հենց այդ է խընդիրն:  
 Սաստիկ գըրգուսած նա իւր կնոջից,  
 Որի սրտի մէջ քո փառք ու պատիւն  
 Նախանձ է վառել, ըսպառնում է ինձ—  
 Բընաջինջ անել, կործանել ամբողջ  
 Իմ տէրութիւնը. իմ ժողովուրդըս  
 Հըպատակելով գերի դարձնել  
 Եւ քեզ քո փառքի այս լոյս-գագաթից  
 Վայր ձըգել ներքեւ: Հասկացաղ հիմա:

## ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

ԵՄ ԵՂԲԱԿՐԸ-Օ՛Հ. ԱՋԽԱԼՈՒՄ ԵԱ ԳՈւ:  
ԵՐԿԻՆՔԸ ՎՐԿԱՅ—ԱՆԿԱՐԵԼԻ Է...

## ԱԺԴԱՀԱԿ

ԵՐԿԻՆՔԸ ՎՐԿԱՅ, ՆԱ ԹՀՆԱՄԻՍ Է,  
ՆԱ ԱՐԻՆԱՐԲՈՒ ԻՄ ԹՀՆԱՄԻՍ Է:  
Եթէ ոչ-ի՞նչու է նա շարունակ  
Օգնում Կուրուցին, թունաւոր օձին,  
Որ իմ արինիցըս ծնունդ առած՝  
Իմ դէմ է սըրում իւր առամերը:  
Ինչու չէ քանդում  
Նա իւր կապերըն իմ թըշնամու հետ:  
Եթէ ոչ—ինչու նոյն չարագուշակ  
Սոսկալի երազն կըրկընում է միշտ:  
Ինչու խորիմաստ երազաբաններս  
Իմ ականջիս տակ միշտ միաբերան  
Որոսում են թէ. «ըսգաստ կացիր գու,  
Կարող թագաւոր. քո աղջականիը,  
Քո գաշնակիցը քեզ մահ է ապառնում:»  
Եթէ ոչ—ինչու իմ լլրտեսները,  
Որ ամենուրեք սրատես աչքերով  
Դիտում են գաղտնի եղելութիւններըն,  
Որ կատարւում են այս այն անկիւնում,  
Ինչու միշտ նոքա չարագոյժ լուրեր  
Են ինձ հասցընում. «ըսգաստ կացիր գու,  
Կարող թագաւոր. թէ արեելքից  
Եւ թէ հիւսիսից քամիների հետ  
Միշտ արեան հոտ է փչում դէպի մեր  
Խեղճ հայրենիքը: Ի՞նչ խորհուրդ ունին  
Այս սե, բօթալից այս համբաւներըն:

## ՏԻԳՐԱՆ

ՎՐԿԱՅ ՄԻՆԻ ԻՄ և քո արել,

Անկարելի է, որ իմ եղբայրը...

## ԱԺԴԱՀԱԿ

Վըկայ լինի քո և իմ արել  
Անկարելի է հակածառելըն:  
Արդէն որոշւած և վրճռուած է -  
Իրար ոխերիմ թըշնամիներ ենք,  
Եւ նա անպատճառ երկրի երեսից  
Շուտ պէտք է ջընջւի և անհետանայ.  
Նա իւր զօրքերից անհամար անգամ  
Վլուանգաւոր է ինձ համար...

## ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

(Առանձին) Օ՛ ես հասկացայ... դաւաճանութիւն:  
Միթէ, թագաւոր, այդքան հըրեշ է  
Եղել եղբայրը:

## ԱԺԴԱՀԱԿ

Անհընար հրէշ:  
Եւ քեզ մնում է միայն մի բան.  
Կամ եղբայրասէր լինես և յանձըդ  
Առնես մեր ազգի անարգ կործանումըն  
Եւ ականատես լինես իմ անկման,  
Աստւածավայել կեանքից հրաժարւես,  
Կամ քո սեպհական ու իմ օգուտըն  
Աչքի առնելով՝ հոգաս այս մասին  
Եւ քո խելացի—ես շատ վատահ եմ,  
Որ դու խելացի խորհուրդներ կը տաս—  
Եւ քո խելացի խորհուրդներովըն  
Մեզ հետ աջակից լինես յետագայ  
Մեր երկիւզալի ձեռնարկութեան մէջ:  
Ուրեմըն խորհիր: Շուտով գալու են  
Եւ իմ ծերունի պալատականներն  
Խորհրդակցելու: Երբ քեզ կը կոչենք,

Դու անմիջապէս կը գտի ճանապարհ  
Ցոյց տալու համար։ Աւրեմըն խորհիր։  
Իսկ ես հեռանամ։

(Վառում է)։

## ԵՐԵՒԱՅԹ. II

ՏԻԴՐԱՆՈՒՀԻՒ (մենակ)

Ո' թշւանո եղբայր։

Քո նախազըծեր, քո ցնորքներըն  
Ահա ինչպէս են իրականանում։  
«Մենք երկոքեանըս,  
Դու ասում էիր, այնպէս զօրանանք,  
Որ մեր անունը ահով ու դողով  
Ցիշւի աշխարհիս բոլոր ծայրերում։  
Թէ իմանացիր քո դաշնակիցը  
Այսքան չարանենք եղեռնազործ է...  
Ով պացծառ երկինք,  
Դու վըկաց եղիր. այստեղ ծագել է  
Դաւաճանութիւն, և սարսափելի՝  
Դաւաճանութիւն։ Բայց միամիտ կաց,  
Իմ աղնիւ եղբայր, քեզ չեմ մոռանալ.  
Աչքիս առջեւ էլ սըրեր շողշողան,  
Շատրւանի պէս արիւնըս ցայտի,  
Թշւանո իմ եղբայր, քեզ չեմ մոռանալ։

## Տեսարան Բ.

Եքեղաղարդ դահլիճ, որի պատերը դարդարւած են ու-  
կի թերթիկներով: Թագաւորի դահուքը:

### ԵՐԵԿՈՅԹ Ա

ԱՆՈՅՇ, ՄԱՐԴՊԵՏ.

ԱՆՈՅՇ

Թագաւորին տեսա՞ր:

ՄԱՏԴՊԵՏ

Տեսայ:

ԱՆՈՅՇ

Իմ մասին բան չասաց:

ՄԱՐԴՊԵՏ

Ոչինչ:

ԱՆՈՅՇ

Ազագէս շուտ նա ինձ մոռացմաւ: Լաւ, շատ լաւ: Հիմա  
ես նորան լաւ ճանաչեցի: Նա ասում էր, որ աշխարհիս երեսին  
ինձ առևնից շատ է սիրում, նորա աչքի լոյսն եմ; ինձ ոչ-ոքի հետ  
չի փոխիլ... Այն զզւելի օտարականը եկաւ թէ չէ, ինձ մոռացաւ,  
դին ձբդեց, ես եւ չը կամ նորա համար:

ՄԱՐԴՊԵՏ

Աշխարհիս բանը այդպէս է, աիկին: Ծաղկի հոտը քա-  
շում են, իրան դէն շպրտում. Խաղողի ողկոյզը մրգում քամում են,  
իրան դէն ձգում:

## ԱՆՈՅՆ

Առան, խնդրեմ, դու չես կարող թալիսման անել, կամ մի այնպիսի մարդ քեզ յացանի չէ, որ կարողանար: Զը զիտեմ ինչ անեմ: մի խորհուրդ տուր, աղաչում եմ: Թագաւորի բնութիւնը դու լաւ դիտես:

## ՄԱՐԴՊԵՏ

Ոչինչ թալիսման չէ պէտք: Քեզ մի բան ասեմ—թալիսմաններից հազար անգամ լաւ, որի ազգեցութեան մասին ես երաշխաւոր եմ: Ասիր ինձ: Թագաւորի մօտ ձեւացիր խղճացած, մռացլ, տլսուր: Երբ նա մօտովդ անցկենայ կամաց լաց եղիր, բաց մի տրոտնջալ: Շուտ շուտ հիւանդացիր: Երբէք մի շարանալ: Ցոյց տուր, որ լուռ ու մունջ հալում մաշւում ես: Այսպէս միայն դու կարող ես Աժդահակի սիրով շարժել և փոխել նորա յարաբերութիւնը: Այս լինի քո թալիսմանը, հետեւիր նորան և դու... Հեռացիր տիկին, ոտի ձայն է գալիս: Այս բանում ես քեզ կ'օգնեմ:

(Անոյշը դնում է):

## ԵՐԵՒՈՅԹ. IV

## ԱԺԴԱՀԱԿԻ, ՄԱՐԴՊԵՏ

## ԱԺԴԱՀԱԿԻ

Ի՞նչ ես անում այսոնեղ:

## ՄԱՐԴՊԵՏ

Կարող թագաւոր, Անոյշը...

## ԱԺԴԱՀԱԿԻ

Անոյշը ի՞նչ է:

## ՄԱՐԴՊԵՏ

Տկարացել է. իրան վաս է զգում:

## ԱԺԴԱՀԱԿԻ

Ի՞նչու է տկարացել, ի՞նչու է վաս զգում:

ՄԱՐԴՊԵՏ

Զը գիտեմ, իմ կարող աէր: Երկու օր է անօթի է, բերանը  
բան չէ դնում: ինչ առաջարկում ենք, հրաժարում է, մեր թա-  
խանձանքներին լռութեամբ կամ արտասուքներով է պատասխանում:

ԱԺԴԱՀԱԿ

Ասելն ի՞նչ է:

ՄԱՐԴՊԵՏ

Զը գիտեմ, աէր:

ԱԺԴԱՀԱԿ

Գնա ասա այդպիսի յիմարութիւններ չ'անի, լսնւմ ես:

ՄԱՐԴՊԵՏ

Լսում եմ, աէր:

ԱԺԴԱՀԱԿ

Ընդունի ինչ առաջարկում են: Ասա թագաւորն է հրա-  
մացում, Աժդահակն է հրամացում, լսնւմ ես. նորա փորացաւը ես  
գիտեմ, ես հասկանում եմ: Գնա այժմ: Բայց ոչ, սպասիր: Նա-  
պաւկած հօ չէ:

ՄԱՐԴՊԵՏ

Ո՛չ թագաւոր, ոսի վերաց հիւանդ է:

ԱԺԴԱՀԱԿ

Ի՞նչ է, շնոր է գանգատուում:

ՄԱՐԴՊԵՏ

Զը գիտեմ, թագաւոր, ոչինչ չէ ասում:

ԱԺԴԱՀԱԿ

Շանտ ժամանակ է:

ՄԱՐԴՔԵՏ

Կը լինի. բաւական ժամանակ կը լինի:

Ա.Ժ.ԳԱՀԱԿ

Տիտուր հօ չէ:

ՄԱՐԴՊԵՏ

Սաստիկ տիտուր է:

Ա.Ժ.ԵԱՀԱԿ

Նատ լնւ: Նւազածու և պարող կանանց նորա սենեակը  
տար, ես էլ գալիս եմ:

ՄԱՐԴՊԵՏ

Զոյգ աչքիս վրան, կարող թագաւոր:

(Գնում է)

Ա.Ժ.ԳԱՀԱԿ

Խորհրդակիցներս երեխ շատ կ'ուշանան: Ո՛հ, արելը տես  
որտեղ է: Կը հասնեմ: Ուզում են թող գան սպասեն. ոտները չեն  
կոտրւիլ: Երթամ տեսնեմ իմ Անոյշի ասելն ի՞նչ է, որ այն տե-  
սակ բաներ է անում:

(Աժդահակը գնում է: Հեռուից լւում է մեղմա-  
ձախն նւազածութիւն: Մտնում են Հարպագէսը և 7 խորհրդակիցը)

## ԵՐԵՒԱՅԹ. V

ՀԱՐՊԱԳԻՍ. 7-րդ ԽՈՐՀՐԴԱԿԻՑ.

ՀԱՐՊԱԳԻԾ

Այն մեր պատւելին՝ հեշտասիրութեան  
Անկողնից ելած երաժշտութեամբ  
Եւ կանանց պարով կազդարում է իւր  
թուլացած մարմինն, թրմրած ուղեղն,  
Որպէս զի այսօր ողջամիտ, դւարթ  
Խորհրդակցելու մեզ ներկայանայ:

7-րդ ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Բայն միայն կամաց: Թէպէտ վրատահ եմ  
Քո ըզդուշութեան և խելքի վրան...

## ՀԱՐՊԱԳԵՍ

Երանի քաղցրիկ այդ նւազի տեղ  
Այսուեղ լըսւէին բուերի վայուն  
Եւ զըզջիկների ճարճատում միայն...  
Ո՛հ, Դէյօ'կ, Դէյօ'կ, մեր ճըշմարտասէր,  
Եւաստուն, ըզգօն մեր մեծ թագաւոր...  
Եթէ որ յանկարծ նա կենդանանար  
Եւ մի աչք ճըդէր այս զահի վրայ  
Եւ աեսնէր այնտեղ, ուր բազմում էր նա,  
Մեր ամբարիշուրն է սըրբապղծում,  
Դիսե՞ս, սիրելի՞ս, թէ նա ինչ կ'անէր:

## 7 ԽՈԲՀՅԱԿԱԲ

Կը աըխրէր սաստիկ և կը վըշտանար  
Մեր մեծ Դէյօկը:

## ՀԱՐՊԱԳԵՍ

Աղբիւրի նըման  
Կը կարկաջէին արտասուքները  
Նորա աչքերից... Եւ իւր նըզովքին  
Դեռ հէկեկանքը միախառնելով՝  
Կը շտապէր իսկոյն հեռանալ, կորչել  
Այս փուչ աշխարհից; Իւր գահակալի  
Դաստապարտելի հիւանդու դէմքից  
Եւ հըրէշաւոր, արովոտ պատկերից  
Նորա աչքերը կը մըթնանացին:  
Գանձարանի ցեց, լստահակ և պիղծ...  
Իւր հօրըն անզամ մի եղունգի չափ  
Ել չէ նըմանում; Մեծ կիսքսարի  
Դիւցազնական վեհ, վըսեմ անունը  
Հոգւոց է իսրլում ծերերի սըրովից  
Ախով ու վախով: Օ՛հ Ախրիմանի  
Եւ չար գեւերի դու պիղծ օթեան:

7-րդ ԽՈՐՀՅՈՒՄԱԿԻՑ

Կամաց և ըզգոց, եթէ վըրէժըդ  
Սուրբ է քեզ համար:

ՀԱՅՊԱԴԵՍ

Այս մաղձըն ու թոյնն, որ տասը տարուց  
Աւելի է այստեղ կատաղած եռում  
Եւ պըլպըլում են ինչպէս հըրաբուխըն  
Դէմդաւէնի: Ես շատ եմ լուել  
Եւ շատ լուելուց իմ կուրծքըս հիմա  
Պայթել է ուզում:

7-րդ ԽՈՐՀՅՈՒՄԱԿԻՑ

Զարմանալի մարդ.

Երբ քո տանն էինք մենք երէկ ճաշի,  
Եւ ոգեւորւած ես խօսում էի  
Մեր գործի մասին, դու թառանէլով  
Յոդնած ձիու պէս կարծես շընչասպառ,  
Բացականչութեամբ, կըցկըտուր, անկատ  
Խօսքերով միայն և խորհըրդաւոր  
Գըլխի շարժումով և մըուայլ գէմքով  
Յայտնում էիր դու քո սրտում պահած  
Մաղձըն ու թոյնն: Իսկ այսօր այստեղ,  
Այս զահոյքի մօտ, որից փըսում է  
Արեան հոտ միայն... իսէր զառամեալ  
Քո ալեւոր հօր:

ՀԱՅՊԱԴԵՍ

Ազգականն էի,

Նորա մըտերիմ և յարգւած ծառան.  
Ինչպէս վարձատրեց հաւատաբմութիւնս  
Այն ապերախտը: Երբ նա սարսափած  
Անմիտ երազից (վաւաշոտները  
Կամ սարսափելի կամ գծուծ կեղտոտ

Արագ կը տեսնեն), դըստեր անդբանիկ  
 Նորածին մանկան իւմ վըզիս զըրաւ  
 Խեղդամահ անեմ, և երբ խեղճուկի  
 Անմեղ, զեղեցիկ ժլպիտով խախուած,  
 Զը կամենալով չար մարդասպանի  
 Անքաւելի մեղքը հոգուս վերաց առնել,  
 Արքայի հովեմն յանձնեցի նորան,  
 Որ նա կատարէ տիրոջ հրամանը,  
 Նա, ինչպէս բարի զորովագութ հայր,  
 Խեղտում չէ նորան, այլ, զաւակի պէս,  
 Աշխարհից գաղտնի պահում է իւր մօտ  
 Եւ մեծացընում այն երեխային:  
 Յանկարծ դիսպւածըն և ճակատագիրըն,  
 Տաղը տարուց յետ, արքայի առ ջեւ  
 Յայնում են կը թիւն  
 Ազատ, համարձակ խոհուն իւր թուան, -  
 Մեր թագաւորը, փոխանակ անհուն,  
 Յընծութեան, անհուն շընորհակալութեան,  
 Կ'ոչ բերաւ գըլիսիս: Իւմ միակ որդուս,  
 Իւմ ծաղկափրթիթ կացառ. զաւակիս,  
 Որ մըիիթարանք էր ծերութեանըս,  
 Մոլի նենգութեամբ արքունիք քարշեց,  
 Փառնուկի նըման մորթելուց յեսոց,  
 Նորա մըսիցըն և ոսկորներից  
 Վայրենի ուտեսու պատրաստել տըւեց.  
 Եւ, հրաւիրելով ինձ իւր խմնջուքին,  
 Կերակըրեց հօր զաւակի մըսով.  
 Եւ վերջումըն էլ իւմ որդուս կըտրած,  
 Արինուս զըլուիլն առաջիս դըրաւ  
 Եւ գոռոգութեամբ ու լիրբ պարծանիքով  
 Բորենու նըման մըուլնչեց այսպէս.  
 «Հարսպան, բաւակնն ես դու. իւմ ճաշից,  
 Լաւ էր նա»: Եւ ես ոզբալու տեղակ,  
 Թէսպէս արիւնըս իւմ զըլիս զարկեց

Եւ իմ աչքերըս ուռան, լլցւեցի՞ն  
 Արտասուզի տեղ կարմիր արիւնով,  
 Ես ինձ պահեցի և դոզզոջ ձայնով  
 Եւ հանդարս այսուէս ես մըրմընջացի.  
 «Բաւական եմ, տէր, բոլորը լաւ է  
 Ինչ որ անում է մեր թագաւորը»:  
 Այն ժամից լսկած ես կենդանի եմ  
 Վըրէժխընդրութեան միայն կրակով,  
 Եւ զիշեր ցերեկ աչքիս առաջից  
 Ել չեն հեռանում արիւնաշաղախ  
 Որդուս գըլուխը և Աժդահակի  
 Լըկոփ կերպարանքը: Այժըմ հասել է  
 Իմ փափագելի, անձկալի ժամըն,  
 Եւ չարագործի վերջին օրերը  
 Հաշւած են արդէն: Նա պիտի ընկնի  
 Իւր բարձրութիւնից: Նորա գիւական  
 Ամեն մի քայլից մի օձ է աճել  
 Նորանից ծածուկ, որ միահամուռ  
 Ալ յարձակւեն շուտով և բոլորովին  
 Նորա մարմինը ոտից մինչև զըլուխ  
 Թունալից խայթերը կը ցըցեն նորա  
 Նազուք մըսի մէջ: Եւ իւրաքանչիւր  
 Նորա արարքը, որ հազարների  
 Սըրտեր է այրել, ինչպէս կայծակի  
 Անդրագարձ հարւած, կը ճայթէ շուտով  
 Նորա պիղծ գըլիխն: Արդէն մեր բոլոր  
 Մեծամեծները ինձ հետ համաձայն  
 Եւ համամիտ են, միաբանութեան  
 Ամուր կատերով կատել եմ նոցա:  
 Եւ ժողովը իւրի խուլ գանդատները  
 Եւ խուլ ալրատունջը գըրաւական են  
 Մեր յազմանակին: Արդէն Կուրուշը...  
 Այսօր ականջիղ ոչինչ չէ հասել  
 Կուրիշի մասին

7-րդ ԽՈՐՀԲԻԱԿԻՑ

ԽՇԱ կաչ, որ... ոչինչ:

ՀԱՐՊԱԳԻՍ

Խակ ինձ հասել է: Խւր պարսիկներին  
Նա գըս զըսել է և պատրաստում է,  
Ապլաստամբութեան և արշաւանքի:  
Խմ խըրախոյցը և ցորդորանքը  
Ընծաների և խոսոութների հետ  
Երեւի արդէն հասել են նորան:

7-րդ ԽՈՐՀԲԻԱԿԻՑ

Աւրեմին մթնում է մեր հայրենիքը: —

ՀԱՐՊԱԳԻՍ

Խեղճ Մարաց գըլխին

Երկինքը վաղուց, վաղուց է աւցել—  
Մեծ Կիսասարին թաղումից յետոյ:  
Մեր ողորմելին գեռ յոյս է տածում՝  
Երկար անպատիժ թագաւորելու:  
Բի՛ւր անգամ արլամար, եթէ կարծում է,  
Դազանսաբարոյ և պիղծ գործերին  
Զուր անհետւանկ կարող են անցնել:  
Թոքախոյից խեղտւած—զեռ չէ հաւատում՝  
Խւր հիւանդութեան:

7-րդ ԽՈՐՀԲԻԱԿԻՑ

Խակ մեր ծերերը...

ՀԱՐՊԱԳԻՍ

Բոլորեքեան էլ, բացի երկուսից—  
Վիրապ որւած են բոնչակալիցըն:

7-րդ ԽՈՐՀԲԻԱԿԻՑ

Աւրեմն ինչպէս խոստվանեցիր  
Ինձ ճանապարհին, դու ամենեին

Բան չես մըտածել: Նա քո կարծիքը  
Գընահասում է. պահանջելու է  
Քեզնից մի խորհուրդ:

## ՀԱՐՊԱԴԵՍ

Ժամանակ վասնել

Այդ բանի համար ինձ բոլորովին  
Աւելորդ թւաց: Ի՞նչ է զանդաղում  
Տիրոջ սիրելին, նորս հետ և ես  
Համակարծիք եմ: Միմիացն մի բան  
Յայտնի է ինձ քաջ, որ մեր արքայի  
Բոլոր խորամանկ ու չափած ձեած  
Նախազլծերըն անշահ, անօգուտ  
Շուտ պիտի պայմթեն պըզպըջակի պէս,  
Խոր հին սխալներըն և հին յանցանքներն  
Ի՞նչով է ուզում անհետացընել, —  
Խոր սըխալներով և նոր յանցանքով:  
Բայց իմ Կուրուշը քընած չէ այժըմ,  
Խելագարւած չէ մինչն Տիգրանը,  
Գեռ իմ այս սիրուն իմ՝ ուղեղը  
Գայլի, շըների և անդըների  
Գէշորս չէ գառած, ոչ մէկի զլլիից  
Մի հաս մազ անդամ պակասելու չէ:  
Եթէ առաջիս խորջեր են ընկած,  
Քայլըս չեմ փոխիլ. ես աչքեր ունիմ  
(Մանում են 1-ին և 2-րդ խորհրդակիցները.)

## ԵՐԵՒՈՅԹ. VI

ՀԱՐՊԱԴԵՍ. 1-ին, 2-րդ և 7-րդ ԽՈՐՀՐԴԱԿԻՑՆԵՐԸ.

1-ին ԽՈՐՀՐԴԱԿԻՑ

Ի՞նչով այդպէս շուտ

## ՀԱՐՊԱԴԵՍ

Ես կարծում էի դուք էք ուշացել:

1-ին ԽՈՐՀՈՒԱԿԻՑ

Ուր են միւսները. ի՞նչու չեն գալիս:  
ՀԱՐՊԱԳԻՑ

Ես էլ լինեի արքայի «աշքը»,  
Քեզ նըման ես էլ կը գուգուայի  
Տեղի-անտեղի:

1-ին ԽՈՐՀՈՒԱԿԻՑ

Նայի՛ր ինձ, Հարպագ,  
Դու անըզգոյց ես:

ՀԱՐՊԱԳԻՑ

Ինձ էլ յայտնի է.

Ես մեղաւոր եմ:

(Մանում են միւս խորհրդակիցները)

## ԵՐԵԽՈՅԹ. VII

ՀԱՐՊԱԳ. 1, 2, 3, 4, 5, 6, և 7-րդ ԽՈՐՀՈՒԱԿԻՑՆԵՐԸ.

1-ին ԽՈՐՀՈՒԱԿԻՑ

Ի՞նչու ուշացաք: Ինչու չէք գալիս  
Եւր ժամանակին, ըսպասում եիք գուք,  
Որ թագաւորը մարդիկ ուղարկէ  
Զեր եռեից, համ:

4-րդ ԽՈՐՀՈՒԱԿԻՑ

Ես ասուածներին

Աղօթում էի մեր թագաւորի  
Բոլոր մեղքերի թողովթեան համար.  
Հստիպում էի և ժողովրդին

Նոյնպէս աղօթեր:

1-ին ԽՈՐՀՈՒԱԿԻՑ

Իսկ գու ուր էիր.

## 5-րդ ԽՈՐՀՅԴԱԿԻՑ

Ես ներկայ էի մի կնոջ գըլխառան,  
Որ պատիժ կըրեց մեր թագաւորի  
Հըրամանովը իւր անառակութեան  
Յանցանքի համար, և այս պատիժը  
Պիափ ծառայէ իբրև օրինակ  
Հատահակներին, ինչպէս այդ ասաց  
Մեր թագաւորը:

## 1-ին ԽՈՐՀՅԴԱԿԻՑ

Իսկ զու հւր էիր:

## 6-րդ ԽՈՐՀՅԴԱԿԻՑ

Ես խօսում էի մեր թագաւորի  
Մի լըրտեսի հետ, որից նոր համբաւ  
Այս օր իմացայ:

## 1-ին ԽՈՐՀՅԴԱԿԻՑ

Ի՞նչ բան է: Ի՞նչո՞ւ  
Վաղօրօք դու ինձ չես յայտնու՞ի, եթէ...  
(Մանում է Աժդահակը, գահուրը բարձրանալով բազմում է)

## ԵՐԵՒՈՅԹ ՎIII

ԱԺԴԱՀԱԿ, ԽՈՐՀՅԴԱԿԻՑՆԵՐ

ԱԺԴԱՀԱԿ

Օ, ելիներս, ողջո՞ն ձեզ:

ԲՈԼՈՐԵՔԵԱՆ

ՈՂՋՈ՞Ն,

Կարո՞ղ թագաւոր:

ԱԺԴԱՀԱԿ

Կառարեցի՞ր դու  
Իմ հըրամանը:

5-րդ ԽՈՐՀԲԴԱԿԻՑ

Կաստարեցի, առելու

ԱԺԴԱՀԱՀԱԿ

Քեզ շընորհում եմ ոսկի գաւազան,  
Որ այսուհետեւ դու կըրկնապատիկ  
Եսանդով վարես ըստանձնած պաշտօնըդ:  
Անառակներին դու այսուհետեւ  
Այդպէս կը պատժես: Խնձ հաճելի չէ,  
Որ օր ըստ օրէ բազմանան մեր մէջ  
Այդպիսի լըրբերն ու ապականեն  
Մաքուրներին էլ իրանց զզւելի  
Օրինակովը: Ես կամենում եմ  
Իմ տէրութեան մէջ հէշ չը կառարւեն  
Նընութեան գործեր. ես կամենում եմ,  
Որ ժողովուրդըս անարատ լինի.  
Լըստում էք, ծերեր, որ յատակ մնայ  
Իմ ժողովուրդըս: Մեր օրէնքն էլ  
Այդ է պահանջում: Աւազակներին,  
Խաբեբաններին և դոցա նըման  
Ալրիկաններին աստիկ կը պատժես  
Դու այսուհետեւ. նոքա մաշում են  
Տէրութեան հիմքը: Այդ տեսակ ախտից  
Չը պէտք է լինին իմ հողի վերան:  
Եւ եղանակները շուտ արմատախիլ  
Մենք պէտք է անենք: Եւ դորա համար  
Պիտի լինէք խիստ, անողոքելի:  
Ահըն ու երկիւղըն Մեղացու սըրտից  
Պիտի չը հեռանան: Լըստում էք, ծերեր:

ԲՈՂՈՐԾՔԵԱՆ

Լըստում ենք, արքայ:

ԱԺԴԱՀԱԿ

Ասացէք տեսնեմ, թէ ի՞նչ էք խորհել

Մեր գործի մասին, թէ ի՞նչպէս վանենք  
Մենք այն վըտանզը, որ ըսպառնում է  
Մեր հայրենիքին։ Ինչ մընում է ինձ,  
Խօսքի քաղցրութեամբ ինձ հընար եղաւ  
Արդէն գըրաւել թագուհու սիրտը.  
Համաձայն է նա մեզ հետ եղբօր գէմ  
Դաւագործ լինել։

1-ին ԽՈՐՀՐԴԱՎԱՒՑ

Կարող թաղաւոր,  
Գիշեր ու ցերեկ երկար ու բարակ  
Խորհելուց յետոյ վերջապէս գոտոց  
Մի յարմար միջոց։

ԱԺԴԱՀԱԿ

Եմու բարի, տեսնե՞նք:

1-ին ԽՈՐՀՐԴԱՎԱՒՑ

Ամենից առաջ մարդիկ ուղարկենք  
Տիգրանին մեզ մօտ հըրաւիրելու։  
Իսկ մենք նախապէս մի ճոխ փառաւոր  
Խընջոյք կը սարքենք։ Տիգրանը կը գայ...

ՀԱՐՊԱԴԵՍ (առանձին)

Դու էլ վեր կառնես, կը սպանես նորան։

1-ին ԽՈՐՀՐԴԱՎԱՒՑ

Տիգրանը կը զայ, և մենք կ'ընդունենք  
Նորան հանդիսով, ինչպէս վայել է  
Այդ թագաւորին։ Այնուհետեւ գինին  
Մէջտեղ կը բերենք և խըմիչքներով  
Նորա գըլուխը կը շըշմեցընենք։  
Յետոյ, երբ ապշած՝ անդամալուծի  
Նըման նա գետին ընկնէ, մենք իսկոյն  
Կը քաշենք նորան մի խոր փոսի մօտ...

## ՀԱՐՊԱԳԻՅ (առանձին)

Անմի՛տ լողացակ:

## ԱԺԴԱՀԱԿ

Առանց զինու էլ

Դրժար չէ անել ինչ կամենում ես.

Բայց հետեւանքը երկիւղալի է:

2-րդ ԽՈՐՀԻԳԻԱԿԻՑ

Մի զեսպանութիւն յղենք նորա մօտ,

Որ յայանես նորան, իբրև թէ մի մեծ

Նրշանաւոր գործ պահանջում է ձեր

Անձամբ տեսութեան: Կարող թագաւոր,

Ինձ թւում է թէ այսպիսի պատրասկ

Կարող է նորան զբրաւել մինչեւ

Մեր ասհմանները, ուր մենք վազօրօք

Լարած կը լինենք մեր որոգայթը:

Եւ այնուհետե...

## ԱԺԴԱՀԱԿ

Այդ լաւ ասացիր

Արկւս վըկայ, այդ լաւ ասացիր.

Ի՞նչ կ'ասէք, ծերեր:

## ՀԱՐՊԱԳԻՑ

Օ՛հ. ասրսափելի

Խելացի խորհուրդ:

ԲՈԼՈԲՔԵԱՆ (բացի 1-ինից).

Խելացի խորհուրդ:

1-ին ԽՈՐՀԻԳԻԱԿԻՑ

Այնպէս եմ կարծում Տիգրանը չի դալ:

## ԱԺԴԱՀԱԿ

Իսկ իշու:

## 1-ին ԽՈՐՀԲԴԱԿԻՑ

Այնպէս: Նա չի դալ: Գիտեմ:

## ԱԺԴԱՀԱԿ

Խնչպէս տեսնում եմ անհրաժեշտ է  
Այստեղ թագուհու ներկայութիւնը.  
Անկասկած մեզնից նա աւելի լաւ  
Մօտիկ է, տեղեակ եղքօր բնութեան  
Եւ հակումներին, մեզ կարող է տալ  
Գործնական խորհուրդ: Ուրեմն նրան  
Այստեղ կանչեցէք:

## 6-րդ ԽՈՐՀԲԴԱԿԻՑ

Մինչեւ աիրուհու գալը, թագաւոր,  
Հըրաման տուր ինձ մի լուր հաղորդեմ:  
Թէպէտ անարժան, անսխորժելի...

## ԱԺԴԱՀԱԿ

Անսխորժելի'... շուտ ասաւ տեսնեմ...  
Արիւնըս իսունեց:

## 6-րդ ԽՈՐՀԲԴԱԿԻՑ

Կարող թագաւոր,

Մեր հաւասարիմ լրակասի խօսքով  
(Նա Պարսկաստանից է ուղիղ գալիս  
Եւ իջևանել է իմ տանըս մէջ)  
Քո խաղաղասէր, խոնարհ, հըպատակ  
Պարսիկների մէջ լսկըսել է չար  
Ալէկոծութիւն, երկրաշարժին  
Նախընթաց մի խուլ, լստոր երկրային  
Դըղըրդոցի պէս. գա ոչինչ բարի  
Մեզ չէ գուշակում: Քո թուլն, ալքոն...

## ԱԺԴԱՀԱԿ

Անունը չը տաս...ո՛ դու, Հարպագէս,

Այս քո բանը է՞...

Երդ ԽՈԲՀՅԴԻԱԿԻՑ

Ճռիս, փարթամշ առաստ իւր ինչոյքներով,  
Եւ շնորհներով  
Իւր լիաձեռն խօստումներովքն  
Նա խախտել է ողջ ժողովուրդը  
Եւ այժմ ամբողջ ատելի ազգը  
Պաշտում է նրան ինչպէս աստծուն,  
Եւ ըսպասում է նորա մի խօսքին:

ԱԺԴԱՀԱԿԻ

Լըսմամ ես, Հարուկանդ:

ՀԱՐՊԱԳԻԵՍ

Լըսում եմ, արքանց:

ԱԺԴԱՀԱԿԻ

Եւ դու չե՞ս դողում:

ՀԱՐՊԱԳԻԵՍ

Ումիից, թագաւոր, մի երեխայից  
Ոչ, կարող թագաւոր:

ԱԺԴԱՀԱԿԻ

Անոլէ՛աք արարած.

Ես ավաստում եմ, որ զաւակիոդ հետ  
Քո թռքերըն էլ չը խորովեցի:

ՀԱՐՊԱԳԻԵՍ (մօտենալով գահին)

Ես մեղապարտ եմ: Սուրը քո ձեռիդ,  
Եմ ողարանոցը—քո ուսերի տակ:

ԱԺԴԱՀԱԿԻ

Թէ արի և քաջ չը լինէիր դու<sup>ւ</sup>  
Պատերազմի մէջ, այս ժամիս ահա

Այս գահովքի տակ ես քո զլուկար  
Կը տապալեի:

## ՀԱՐՊԱԳԻՍ

Սրբանց ինձ ներիր,

Կարծղ թաղաւոր: Ես ճիդ կը թափեմ  
Եւ մի յանցանքըս կը չանամ քաւել  
Հազար շահաւետ գործերով:

## ԱԺԴԱՀԱՀ

Սակայն

Երդւում ես:

## ՀԱՐՊԱԳԻՍ

Այն Միհրի անունով  
Երդւում եմ, ալքայ:

## ԱԺԴԱՀԱՀ

Ես հաւատում եմ:

Սիրելիս, գնա դու ել պատրաստեիր  
Դէպի Պարսկաստան:

## 6-րդ ԽՈՐՀՐԴԱԿԱՒՑ

Զոյդ աչքիս վրայ:

## ԱԺԴԱՀԱՀ

Կուրուշին այսոեղ ինձ մօտ կը բերես  
Կասես, թէ պապըտ քեզ կարօտել է,  
Ուզում է տեսնել: Նորա հետ քաղցըր  
Եւ լաւ կը վարւես: Թող մի զայ այսոեղ  
Մեր աջն չար օձը, որին խրդալով,  
Երազաբանիս խելքին ընկնելով,  
Ես արձակեցի, և որլ հիմա  
Նենգութեամբ լրցւած՝ սողում է դէպի

իմ խաղաղ գահը իւր հարազատին  
Խածելու համար. թող նա դայ այսոնդ,  
Աչքիս երեաց, օ՛հ իմ արեով  
Ահա երգւում եմ, նորա զլուկուր  
Այս գայիսօնով պիտի ջախջախեմ,  
Եւ կը սովորցնեմ այն անիրաւին  
Ապլաստամբւելու եղանակները:  
Սիրելիներըս, ինչպէս տեսնում էք,  
Դեռ ևս մեր հին վէրքը չը բուժած,  
Մեր կըրծքի վրայ կանչեցի ահա  
Մի վլատանգաւոր թարախոս պալար:  
Սիրելիներըս, դուք պիտի օգնէք  
Զեր թագաւորին, յուսահասութեան  
Ինձ չը հասցընէք:

(Մանում է Մարդպիտը)

## ՄԱՐԴՊԵՏ

Կարող թագաւոր, մեծամայր թագուհին պատրաստում  
Եր գալու, բայց յանկարծ ուշաթափ եղաւ. և լնկաւ գետին:

## ԱԺԴԱՀԱԿ

Այսօր ուրեմբն այս բանը մընաց,  
Եղուց դուք կը գաք — ես կը հաղորդեմ  
Նորա խորհուրդը: Եւ ապա կանենք  
Մեր անելիքը: — Գընացէք բարով: (Գնում է.)

## ԵՐԵՒԱՅԹ IX

ԽՈՐՀՈՒԱԿԻՑՆԵՐ

ՀԱՐՊՈՎԻՔԵՍ

(6-րդ խորհրդակցին) Այսօր դու ինձ մօտ ընթրիքի կը գասաւ

## Տեսարան Գ.

ՏԻԳՐԱՆՈՒՀԻՄ, ԳՈՀԱՐԻԿ

ՏԻԳՐԱՆՈՒՀԻՄ

Այսուղ մարդ չը կաց:

ԳՈՀԱՐԻԿ

Ինչու՞ Ի՞նչ կայ որ: Ի՞նչու այդքան յուզւած շփոթւած է  
տիրուհիս:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻՄ

Եթէ հարկաւոր լինի, որ դու զնաս աճնաւղ — կերթաս թէ ոչ:

ԳՈՀԱՐԻԿ

Ո՞ւր: Ի՞նչ բանի համար:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻՄ

Արմաւիր: Յեսոյ կառեմ ինչու համար: Առժամանակ դա  
պիսի ծածուկ մնայ: Ես քեզ կը զգեստաւորեմ այնպէս, որ քեզ ոչ  
ոք չի ճանաչիլ: Կ'երթաս: Այս: Այն, սիրելիս, կ'երթաս, կ'երթաս:

ԳՈՀԱՐԻԿ

Ո՛չ. Ես ի՞նչպէս կարող եմ—ինձ կը սպանեն, կտոր կտոր  
կանեն:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻՄ

Մենակ չես զնալ, սիրելիս: Քեզ հետ մարդ կը զնեմ: Առ,  
քեզ լինին այս ազամանդէ մատանին, այս ապարանջանը, այս օղակ-  
ները: Երբ զնաս և վերադառնաս, քեզ աւելի լաւ բաներ կ'ընծայեմ:  
Կ'երթաս թէ ոչ:

ԳՈՀԱՐԻԿ

Կ'երթամ; Ալայն պէտք է ասես այդ ի՞նչ բան է, որ ծած-  
կուժ ես:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Ի հարկէ, սիրելիս, էլ ում պէտք է յայտնեմ, եթէ ոչ քեզ:  
Իր ժամանակին կիմանաս Հիմա ինձ համար էլ այդ բանը գեռ բոլո-  
րովին պարզ չէ, գեռ մուժ է:

ԳՈՀԱՐԻԿ

Կ'երթամ; Անպատճառ կ'երթամ; Մօրս, ազգականներիս էլ կը  
տեսնեմ. շատ կարօտել եմ; Ե՞րբ գնամ:

ՏԻԳՐԱՆՈՒՀԻ

Ես կասեմ երբ: Այժմ իմ առանձնաւենեալս գնանք:

(ԱԾ ՀԱՐՈՒՆԱԿՎ)

## ԱՌԱՑ ԴԱԻԱՆԱՆՔԻ

Ժամանակակից վէպ Հէնրիկ Սենկեիչի

Թարգմ. Տ. ՅՈՎՃԱՆՆԻՍԵԱՆԻ

## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

(Շարունակութիւն<sup>1)</sup>)

Հռոմ, 12 լունւարի:

Երեկ գրելիս ես գրգռւած դրութեան մէջ էի: Բայց ինձ թւում է, որ ես շօշափեցի թէ իմ և թէ ընդհանուր մարդկացին հոգու վերքը: Կիսում են րոպէներ, երբ ես անտարբերութեամբ եմ վերաբերում այդպիսի հարցերի, բայց երբեմն նրանք ինձ անզժաբար տանջում են, մանաւանդ որ իմ մէջ են ծածկւած այդ հարցերը: Գուցէ լաւ կը լինէր չը մոտածել այդ հարցերի մասին, բայց նրանք վերին աստիճանի կարևոր հարցեր են... իսկ մարդս անպատճառ ուզում է իմանալ, թէ ի՞նչ է սպասում իրան և թէ ինքը ինչպէս պէտք է կարգի դնի իւր կեանքը: Ես շատ անգամ եմ փորձել՝ ասել վերջապէս ինքս ինձ,—բաւական է, այդ կախարդւած շըջանից դուրս չես կարող գալ, լաւ է սկի չը մննես մէջը: Ես ինձ կուշտ և ուրախ գագան դարձնելու համար բաւականաչափ կարողու-

1) Տե՛ս «Մուլք» № 1.

թիւն ունեմ, բայց ես չեմ կարող լնդ միշտ բաւականանալ զրանով։ Ասում են, որ սպառնների բնութեան մէջ մի քիչ հակումն կայ դէպի միստիկականութիւն։ Ես նկատել եմ, օրինակ, որ մեր բոլոր մեծ զրոյները իրանց կեանքի վերջին տարիները միստիկ են գառնում։ Ել ինչու պէտք է զարմանալ, որ երբեմն-երբեմն սովորական մարդիկն էլ են մի քիչ տանջւում։ Խսկ գալով ինձ, ես պէտք է զրեի իմ ներքին վրդովենների մասին՝ հոգուս պատկերը պարզ դուրս բերելու համար։ Խացի այդ՝ մարդ երբեմն պահանջ է զգում ինքն իւր առաջ արդարանալու։ Օրինակ՝ ես, այդ անվերջ «չը գիտեմ»-ը հոգում, պահում եմ կրօնի սպառերանները և ինձ կեղծաւոր չեմ համարում։ Կեղծաւորութիւն կը լիներ իմ կողմից, եթէ որ ես «չը գիտեմ»-ի փոխարէն կարողանացի ասել՝ «գիտեմ, որ ոչինչ չը կայ»։ Բայց մեր սկեպտիկականութիւնը՝ բացարձակ բացասութիւն չէ, այլ աւելի՝ մի տեսակ ցաւոս ու հոգեմաշ կասկած է, թէ դուցէ ոչինչ չը կայ. այդ՝ մի ժմանճը մշուշ է, որ պատել է մեր գլուխը, ճնշում է մեր կուրծքը և ծածկում է լոյսը մեր աչքից։ Ես մեկնում եմ ձեռներս դէպի արեգակը, որ գուցէ լոյս է տալիս այդ մշուշից դէնը։ Եւ կարծում եմ, որ միմիացն ես չեմ այդ զրութեան մէջ գանւում և որ կիւրակէ օրերը պատարագ գնացողներից շատերի, շատ շատերի աղօթքը կարելի է երեք խօսքով արտացայտել՝ «Ասուած, փարատիր խաւարը»։

Եեմ կարողանում այսպիսի բաների մասին ստունասիրո գրել։ Կրօնական կանոնները ես պահում եմ նոյնպէս և այն պատճառով, որ սաստիկ փափագ ունիմ հաւատալու... Այն վարդապետութիւնը, որով ես դաստիարակւել եմ, ողորմածութիւնը հաւատի անհրաժեշտ պայմանն է համարում, — և ես սպասում եմ ողորմածութեան։ Սապատում եմ, որ մէկը ինձ շնորհի այնպիսի հոգեկան դրութիւն, որ ես կարողանամ հաւատալ առանց կասկածանքի ամենաշնչին նշոյլի, հաւատալ այնպիսի խորին հաւատով ինչպէս հաւատում էի երեխաց ժամանակ։ Ինձ զեկավարում են ազնիւ դրդումներ. այդ դրդումների մէջ վաս բանի նշոյլ անդամ չը կայ, ընդհակառակը՝ ինձ աւելի ձեռնատւ կը լիներ կուշա ու ուրախ գագան լինել։

Բայց եթէ ինձ պէտք լիներ իմ արտօքին բարեպաշտութիւնը արդարացնել ոչ այլքան ազնիւ ու աւելի գործնական նկատումնե-

րով, այդպիսի նկատումներ էլ բաւական կարող էի առաջ բերել: Մի քանի պարագանութիւններ կան, որոնց կատարելը ինձ համար սովորութիւն է դարձել. ինչպէս Հանրի IV-ը ասում էր, թէ Պարիզը արժի մի պատարագ, այնպէս էլ ես ինքս ինձ ասում եմ՝ ուրիշների հանգստութիւնը արժի մի պատարագ: Իմ հասարակութեանը պատկանող մարդիկ ընդհանրապէս կատարում են կրօնի պահանջած ծէսերը, իսկ իմ խիզճս միայն այն ժամանակ կարող կը լինէր որ և է բողոք յայտնել, եթէ որ ես կարողանացի ինքս ինձ «չը գիտեմ»-ից աւելի վճռողական մի բան ասել: Վերջապէս՝ ես եկեղեցի եմ զնում, որովհետեւ ես քառակուսի աստիճանի հասցրած սկեպտիկ եմ, որ կը նշանակի, թէ ես մինչեւ անգամ իմ սեպհական սկեպտիկականութեանս էլ սկեպտիկաբար եմ վերաբերուում:

Հենց այդ է վատը: Իմ հոգին իւր մի թեւը քաշ է տալիս զետնահանց:

Դրութիւնս աւելի դառը կը լինէր, եթէ որ ես միշտ այդ հարցերին այնպէս զգացուն սրտով վերաբերեւէի, ինչպէս վերջին անգամ՝ ինքս ինձ խոստովանութիւն անելիս էի վերաբերուում: Իմ բախտիցս, այդպէս չէ: Ինչպէս արդէն ասել եմ, պարբերաբար ինձ վրայ անտարբերութիւն է գալիս: Ժամանակ առ ժամանակ կեանքը ինձ առնում է իւր դիրիկը և թէկ ես այնուամենացնիւ չեմ մնուանում: Թէ, ինչ արժէք ունին նրա բոլոր քաղցրութիւնները, բացց ելի ոտովդիմով անձնատուր եմ լինում նրան, և այն ժամանակ բարոցական տօ Եօ որ ոտ Եօ Եօ Հարցը (լինել թէ չը լինել) ինձ համար ոչ մի նշանակութիւն չի ունենում: Տարօրինակ երևոյթ է և մինչեւ այժմքիչ ուսումնասիրւած, թէ որքան սաստիկ կերպով է ներգործում այդ դէսլքում շրջապատղ միջավայրի (ըրեձա) բանակալութիւնը: Օրինակ՝ Պարիզում ես աւելի հսնգիստ էի լինում և զրա պատճառը միայն այն չէր, որ ինձ խլացնում էր ջաղացի անիւների գղրդոցը, որ ես ինքս էլ եռ էի գալիս այդ եռման ջրի մէջ, որ «վարժութեան ժամերը» ոչ սրտում, ոչ էլ գլխում ուրիշ բանի համար աեղ չէին թողնում: ոչ, այնուղեղ մարդիկ, գուցէ անգիտակցութար, այնպէս են ապրում, կարծես թէ ամենքն էլ հաւատացած են, որ մարդ պէտք է իւր բոլոր պէտերը նւիրի կեանքին, որովհետեւ կեանքից յետոյ միայն քիմիական պրօցեսներ են լինելու: Այնակ

իմ երակազարին էլ սկսում է բարախել հասարակական երակազարիկի հետ միասին ու ես էլ արամադրում եմ ընդհանուր արամադրութեան համապատասխան։ Ուրախանում եմ թէ տիրում, ծեծում եմ թէ ծեծւում, արտաքուստ ես հանգիստ եմ լինում։

Հոռմ, Բարուխինո փողոց, 13 լոճուարի։

Մինչև այստեղից հեռանալս չորս օր է մնում։ ուզում եմ զնալուց առաջ իմի ամփոփել իմ մասին ասածներս։ Ես՝ մի քիչ յոգնած, սաստիկ տպաւորւող և ջղալին մարդ եմ։ Արտաքին կրթութիւնից սաստկացած ինքնաճանաչութիւնս այնքան բարձր է, որ առհասարակ ես ինձ կարող եմ մնուածալիս զարգացած մարդ համարել։

Ակեպտիկականութիւնս, —քառակուսի դարձրած սկեպտիկականութիւնս չի թողնում, որ իմ մէջ որ և է անցողզողդ համոզմունք մնայ։ Ես նայում եմ, զիառում եմ, երբեմն-երբեմն ինձ թւում է, որ ես լմբունում եմ իրերի էութիւնը, բայց վերջ ի վերջոյ այդ էլ է ինձ կասկածելի թւում։ Ասացի արդէն, թէ ինչպէս եմ վերաբերում կրօնին։ Գալով քաղաքական հայեացքներիս՝ ես պահապանողական եմ, որքան որ իմ գրութեան մէջ զանւողը կարող է սկահապանողական լինել և որքան պահապանողականութիւնը բաւարարութիւն է տալիս իմ ճաշակին։ Աւելորդ է ասել, թէ որքան տարբեր է այդ տեսակ պահապանողականութիւնը այն հայեացքից, որով անշարժութիւնը մի տեսակ դաւանանքի նման բան է, որին մինչև անդամ չի կարելի կրիաթիկաբար վերաբերուել։ Ես այնքան քաղաքակրթւած մարդ եմ, որ չեմ կարող անսպացման կերպով արիստոկրատիալի կողմն անցնել։ Այդ տեսակ խաղալիքներով գրաւում են յետ ընկած, խուլ անկիւններում կամ այնպիսի հեռաւոր երկիրներում, ուր գաղափարները մողայի պէս մի քանի տարով ուշ են հասնում։ Ես սիրում եմ զգայուն ջղերի տէր, զարգացած մարդկանց և վիճուռում եմ նրանց այնակդ, որտեղ տակլի հեշտ կարելի է նրանց գտնել։ Ես սիրում նրանց այնպէս, ինչպէս սիրում եմ զեղարւեստի արտադրութիւնները, գեղեցիկ տեսարանները, սիրուն կանանց։ Ի.Շ Էսթերիկական զիւրազայութիւնը ինչքան գւարձու-

թիւն է պարզեւում ինձ, այնքան էլ տհածութիւն է պատճառում՝ բաց և միշտ մասուցել է ու մասուցանում է ինձ մի մեծ ծառայութիւն,—նա ինձ պահպանում է ցինիկականութիւնից, այսինքն կատարելապէս փչանալուց և առ այժմ ինձ համար բարոյական ակզբունքների տեղն է բանում։ Մի քանի յանցանքները ես չեմ կարող անել ոչ այն սպառնաւով որ այդ յանցանքները չարիք կը համարէի, այլ նրա համար, որ զգւելս կը գար նրանց անճոռնի արտաքին աեւպից։

Ըսդհանրապէս ինձ թւում է, որ ես՝ դուցէ և մի քիչ փչացած, բաց կարգին մարդ եմ կամ աւելի ճիշտ տառծ առ այժմ՝ օդի մէջ կախ ընկած, ոչ մի - ոչ կրօնական, ոչ էլ հասարակական - դաւանանքի վրայ չը ցնուող մարդ եմ։ Ես ոչ մի նպատակ չ'ունեմ; որին կարողանայի նորել կեանքս, և դրանից է, որ այսպէս վատ եմ զգում ինձ։

Վերջացնելով մի քանի խօսք էլ ասեմ - ընդունակութիւններիս մասին։ Հայրս, հօրաքոյրս, ընկերներս, մասամբ էլ նոյնպէս և կողմնակի մարդիկ ինձ համարեա - չը տեսնած ընդունակութիւնների տեր են համարում։ Ես ինքս խոսովանուում եմ, որ իմ խելքով զուրկ չէ փայլից։ Բայց «l'improductivité slave»-ը ի գերեւ չի հանելու ինձ վրայ գրգռող բոլոր յոյսերը։ Ի նկատի առնելով այն բոլորը, որ ես արել եմ մինչև այժմ կամ, աւելի ճիշտ ասած, որ ոչինչ չեմ արել ոչ միայն ուրիշների, այլ և ինձ համար, ես առիսած եմ ենթադրել, որ հենց այլպէս էլ կը լինի ապազայում։

Իսկ այդ զիտակցութիւնը աւելի ցաւ է պատճառում ինձ քանի թւում է առաջին անգամից։ Իր հեղնութիւնս, ինքս իմ մասին մասածելիս, գառն հեղնութիւն է լինում։ Այն հողի մէջ, որից Աստւած ստեղծել է Պոշտակիներին, մի տեսակ անպազութեան խօսնուրդ կայ, որովհետեւ նրա վրայ ամեն բան շատ շուտով ու շատ փարթամ կերպով է ծլում և ոչ մի բան պտուղ չի տալիս։ Եթէ ես այլպէս անպատող տեղովս խոկապէս հանճարաւոր ընդունակութիւններ ունենայի, հետաքրքրական օրինակ կը լինէի նոր տեսակ հանճարի, — անպարտվէլ հանճարի այնպէս, ինչպէս որ կան անպարտվէլ մինիստրներ։

Այդ «անպարտվէլ հանճար» սահմանաբանութիւնը ինձ ճիշտ

է թւում։ Հարկաւոր կը լինի արտօնութիւն վերցնել այդ գիւտի համար։ Ի հարկէ. չէ որ բացի ինձնից շատերը, անշուշտ շատերը կը կրեն այդ մականունը։ Ինձպէսների թիւը լեզէոն է։ »L'improductirité slave»-ը կարող է մնալ ինքնրատինքեան, անսորտվէլ հանճարն էլ ինքնըստինքեան, — այդ մեր գուտ լեհական պառղն է։ Դարձեալ կրկնում եմ, — ինձպէսների թիւը լեզեան է։ Ես չը գիտեմ աշխարհիս երեսին բացի մեր երկրից մի ուրիշ անկիւն, ուր այնքան փայլուն լնդունակութիւններ գուր կորչելիս լինեն, ուր մինչեւ անդամ՝ արդինք տևողներ քիչ, այնքան անսանելի քիչ արդիւնք տալիս լինեն Աստծուց իրանց սսացած շնորհների համեմատութեամբ, որքան որ մեզնում են կորչում ու որքան քիչ արդինք որ մեր երկրումն են տալիս։

Հառմ, Բաբուկինո վաղոց, 14 լունւարի:

Հօրաքոյրս կրկին նամակ է գրել, սաստիկ ինսդրում—պահանջում է, որ շուտ դնամ։ Գալիս եմ, սիրելիս, գալիս, և Աստծուն է յախնի՝ այդ միմիայն քո սիրուն եմ անում, թէ չէ ես աւելի լաւ կը համարէի այստեղ մնալ։ Հայրս տկար է, վերջին ժամանակներս մարմնի ձախ կողմը սկսել է թուլանալ։ Ես շատ ինդրեցի, բժիշկ հրաւիրեց, բայց հաւատացած եմ, որ բժշկի գրած դեղը կը գնի պահարանը, կը կողպի՝ ինչպէս միշտ արել է։ Մի օր նա բաց արեց պահարանը և, ցոյց տալով հարի բաւոր շիշեր, սրւակներ ու տուփեր, սասց ինձ։ — «Այս բոլորը որ առողջ մարդ ուաէր ու խմել՝ չէր զիմանալ, ուր մնաց՝ հիւանդը»։ Մինչեւ այժմ բժշկութեան վրայ այդպիսի հայեացք ունենալը վաստ հետևանքի չի հասցրել հօրս, բայց ապագայի համար սիրտներս անհանդիսու է լինում։

Միւս պատճառը, որ ես չեմ ուզում զնալ, հօրաքրոջս գիտումներն են։ Շատ բնական է, որ նա ուզում է ինձ պատիել։ Չը գիտեմ՝ արդեօք ինկատի ունի որ և է հարսնացուի (Աստած տայ, ոչ ոքի ինկատի չ'ունենայ), բայց յարգելի պառաւը իւր գիտաւորութիւնները չի ծածկում։ «Որ քո նման վեսացուի համար, — զրում է նա, — իսկոյն պատերազմ՝ կը ծագի կարմիր ու սպիտակ փարփերի մէջ, այդ հեշտ է գուշակել»։ Խաւ։ Բայց ես շատ եմ չար-

չարւած և չեմ ուզում ոչ մի պատճառ գտնալ, մանաւանդ չեմ ուզում ՀԵՆՐԻԿ ՎԻ-ի նման՝ վարդերի պատերազմը վերջացնել լսակւելով։ Միւս կողմից (այդ ի հարկէ չեմ կարող ասել հօրաքրոջս, բայց ինքս ի՛մ առաջ կը բացւեմ)՝ ես չեմ սիրում լեհուհիներին։ Ես երեսուն ու հինգ տարեկան եմ, ես էլ՝ ուրիշ բոլոր շատ ապրած մարդկանց պէս զանազան սիրացին արկածներ եմ ունեցել, լեհուհիների էլ եմ ուստ եկել և այդ բոլոր արկածներն ու ընդհարութները ինձ վրայ այն տպաւորութիւնն են թողել, որ լեհուհիները ամենաանյարմար, ամենասասարիկ չարչարող կանացն են աշխարհում։ Զը զիտեմ՝ ընդհանրապէս առած լեհուհիները ֆրանսուհիներից ու գերմանուհիներից աւելի բարոցական են թէ չէ, բայց զիտեմ որ նրանցից շատ աւելի պաթետիք են։ Մի տեսակ ցուրտ եմ զգում երբ որ այդ բանի մասին մտածում եմ։ Ինձ հահասկանալի է էլեզիան՝ փշրւած գաւաթի առիթով, երբ մարդ առաջին անգամ տեսնում է գաւաթի՝ գետնին ցիր ու ցան ընկած՝ բեկորները, բայց կարդալ այդ էլեզիան միատեսակ յուզմունքով մի քանի անգամ կոտրուած գաւաթի վրաց, — այդ, նման է օպերետի ի՞նչ եմ ասում, շատ գորեկան բան է «կարեկցող ունկնդրի» գերը, որ քաղաքավարութիւնից ստիպւած լուրջ բանի տեղ պէտք է զնի այդ բոլորը։ Այ, տարօրինակ, Փանոսասարիք կանացք՝ կրակու գլուխներով ու ձկան տեմպերամենոսով։ Նրանցում չը կաչ ոչ միայն ուրախութիւն, այլ և պարզութիւն։ Նրանք աւելի հետաքրքրում են զգացմունքի ձևով և քի։ Են ուշք գարձնում ներքին բովանդակութեան վրայ։ Այդ պատճառով մարդ երբէք չի կարող իւր գործը ինչպէս պէտքն է առաջ տանել լեհուհու հետ։ Ֆրանսուհու, իտալուհու հետ բան բռնելիս, եթէ մարդ սկզբի յասածագրութիւնները տրամաբանօրէն կազմի, միշտ կարող է սպասել իւր «ergo»-ին (ուրիմն)։ Իսկ լիհուհու հետ՝ երբէք։ Մէկը, չը զիտեմ ով, ասել է, թէ տղամարդը սխալւելիս կ'ասի՝ երկու անդամ երկուաը կ'անի հինգ, և սխալը հեշտութեամբ կարելի է բռնել։ Իսկ կինը սխալւելիս կը սկսի պնդել, թէ երկու անդամ երկու կ'անի լամգ, և այն ժամանակ երկինք էլ թռչես բան չես կարող անել։ Ահա այլպիսով, ամենից առաջ՝ լեհուհիների տրամաբանութեամբ կարող է զուրս գալ, որ երկու անդամ երկուաը չորս չէ, այլ լամգ, սէր, ատելու-

թիւն, կատու, արտատուք, սպարտականութիւններ, ձնձղուկ, արհամարհանք, —ոչինչ չի կարելի ոչ նախատեսել, ոչ հաշւել, ոչ էլ կարելի է նախազգուշութեամբ մի որ և է միջոց ձեռք առներ Գուցէ այդ թակարդների շնորհիւ լեհուհիների առաքինութիւնը աւելի է ապահոված քան ուրիշ կանանցը, թէկուզ այն պատճառով որ յարձակում գործողները սասափիկ տաղակութիւն են զգում: Բայց մի բան, որ ես շատ լաւ եմ նկատել և շեմ կարող նրանց ներել, այդ այն է, որ նրանց թակարդները, պառնէշները, որոգայթները, քաջասիրտ ինքնապաշտապանութիւնը, —բոլորն ել գործ են դնուում ոչ այնքան թշնամիներին շուտով յետ մղելու, որքան՝ բուռն յուզմունքներ ստանալու համար:

Մի անգամ ես խօսում էի այդ բանի մասին, ի հարկէ աշխատելով որքան կարելի է հարը (ՊԱԼՈՎԱ) ոսկեզօծել, մի շատ սրամիս լեհուհու հետ, որ սակայն գուտ լեհուհի չէր, այլ կիսով չափ (նրա հայրը խոպալացի էր): Նա լսեց իմ ասածն ու պատասխանեց.

—Այդ բանում գուք այն տեսակէտիցն էք նայում, որից նայում է աղւէսը աղաւնէտան վրայ: Ձեզ գուր չի գալիս, որ աղաւնիները շատ բարձր են ապրում և որ նրանց թեւերը հաւերի թեւերից ուժեղ են: Ձեր բոլոր ասածները կարելի է մեխնել յօգուտ լեհուհիների:

—Ի՞նչպէս,

—Որքան որ լեհուհին վատ է իրեւ ուրիշի կին, այնքան նա կարող է ցանկալի լինել իրեւ ուժիական կին:

Ինձ, ինչպէս ասում են, նեղը զցեց և ես չը կարողացայ իսկոյն պատասխան դանել նրա ասածին: Գուցէ և ճիշտ է, որ ես այն տեսակէտիցն եմ նայում: Ինչ տեսակէտից որ աղւէսն է նայում աղաւնէտան վրայ: Անկատածելի է և այն, որ, եթէ ես լնդհանրապէս՝ ստիպւած լինէի պսակւել և մասնաւորապէս՝ լեհուհու հետ պսակւել, այդ լեհուհուն կը փնտոէի ոչ միայն բարձր տեղում աղբող աղաւնիների մէջ, այլ և միմիայն սպիտակ աղաւնիների մէջ:

Բայց ես կարող եմ ինձ համեմատել ձկան հետ, որ այն հարցերին, թէ ինչ առուազ է ուզում իրան եփեն, պատասխանում է, թէ ամենից առաջ՝ սկի չի ուզում եփւած լինի: Այսաեղ ես նորից սկսում եմ իմ մեղագրանքները ձեզ գէմ, սիրելի հայրենակցուհի-

ներս: Ընդհանրապէս՝ դուք աւելի սիրոյ զրաման էք սիրում քան նոյն խկ սէրը: Զեզնից ամեն մէկը մի թագուհի է ստեղծւած, և դուք զրանով սարսափելի տարբերում էք ուրիշ կանանցից: Զեզնից իւրաքանչիւրը կարծում է, թէ հէնց միմիայն նրանով, որ թոյլ է տալիս իրան սիրել, ահազին բարերարութիւն է անում: ձեզնից ոչ մէկը չի համաձայնիլ միայն լրացուցիչ մասն լինել ազամսրու կեանքի, որ մենք գոյութիւն ունենք ձեզ համար, և ոչ թէ դուք՝ մեզ համար: Վերջապէս՝ դուք աւելի ձեր երեխաներին էք սիրում քան ձեր մարդուն: Զեր մարդու վիճակը՝ արբանեակի վիճակ է: Ես շատ անդամ եմ՝ այդ բանը զիսել - դուք այբակէս էք ամեն տեղ. դուք միայն հազարից մէկ էք փայլում՝ աւազի մէջ փայլող գոհարի պէս: Ոչ, թագուհիներս, թոյլ ու էք ինձ հեռւից գլուխ տալ ձեզ:

Մի անգամ ընդ միշտ երկրորդական նշանակութիւն ունեցող բան դարձնել իւր բոլոր նպատակները, բոլոր խէջաները, ամեն օր խնկի նման վառւել կնոջ սեղանի վրայ՝ այն էլ սեփական կնոջ,— չէ՛, mesdames, այդ մի փոքր քիչ է մարդու համար: Ասենք՝ իմ ինքնաճանաշութիւնս խկոյն ինձ հարց է տալիս, «խկ զբանից լաւ ի՞նչ կարող ես անել» ի՞նչ զիտաւորութիւններ, ի՞նչ ծրագիրներ ունիս: Դու որ՝ հէնց խկ և խկ նրան համար ես ստեղծւած, որ ողջակէղ լինեաւ:

Բայց չէ՝ թող կորչի, մարդ որ պասկւեց պէտք է այնպէս փոխի կեանքը, այնքան սովորութիւններից, առանձնայտուկութիւններից, ճաշակներից հրաժարվի, որ դժւար թէ ամենամաքուր, ամենավեհ սէրն էլ կարողանայ վարձառբել այդ բոլորի փոխարէն: Այդ իմ բանս չէ: Ես առանց այն էլ կարգին շարշարւած եմ: Այսունութիւնը՝ կամքի և գէպի կանաչք զզայտ հաւատի այնպիսի մի վիթիսարի արտայացառութիւն է, որ իմ ոյժս չի պատիլ այդ անել: Դարձեալ կրկնույթ եմ, — ես չեմ ուզում եփած լինեմ ոչ մի սոււսով:

Վարշաւա, 21 լունեարի:

Այս առաւօտ հասայ այստեղ, բայց որովհետեւ Վիեննայում՝ իջևանեցի, ճանապարհը ինձ շատ չի նեղացրել: Նաո ուշ է, չղերս

չեն թողնում քնեմ; ուստի սկսում եմ զրել: Քիշ-քիչ սովորում եմ յիշատակարանիս, և այդ սիսում է ինձ զւարձութիւն պատճառել: Մեր տանը ուրախութիւն է այժմ... Ի՞նչ քաղցր էակ է հօրաքոյրա նատ հաւանական է, նրա քունն էլ այժմ չի տանում՝ ուրախութիւնից, իսկ ճաշին ոչինչ չը կարողացաւ ուտել: Պլոշովում նա սովորաբար ամեն օր կուռում է իւր կալածի կառավարիչ պան Խվաստովսկու հետ, որ շատ բարկացոս շետափիչ է, թոյլ չի տալ որ իրան ասեն թէ աչքի վերելք յօնք կայ և ամեն մի խօսքին տասը կը սրասասախանի: Երբ որ կուրել համուռմ է այնուեղ, որ ըստ երեսոյթին նրանք պէտք է մի քանի բոսկից յետոյ կարեն իրարից յարաբերութիւնները, հօրաքոյրա լոռում է և սկսում է ախորժակոյի մինչև անգամ աղահութեադր ուտել: Այսօր նա պէտք է բաւականանար փնտնմալով ծառաների վրայ, որ նրա սիրալ այնքան չը հովացրեց ինչքան պէտքն էր: Չը նայելով դրան՝ նա շատ լաւ տրամադրութեան մէջ էր, և անկարելի է նկարազրել, թէ որ քանի քնքշութիւն կար այն հայեացքների մէջ, որ նա ակնոցի տակից քցում էր ինձ վրայ: Նրա ծանօթների շրջանում ինձ կուսք են անւանում և նա զրանից սասափիկ նեղանում է:

Կասկած չը կայ. իմ ահս ու ենթագրութիւններս արդարացն: Ոչ միայն մասդրութիւն կայ, այլ մինչև անգամ հարսնացուի տեղ էլ է արած: Հօրաքոյրա ճաշից յետոյ սովորութիւն ունի մեծ-մեծ քայլերով քայլել մի անկիւնից միւսը և մոռածել՝ ինքն իրան խօսելով: Եւ ացբախով, չը նայելով այն խորհրդաւորութեանը, որով նա շը ջապառում է իրան, ես լսեցի հետեւեալ մենախօսութիւնը.

— Երիտասարդ, զեղեցիկ, հարուստ, հանձարեղ... յիշար կը լինի, եթէ խկոյն չը սիրահարեւ:

Վաղը զնում ենք վաօնդրէքի (ριόπε-νίόպε), որ երիտասարդները սարքում են ի պատիւ տիկինների: Խնջոյքը շատ շքեղ կը լինի:

Վարշաւա, 25 լունւարի:

Ես յաճախ ձանձրանում եմ պարահանդէսներում իբրև «homosapiens», տանել չեմ կարողանում նրանց իրեւ փեսացու, որ ապագայում պէտք է ամուսին լինեմ; բայց երբեմն սիրում եմ նրանց

իրմւ արտիստ,—ի հարկէ անպորտվէլ արտիստ: Խնչ գեղեցիկ է, օրինակ, լայն, պայծառ լուսաւորւած, ծաղիկներով զարդարած սանդուղքը, որով վերև են բարձրանում պարահանդէսի շորեր հագած կանաչք: Նրանք բոլորը այդ ժամանակ շատ բարձրահաստի են երեւում ինձ, իսկ երբ ես նրանց նացում եմ ներքեից ու տեսնում եմ, թէ ինչպէս նրանք յետեներից քաշ են տալիս շէցվները, միաք են գալիս Յակոբի երազում տեսած՝ հրեշտակները: Ես սիրում եմ այդ շարժումը, լոյսը, ծաղիկները, այդ նուրբ կտորները, որոնք նոսր մշուշի նման պատում են ջահէլ օրիորդների մարմնների: Իսկ այդ վզերը, լսնջերն ու ուսերը... որոնք թիկնոցներից ազատւելով կարծես սառչում պնդանում են օդի մէջ ու մարմարի պնդութիւն են ստանում: Հոտառութիւնս էլ մեծ գւարճութիւն է ստանում: Սիրահար եմ՝ լաւ անուշահոտութիւնների:

Խնջոյքը շատ յաջող է: Արդարութիւնը պահանջում է ասել, որ Ստաշեսկին ացպիսի բաներ սարքելու շնորհք ունի: Ես հօրաքրոջս հետ եկայ, բայց սրահում աչքիցս կորցրեցի նրան, որովհետեւ Ստաշեսկին վազէվազ իջաւ ներքեւ նրան սանդուղքովը տանելու համար:

Հօրաքրոջս հազին մի տեսակ երկար թիկնոց է կզաքիսի մորթուց, որ նա միշտ հագնում է այդ տեսակ խնջոյքների զնալիս: Դահլիճը մանելով, ես կանգ առաջ զրան մօտ մի քիչ չորս բոլորքս աչք ածելու համար: Մարդ միշտ մի տեսակ օտարութի տպաւորութիւն է զգում, երբ որ երկարառ բացակայութիւնից յետոյ նորից իւր հայրենակիցների մէջ է լնենում: Մարդ այն ժամանակ կատարելապէս զգում է որ զրանք իրան աւելի մօտ մարդիկ են քան բոլոր նրանք, որոնց հետ ուրիշ տեղերում պատահէլ է, բայց այնուամենանիւ ժամանակով մարդ զննում է նրանց և եզրակացութիւններ է անում օտարի նման: Կանաչք առանձնապէս գրաւեցին իմ ուշադրութիւնը:

Այսպէս թէ այնպէս, մեր հասարակութիւնը փայլուն հասարակութիւն է: Գեղեցիկ գէմքեր ել են պատահում, ազեղներ ել բայց բոլորի վրայ էլ հին և նուրբ քաղաքակրթութեան զրոշմ է երեւում: Կանանց վզերն ու ուսերը, մինչև անզամ մասղաշ, գեռ չը կազմակերպւած վզերն ու ուսերը Սերի ձենասպակի են յիշեցնում: Գծերը

գողարիկ են, զգացում՝ է գեղարւեսասական կատարելութիւն։ Ինչ ոսներ տեսայ, ինչ ձեռներ, ինչ զլուխներ՝ ճիշտ որ այստեղ եւրոպացի չեն ձեւանում, այստեղ հենց նւրովա է։

Այդպէս կանցնած մնացի մօռ քաւորդ ժամ, մուածելով նոյնապէս և այն բանի մասին, թէ տեսնես այդ սիրուն զլուխներից, այդ լանջերից որն է է ինձ համար ընորել հօրաքոյրս։ Այդ ժամանակ ինձ մօտեցան Սնեատինսկիները։ Մարդուն մի քանի ամիս առաջ տեսել էի Հռոմում։ Կնոջ հետ էլ առաջուց ծանօթ էի։ Ես սիրում եմ նրան, նա վերին աստիճանի համակրելի դէմք ունի։ Նա պատկանում է այն հազւաղիւտ լեհուհիների թւին, որոնք չեն մաշում իրանց մարդկանց կեանքը, այլ նւիրում են նրանց իրանց կեանքը։ Մի քիչ ժամանակից յետոց մեր մէջ բուսաւ մի ջայէլ օրիորդ, բարեեց տիկին Սնեատինսկացին ու մեկնեց ինձ սպիտակ ձեռնոցի մէջ ամփոփւած ձեռքք։

—Զես Ճամանաւում ինձ, Լէօն։

Այդ հարցը ինձ մի քիչ շփոթեցրեց։ Առաջին բոպէին և ը ճամանաւեցի հետո խօսողին, բայց այնուամենացնիւ, չ'ուզենալով անքաղաքավարի գտնել, սեղմեցի նրա ձեռքը, գլուխ տւեցի, ժըստացի և պատասխանեցի, — «Նշապէս չէ, ինչպէս չէ։ Ճանաշնում եմ ի հարկէ»։ Անշուշտ այդ բոպէին դէմքս շատ յիշար արտայայտութիւն էր ստացել, որովհետեւ պանի Սնեատինսկան ծիծաղեց ու առաց։

—Եկէք խոստովանեցէք, չը ճամանաւոյիք չէ. դիտէք ով է, — Անելիս Պ.։

Անելիկան, իմ կուզի՞նս։ Զարմանալի չէ, որ ես նրան ը ճանաչեցի։ Ես նրան տեսել եմ սրանից տասը, տասնըմէկ տարի առաջ երբ նա զեռ ծնկահան շորեր էր հագնում։ Միտքս է, Պրշովունի էնք այն ժամանակ, պարտէզում—վարդաղոյն գուլպամեր էին հազին և մոծակիները սասարի՛ կծոռում էին նրան, որի պատճառով նա քաւակի նման ոտները գետնովն էր տալիս։ Ինչպէս կարող էի ես գլխի ընկնել, որ այդ մանուշակազարդ լանջը, այդ սպիտակ ուսերը, այդ թուխ աչքերը, այդ շքնաղ դէմքը, — մի խօսքով այդ գիթթազարդ օրինորդը և այն բարակ ոտներով ագսաւիլը, — միհնոյնն են։ Ո՛, ի՞նչ գեղեցիկ է։ Ինչ հիմանալի թիթեռ է զուրս եկել այն բոժոժից։ Ես կրկին և այս անգամ աւելի անկեղծութեամբ մեկնեցի

Նրան ձեռքս: Յետոյ Սնեատինսկիները հեռացան, իսկ Անելկան ասացինձ, որ նրան ուղարկել էին իմ յետեից իւր մայրն ու հօրաքոյրս: Ես թես առաջարկեցի նրան և մենք միասին գնացինք դէսլի դահլիճի լորքը:

Չեռաց ամեն բան պարզեց ինձ համար: Ակներեւ է, հօրաքոյրս Անելկացին ի նկատի ունի: Այս էր ուրեմն զազանիքը, այ անսպասելի բան: Հօրաքոյրս միշտ շատ սիրել է Անելկացին և շարունակ տանջել է սիրտը պանի Պ.-ի տնտեսական հոգսերով: Ինձ միայն այն էր զարմացնում որ նրանք հօրաքրոջս տանը չեին եղել. բայց ես չեի ուզում՝ մտածել այդ հարցը վճռելու համար և աւելի լաւ համարեցի զննել Անելկացին, որ՝ հասկանալի է սկսեց ինձ աւելի հետաքրքրեցնել քան կը հետաքրքրեցնէր առաջին պատահած օրիորդը: Ճանապարհին ես բաւական ժամանակ գտայ թէ խօսակցութեան համար, թէ հարցաքննութեան. մենք գնում էինք դահլիճի միւս ծայրը, իսկ բազմութիւնը քանի զնում աւելի ու աւելի խտանում էր: Վերջին մոզան հարկադրում է հազնել միջակ երկայնութեամբ մինչև արմոնքը չը հասնող ձեռնոցներ, ուստի ես նկատեցի նախ և առաջ, որ Անելկացի կուռը որ յենուում էր իմիս վրաց, թուխ գոյն ունի գուցէ չափից զուրս առաստ աղւամազից: Սակայն Անելկան թուխ չէ, թէեւ առաջին անգամից թուխի տպաւորութիւն է գործում: Նրա մազերը բրոնզագոյնին են տալիս: Աչքերը բաց գոյն ունին, բաց նոյնպէս սե են թուում չափից զուրս երկայն թերթերունքների շնորհիւ: Սակայն յօնքերը բոլորովին սե են և շատ զեղեցիկ: Այդ նեղ-ճակատաւոր փոքրիկ գլխի բնորոշ յատկութիւնն է— մազերի, յօնքերի, թերթերունքների ու աղւամազի չափից զուրս առաստութիւնը, աղւամազի՝ որ թշերի կողքերում մետաքսի նման նուրբ է զառնում և բոլորովին բաց գոյն է ստանում: Այդ բոլորը միասին առած՝ ժամանակով կարող է նրա զեղեցկութեանը վնասել, բայց ալժմցոց է տալիս միայն նրա կազմւածքի կենսունակութիւնն ու ամրութիւնը և այդ աղջկանը գարձնում է ոչ թէ սառը տիկնիկ (եցելա), այլ ջերմ, կայտառ, վերին աստիճանի գրաւիչ կին:

Խոստովանուում եմ որ թէեւ իմ ջղերս երես առած են և չեն խաղալ ամեն մի չնչին պատճառից, սակայն շատ լաւ են նրա հրապոյրները: Այդ իմ ախաս է: Հօրաքոյրս,—որ եթէ Դարւինի անունը լսել

է, նրան ի հարկէ փուչ մարդ է համարում, — ակամայ վարւում է Դարւինի բնական ընտրողութեան (естественный подборъ) թէօրիայի համաձայն։ Այս Այդ իմ տիպս է։ Այս անդամ կարթիցը լաւ խայծ են կախ տւել։

Մի տեսակ էլեքտրական հոսանքներ սկսեցին անցնել նրա կռնից իմա։ Բացի այդ՝ նկատեցի, որ ես էլ եմ նրա վրայ լաւ տպաւորութիւն գործում, իսկ այդ միշտ աշխոյժ է ներշնչում մարդու Հարցաքննութիւնը, որին ես նրան ենթարկեցի իրրե արտիստ, նոյնպէս լաւ հետեանքներ տւեց։

Կամ զէմքեր, որոնք կարծես փոխադրութիւն լինեն երաժշտութիւնից կամ բանաստեղծութիւնից մարդկացին դիմագծերի։ Այդպէս է և Անելկացի զէմքը։ Նրա զէմքում չը կայ գրեհկանութիւն։ Ազնւատոհմ ընտանիքների օրիորդներին դաստիարակութիւնը համեստութիւն է պատուաստում այնպէս, ինչպէս երեխաներին ծաղիկ են պատուաստում։ Այդպէս Անելկացի երեսին էլ կայ այդ արտայացութիւնը, կայ մի տեսակ անմեղութիւն։ Տակից երեւում է տաք տեմպերամենու։ Ի՞նչ զուգակցութիւն է։ Միևնույնն է թէ մէկն ասէր — անմեղ տստանա։

Ենթադրում եմ, սակայն, որ Անելկան, չը նայելով իւր անմեղութեանը, կարող է մի քիչ կոկետ լինել. ձեռաց նկատեցի, որ նա շատ լաւ հասկանում է իւր գրաւչութեան ոյժը։ Օրինակ՝ գիտենալով, որ հրաշալի թերթերունքներ ունի, նա շարունակ տեղի-անտեղի քաշ է գցում թերթերունքները։ Նոյնպէս կարողանում է նա շատ գրղտրիկ կերպով բարձրացնել զլուխը և նայել խօսակցի վրայ։ Խօսակցութեան սկզբում նա մի քիչ արւեստական կերպով էր իրան պահում, համարձակ չէր, բայց շուտով երկուս էլ մեզ այնպէս սկսեցինք զգալ, կարծես թէ մեր վերջին տեսակցութիւնից յետոյ սկիչինք բաժանել իրարից։

Հօրաքոյրս աննմանն է իւր մոքամոլորութեամբ, բայց ես չէի ուզենալ նրա հետ մասնակցել որ և է դաւադրութեան։ Հէնց որ. ես ու Անելկան մօտեցանք մերոնց և ես բարևեցի Անելկացի մօր հետ ու մի քանի խօսք խօսեցի, հօրաքոյրս նկատեց, որ աշխուժացել եմ, աչքերը իսկոն փայլեցին, յետոյ ուսերը վեր քաշեց ու դառնալով Անելկացի մօրը բարձրածայն ասաց։

— Ինչ սազում են մանուշակները։ Հըմ։ Շատ յաջող միտք էր նրան առաջին տնգում պարահանդէսում ցոյց տալը։

Անելիացի մացրը շփոթւեց, Անելիան նոյնպէս, իսկ ես հասկացաց թէ ինչու նրանք հօրաքրոջս տանը չեին իծել։ Ակներեւ է, պանի Պ.-ի ծրագիրն է եղել այդ։ Երևի նա վաղուց համաձայնութիւն է կացացրել հօրաքրոջս հետ։ Ես ենթադրում եմ, որ նրանք գուցե Անելիային լիովին հաղորդակից չեին արել իրանց գաղտնիքին, բայց նա, շնորհիւ այդպիսի հանգամանքներում միշտ արտազայտող օրիորդական սրամութեան, դիմի ընկառ թէ բանն ինչումն է։

Ընդհանուր շփոթութեանը վերջ տալու համար, ես դիմեցի նրան ու ասացի։

— Առաջուց ասում եմ, որ վատ եմ պարում, բայց քեզ շարունակ կը խլեն ինձանից, հրաւիրելով պարելու, ուստի խոստացիր ինձ հետ պարել մի վալ։

Անելիան ի պատասխան առաջարկեց ինձ իւր տետրը և վճռական կերպով ասաց։

— Գրիր ինչ որ ուզում ես։

Խոստովանում եմ, ես չեմ սիրում մաննըք էնի գեր կատարել, որին թելով քաշելով շարժում են. չեմ սիրում, որ ինձ հրեն այս կամ այն կօդմը։ Աւսովի, ուզելով մի անգամից ներգործական դեր գրաւել պառաւ տիկինների քաղաքականութեան մէջ, առայ տետրը և դրեցի, — «Հասկացնր, որ մեզ ուզում են պատիել»։

Անելիան որ կարդաց, գէմքը այլայլեց, իսկ յետոյ մի քիչ գունաթափնեց։ Մի բովէաչափ լուս կացաւ, կարծես վախենալով որ ձայնը կտրւի պատուսխանելիս կամ տաստանելով թէ ինչ պատասխան տայ ինձ, վերջապէս բարձրացրեց հրաշալի թերթերունքները ու նայելով ուզիդ իմ աչքերին պատասխանեց։

— Այ՞ս։

Բայց այժմ արդէն նա սկսեց հարց ու փորձի հնթարկել ինձ, ոկիշտ է՝ ոչ խօսքերով, այլ աչքերով։ Ես արդէն վերն ասացի, որ նրա վրայ լաւ տապաւորութիւն եմ զործել և բացի այդ նա շուտով գուշակեց հօրաքրոջս ու իւր մօր ծրագիրները ուրեմն՝ նրա ուշ ու միտքը պէտք է ինձնով գրաւած լինէր։ Եւ այդպէս՝ այդ ժամանակ ես պարզ կարդացի նրա աչքերում։

— Գիտեմ, որ մայս ու մօրաքոյրս<sup>1)</sup> ուղում են, որ մենք իրար ճանաչենք, մտերմանանք, ուրեմն... ուրեմն... դու ինչպէս:

Պատասխանելու փոխարեն ես ձեռքս զցեցի նրա մէջքովը և մի քիչ մօտեցրեցի ինձ: Վաս էին ածում: Միաքս եկան «վարժութեան ժամերը»:

Այդ համբ խոսառվանութիւնը կարող էր յուզել օրիորդին, որին չէին կարող շփոթեցրած չըլինել տեարումը զրած խօսքերս: Բայց ես մասածում էի, —ինչ կը լինի որ, թող մի քիչ էլ յուզւի: Յամենայն դէպս, ես որ՝ ուղածիցս դէնը չեմ գնալ, իսկ թէ նա ո՞ր ասաինան կարող է տարւել այդ ինձ շատ քիչ է հետաքրքրում: Անելկան շատ լաւ է պարում, իսկ այդ վալսը նա պարում էր այնպէս ինչպէս պէտք է ամեն մի կին պարի վալսը, այսինքն մի քիչ ինքնանուացութեամբ անձնատուը լինելով իրա կաւալերին: Ես նկատեցի, նրա կրծքի մանուշակները տւելի թունդ են տատանւում քան կարելի էր բացատրել վալսի բաւական դանդաղ բաղխումով (տես): Ես հասկացայ, որ նրա մէջ ինչ որ մի բան է ծագում: Սէրը պարզ ի պարզոյ ֆիզիկական պահանջ է, որ լաւ շրջանի օրիորդները մեծ ջանքով վարում են, բայց որ այնուամենացիւ անընկճելի է: Եւ ահա երբ որ օրիորդին ասում են, —«կարող ես նրան սիրել», շատ անդամ սպասահում է որ օրիորդը օգտուում է այդ թուլաւութիւնից առանց մի բոլիք կորցնելու:

Անելկան անշուշտ սպասում էր, որ ես, ի՞շ առաջին համարձակ հարցից յետով, վերջացնելով վալսը մի կերպ բացատրութիւն կը սկսեմ նրա հետ, բայց եւ դիտմամբ հեռացայ, որպէս զի նո մնայ սպասող զրութեան մէջ:

Ի միջի այլոց՝ ես ուզում էի հեռաց նայել նրա վրայ: Հաս-

<sup>1)</sup> Պլոչովսկու և Անելկալի ազգականութիւնը որոշւած չէ, որտեսեան կուզին անւանում է թէ հօրաքրոջ, մօրաքրոջ, հօրեղբօր, քեռու աղ-Ֆիկը (այդ գէպքում կաթովիկները թէն կարող են իրար հնոտ պսակւել բայց շատ դժւարութեամբ) և թէ պասի ու տատի եղբօր կամ քրոջ աղ-Ֆիկը, թոռը և աղն: Մօրաքրոյ ազատեղ և շատ ուրիշ անդիրում (շարունակութեան մէջ) զործ է զրում իրրե տախրական մակդիր ազգական կնոջ:

տասո որ՝ իմ տիպս է: Այդ տեսակ կանաչք ինձ քաշում են մազնիսի նման: Ախ, երանի նրա տարիքը երեսունի մօտ լիներ և ինձ ուղելիս չը մինէին պսակել նրա վրայ:

Վարչաւա, 30 լունւարի:

Անելիսն ու մայրը անդափոխեցին մեզ մօտ: Երեկ ամբողջ օրը անց կացրի Անելիայի հետ: Նրա հողին աւելի էջեր ունի քան առհասարակ ունենում են նրա հասակի օրիորդները: Այդ էջերից շատերը կը զրոտի ապագան, — աեղ շատ կաց լաւ բաներ զրի անցնելու համար: Նա զգում ու հասկանում է ամեն բան, իսկ ականջ է դնում աննման կերպով, մի տեսակ կենարոնանալով ու լացն բաց անելով իւր խելօք աշքերը: Այն կինը, որ ականջ զնել զիտի, բացի ուրիշ միջոցներից մի աւելի միջոց էլ ունի զուր գալու, — այդ շոյում է աղամարդու ինքնասիրութիւնը: Գիտէ արդեօք այդ բանը Անելիսն, թէ նրա կանացի յաջողակ բնազդումն է նրան ազդակէս անել տուղը: Գուցէ և կարող է այն էլ լինել որ այնքան բան է լսել իմ մասին հօրաքրոջիցս, որ ի՞ր իւրաքանչիւր խօսքը պատգամի տեղ է լնդունում:

Ասենք՝ մասամբ էլ կոկետութիւն է անում: Այսօր երբ ես հարցրեցի, թէ նրա սիրուը ինչ է ուզում ամենից աւելի, նա պատասխանեց, — «Հառմը տեմնել» և քաշ գցեց իւր վնջաւոր կոպերը աշքերի վրայ և այդ բոսկին անքան զեղեցիկ էր որ ասել չի կարելի: Վերին աստիճանի զեղեցիկ է այդ: Նա լաւ տեսնում է, որ ինձ զուր է զալիս, և այդ նրան բախտաւորեցնում է: Նրա կոկետութիւնը հիանալի է, — որովհետեւ բղխում է հրձւած սրտից, որ ուզում է զուր զալ մի ուրիշ սրտի, որին ինքը լնորել է: Ինձ համար անկասկածելի է, որ նրա հողին ձգտում է զէպի ինձ ինչպէս որ թիթեսնիկը ձգտում է զէպի բոցը: Խեղճ երեխան օդուում է մեծերի թողարկութիւնից և օդուում է շտապելով, առանց մի բոսկ կորցնելու: Այդ կարելի է ժամ առ ժամ զիտել:

Ես ինքս ինձ իսկապէս պէտք է հարց առաջարկէի, — եթէ որ չես ուզում պսակել, էլ ինչու ես ամեն միջոց զործ զնում, որ այդ աղջկան սիրահարեցնես քեզ վրայ: Բացց ես չեմ ուզում պատասխանել այդ հարցին: Ես ինձ շնառ լաւ ու հանգիստ եմ զգում:

Սակայն իսկն ասած ես ինչ եմ անում՝ որ ևս չեմ աշխատում երեալ ոչ աւելի ցիմար, ոչ էլ աւելի անդուր կամ հակակրելի քան եմ իսկապէս, — էլ աւել ոչինչ:

Անելիան եկաւ այսօր առաւոտեան սուրճ խմելու, հազած մի տեսակ լայն ու շերտ-շերտ նաւասախական բլուզ, որի տակից կարելի էր միայն գուշակել նրա մարմնի գծագրութիւնը, բայց և կարելի էր գժւել այդ գուշակութիւններից: Աչքերը մի քիչ քնաթաթախ էին և նրա մէջ մի տեսակ քնի տաքութիւն էր երեւում: Այնպիսի տպաւորութիւն է գործում ինձ վրայ որ խօսքով արտայացանել չի կարելի:

## 31 Պահապիւ:

Հօրաքոյքս երեկոցի՛ է սարքում Անելիայի համար: Ես այցելութիւններ եմ անում: Անեատինսկիների մօտ էլ եղայ և երկար նստեցի, որովհետեւ ինձ նրանց տանը լաւ եմ զգում: Անեատինսկիները մի բոլի չի լինում որ իրար հետ անհամաձայնութիւն չունենան, բայց ոչ այնպիսի անհամաձայնութիւն ինչպէս ուրիշ շատ ամուսնական զոյգերի մէջ է լինում: Խովորաբար ամուսիններից իւրաքանչիւրը վերարկուն իւր կողմն է քաշում, իսկ սրանց վեճը նրա վրայ է, որ մարդը ուզում է ամբողջ վերարկուն տալ կնոջը, իսկ կինը՝ մարդուն: Ես շատ եմ սիրում նրանց, որովհետեւ միմիայն նրանց տանն եմ համոզւում, որ բախտաւորութիւնը կարող է լինել ոչ թէ միայն գրքերում գրւող, այլ և բոլորովին իրական բան: Բացի այդ՝ նա առ լիւլք ունի, տպաւորուող է Սարագիւարիուսի ջութակի նման և լիովին գիտակցում է իւր բախտաւոր լինելը: Նա ուզում է բախտաւոր լինել և բախտաւոր է: Նախանձում եմ նրան այդ բանում: Ինձ միշտ համութիւն է պատճառում նրա հետ խօսելը: Ինձ տւեցին խմելու ժունդ սև սուրճ, — գժւար թէ բացի զրողներից՝ էլ ուրիշ այդ տեսակ սուրճ խմողներ լինեն, — և սկսեցին հարցուվորձ անել, թէ ինչպէս են երեւում աշքիս Վարշաւան ու մերոնք իմ երկարատեւ բացակացութիւնից յետոյ: Հարցումներ եղան նոյնպէս և վերջին ինչոյքի մասին, մանաւանդ պանի Անեատինսկայի կողմից, որովհետեւ նա քիչ ու միշտ հականում է

հօրաքրոջս դիտաւորութիւնները և բացի այդ վիլնացի է, այսինքն այն կողմերից, որուեղից որ Անելզան է, ու լաւ ճանաչում է Անելզային, այնպէս որ շատ ուրախ կը լինի եթէ կարողանայ իւր վարդագոյն պուռուր քիթը խաւոնել այդ գործի մէջ:

Ինչ խօսք, որ ես զզուշութեամբ աշխատում էի չը խօսել անձնաւորութիւնների մասին, բայց մեր հասարակութեան մասին ընդհանրապէս առած՝ շատ խօսեցինք: Ես յայտնեցի իմ կարծիքս այդ հասարակութեան շնորհալիութեան մասին. Սնեատինսկին, որ թէե ինքը շատ անգամ խիստ քննադատում է մեր հասարակութիւնը, բայց միեւնոյն ժամանակը սաստիկ, շովինիստութեան հասցրած չափով սիրում է լսել ամեն տեսակ գովասանքներ այդ հասարակութեան վերաբերմամբ, շատ լաւ որամադրութեան մէջ ընկաւ և խոյն սկսեց ձայն պահել ինձ.

— Նատ ուրախ եմ, — ասաց նա վերջը, — որ այդպիսի բաներ եմ լսում այնպիսի մարդութինչպէս զու, որովհետեւ առաջինը դու զէպք ես ունեցել համեմատելու. ուրիշ հասարակութիւնների հետ, և երկրորդը՝ պինախմետ ես:

— Ինչ ես կարծում, սիրելիս, — պատասխանեցի ես, — այդ ասածիս մէջ էլ պեսսիմիստութիւն չը կամ:

Զեմ՝ հասկանում՝ թէ ինչո՞ւ:

— Այ ինչու: Ամեն մի այդ աստիճան նրբացած կուլուրացի վրայ կարելի է գրել այն, ինչ որ գրում են ապակեղինի կամ ձենապակեղինի արկղների վրայ, — «fragile» (դիւրաբեկ): Քեզ, որ հոգով Աթէնքի զաւակ ես, ինձ, մէկի-միւսի համար լաւ. և հաճելի է ասլրել այդպէս նուրբ ջղերի տէր մարդկանց հետ. բայց եթէ ուղենաս մի բան շնորհ այդ հիմքի վրայ, նախազզուշացնում եմ, գերանները կը թափեն զլսիդ: Կարծում ես, կեանքի այդ նուրբ դիւրամանները չեն յաղթւելու գոյութեան կւեռում ամուր ջղեր, կոպիտ մկանունքներ ու հաստ կաշի ունեցող մարդկանցից:

Սնեատինսկին, որ շատ կայտառ մարդ է, վեր թռաւ տեղիցը, մի քանի անգամ զնաց—եկաւ սենեակի մէջ և յետոյ թռւնդ կերպով յարձակւց ինձ վրայ:

— Այդ միայն մի կողմն է, և նպաստուր կողմը, ինչպէս զու լինք էլ խոստովանում ես: Բայց մի կարծիլ, թէ մեր մէջ բացի

դրանից էլ ոչինչ չը կայ: Դու արտասահմանիցն ես գալիս, սակայն այնպէս ես խօսում, կարծես ամբողջ կեանքդ այստեղ անցկացրած լինեա:

— Ես չեմ իմանում, թէ ինչ կայ ձեր մէջ, բայց գիտեմ այն, որ աշխարհում ոչ մի տեղ հասարակութեան զանազան դասակարգերի կուլտուրացի մէջ այն աստիճանն անհաւասարակշուութիւն չը կայ ինչպէս այստեղ: Մի կողմից ծաղկափթիթ՝ գուցէ և թառամած կուլտուրա, միւս կողմից՝ կատարեալ բարբարոսութիւն ու խաւար:

Սկսեցինք վիճել և արդէն մութն ընկել էր, երբ որ գուրս եկայ նրանց մօտից: Նա ինձ ասաց, որ, եթէ ես նրա մօտ շուտշուտ գնամ, խօսք է տալիս ցոյց տալ ինձ շղթացի միջին օղակը, որ ոչ չափից աւելի է նրբացած, ոչ զիլետանտութեամբ է վարակւած, ոչ էլ խաւարում թաղւած՝ նախնական մարդու նման,—մի խօսքով ցոյց տալ արի մարդիկ, որոնք գործ են անում և գիտեն թէ ինչ են ուզում: Նատ տաք-տաք էինք խօսում, իրար բերնից խօսքը խլում էինք, մանաւանդ որ սուրճից յետոց մի քանի թաս կոնեակ էինք խմել: Ես արդէն դուրս էի եկել, բայց Անեատինսկին դեռ յետեւից գուում էր սանդուղքի վրացից.

— Քեզպէսներից, ի հարկէ, բան չի դուրս գալ, բայց քո զաւակներից կարող են մարդիկ դուրս գալ. միայն թէ դու կամ, ճիշտ ասած, դուք բոլորդ պէտք է մնանկանաք, ապա թէ ոչ ձեր թոռներն անգամ ոչ մի գործի չեն կպչիլ:

Կարծում եմ սակայն, որ ընդհանրապէս առած իմ ասածս էր ճիշտ: Այս խօսակցութիւնը գրի եմ անցնում խակալէս նրա համար, որ գալուս օրից ի վեր շարունակ մտածում եմ հաւասարակշռութեան այդ բացակայութեան մասին: Անվիճելի փաստ է, որ մեզ նում հասարակական դասակարգերը իրարից բաժանուած են անդունդով, իսկ քանի այդ անդունդը կայ՝ այդ դասակարգերը ոչ մի կերպ չեն կարող միաբանել և ձեռք ձեռքի տւած գործել: Անեատինսկին չի կարող չը համաձայնել, որ մենք բաժանում ենք երկու տեսակ մարդկանց, — չափից աւելի քաղաքակրթւածների և ամենելին չը քաղաքակրթւածների: Գոնէ իմ աշքիս այդպէս է երեսում: Աւրի ճենապակեղին և կուպիտ կաւ, իսկ մէջաեղում՝ ոչինչ Մէկը՝ *fragile* (շատ զիւրաբեկ) է, միւսը՝ Օւիդիոսի ասած «rudis indi-

gestaque moles» (անմշակ և անձեւ զանգւած): Ինչ խօսք՝ որ Սկըի ձեռապակեղէնը վաղ թէ ուշ կը փշրւի, իսկ կաւից՝ ապագան կը կաղապարի ինչ որ սիրան ուզենաց:

## 2 դիտուարի:

**Երեկ մեզ մօտ պարերեկոյթ էր:** Անելկան միանգամացն իւր վրայ էր դարձնում բոլորի ուշադրութիւնը: Նղարշի թէ տիւլի տակից—որաեղից գիտենամ թէ ինչպէս է կոչւում այդ կտորը—նրա ապիտակ ուսերը ծովի փրփուրի մէջից դուրս եկող Վէներացի ուսերի նաման էին երեւում: Վարշաւայում արդէն լուր է տարածւել, թէ ևս ողսակւում եմ Անելկացի վրաց: Ես նկատեցի, որ երեկ նա պարի ժամանակ ամեն մի պտոյս անելիս աչքերը մնն էր ածում յետելցու և ուշքը ցրւած էր լսում իւր հետ պարող կաւալերների զաւզակաբանութիւնները: Խեղձ աղջիկը այն աստիճան չը գիտի ոչինչ ծածկել այնպէս ցոյց է տալիս ամենքին իւր սրտի մէջ եղածը, որ մարդ կոյր պէտք է լինի, որ այդ չը նկատի: Իսկ իմ վերաբերմամբ նա այնքան մեղմ է, այնքան հյու է, այնքան երջանիկ է լինում, երբ որ մօտենում եմ: Ես սկսում եմ նրան շատ սիրել և սկսում եմ թուլանալ: Այ Սնեատինսկիները՝ ի՞նչ երջանիկ են ապրում: Այս առաջին անգամը չէ, որ ինքս ինձ ուզում եմ հարց տալ, —արդեօք ինձնից յիմար է թէ խելօք՝ Սնեատինսկին: Ես եղած կենսական խնդիրներից ոչ մէկը չեմ լուծել, ես ոչինչ եմ, սկեպտիկականութիւնը մաշում է ինձ, ես բախտաւոր չեմ, ինձ յոգնած եմ զգում: Սնեատինսկին ինձնից պակաս գիտութիւն չունի, բացի այդ՝ նա գործով է զբաղւած. նա սիրուն կին ունի, բացց մի կենսական փելիսոփայութիւն ունի, որի վրայ յենուում է նրա բախտաւորութիւնը: Խօսք չի կարող լինել, ես նրանից յիմար եմ: Սնեատինսկու փիլիսոփայութեան բանալին նրա կենսական դաւանանքներն են, դեռ պահկւելուց առաջ նա ասում էր ինձ. «Կայ մի բան, որին ես չեմ մօտենում իմ սկեպտիկականութեամբ, մի բան, որ ես կրիտիկացի չեմ ենթարկում, —իբրև գրականական գործչին ինձ համար դաւանանք է հասարակութիւնը, իբրև մատնաւոր մարդու՝ սիրած կինը»: Ես այն ժամանակ մտածեցի, — չէ, իմ խելքս աւելի համարձակ է, բանի որ չի վախենում այդպիսի զգացմունքներն էլ կրիտիկացի են-

թարկել։ Խսկ այժմ տեսնում եմ, որ այդ համարձակութիւնիցս ոչինչ բան դուրս չի եկել։ Միւս կողմից՝ այնքան հիմնալի է իմ երկարաթերթերունք «փռքրիկ զաւանանքը»։ Բոլորովին թուլանում եմ։ Այն չափից դուրս միտումը, որ զգում եմ դէպի նա, չի կարելի բացատրել միմիայն բնական ընտրողութեան զօրութեամբ։ Ոչ։ Խմ զգացածումն մի աւելի բան կաց, և մինչև անգամ գիտեմ թէ ինչ կայ։ Այդ այն է, որ նա ինձ սիրում է այնպիսի թարմ ու ազնիւ զգացմունքով, որով ինձ ոչ ոք չի սիրիլ։ Օ՛, որքան ասրբեր է այդ «վարժութեան ժամերից», որոնց ժամանակ ես հարւածներ էի տալիս ու պաշտպանում էի հարւածներից։ Սասարիկ գուր եկող ու սասարիկ սիրող կինը, եթէ դիմացաւ, կարող է հաւատացած լինել որ ինքը կը յաղթի։ «Մոլորւած թոչոնը», ինչպէս անւանում է Սլովացին, անսպասմառ յետ կը զառնայ նրա մօտ իբրև դէպի իւր հանգիստը, իբրև՝ իւր անդորրութիւնը, և այնքան աւելի շուտ կը վերադառնայ որքան աւելի միայնակ ու զառն զրութեան մէջ զզաց իրան։ Ոչ մի բան այնքան չի մեզմացնում, ոչ մի բան այնքան չի զրաւում տղամարդու սիրուը որքան այն, որ նա զգում է թէ իրան սիրում են։ Մի քիչ վերև ինչ ասես գրեցի լեհուհիների մասին, բայց եթէ մէկը մնածի, թէ վախենալով, որ ինձ մեզադրեն անհետեղութեան մէջ, ես չեմ անիլ այն, ինչ որ այս բռնէիս աւելի լաւ եմ համարում, - նա սասարիկ կը սիսալիի։

Ասել չեմ կարող, թէ որ աստիճան բաւարարութիւն է տալիս այդ աղջիկը իմ արտիստական ճաշակին։ Պարահանդէսը վերջանալուց յետոց հրաշալի րոպէ էր, երբ որ մենք հիւրերին ճանապարհ զնելուց յետոց սպատիրեցինք թէջ բերել մեծ դահլիճը ու չորսով նատեցինք խմելու։ Ես, ուղենալով տեսնել թէ ինչ են անում դրսեւում, մօտեցաց սպատուհանին ու մի քիչ յետ քաշեցի վարագոյրը։ Արդէն առաւառաւան ժամի ութն էր. սպատուհանի ապակիների միջով յանկարծ ներս թափանցեց արևի լոյսը, որ լամպի լոյսի առաջ այնպէս կապտագոյն երեեց, որ ես զարմացայ։ Բայց աւելի ևս ապշեցի, երբ որ Անելկացին աեայ այդ լուսաւորութեան մէջ։ Աչքիս այնպէս թւաց, կարծես նա կապրի կզզու կապուտակ քարացրի մէջ լինէր։ Ի՞նչ երանդներ (Տօթն) էին խաղում նրա բաց ուսերի վրայ։ Եւ ինչ արած, Ասուած ինձ այնպէս է առեղծել, ես այն աստիճան

ապաւորւող եմ, որ այդ բովէին ես վերջնականապէս թուլացայ և Անելիան գրանով այնպէս ընկճեց իմ սիրով, կարծես թէ այդ բանը նրա արժանաւորութիւնն էր: Երկար ժամանակ և բոլորովին ուրիշ տեսակ քան առաջ ես սեղմում էի նրա ձեռքը բարի դիշեր անելիս, իսկ նա, առանց յետ քաշելու ձեռքը, պատասխանեց:

— Բարի լոյս, բարի դիշեր չե, բարի լոյս:

Սակայն բոլորովին կուրացել եմ ինչ է, թէ օրիորդի ձայնի երաժշտութիւնն ու աչքերն էին ասու մ:

— Սիրում եմ, սիրում:

Ես էլ՝ համարեա թէ:

Հօրսքովս նայելով մեզ վրայ հրճում է խուլ ձայնով ինքն իրան խօսելով: Աչքերումը արտասուք տեսայ:

Գնում ենք Պլոշով:

### Պլոշով, 5 փետրւարի:

**Ա**րդեն երկրորդ օրն է որ զիւզումն ենք: Համալի էր ճանապարհը: Պարզ եղանակ էր ու սաստիկ ցուրտ: Զիւնը սահնակների տակին ճնճուռում էր ու շողշողում գաշտերում: Արեւ մայր մտնելիս այդ ահազին սպիտակ հարթութիւնները բոլորովին մանուշակի գոյն ստացան: Պլոշովի մօս լորիների մէջ բարձրաձայն կոկուալով թռչ կատում էին հարիւրաւոր ազուաւներ: Չմեռը, մեր թունդ ձմեռը ունի սակայն իւր գեղեցկութիւնը: Նրանում մի տեսակ ոյժ ու վեհութիւն կայ և զլսաւորապէս շիտակութիւն կայ: Ինչպէս որ շիտակ բարեկամը առանց այլալլութեան մարդուս երեսին ասում է ձշմարտութիւնը, այնպէս էլ մեր ձմեռը զազում է մարդուս ականջները՝ առանց բան հարցնելու: Բայց դրա փոխարէն նա իւր արիութիւնը ներշշչում է մարդկանց: Մենք բոլորս ուրախ էինք, որ զիւզն ենք գնում: Բացի այդ՝ պառաւ տիկինները ուրախ էին, որ իրանց նւիրական բաղձանքները կատարելու վրայ են, ես ուրախ էի, որովհետեւ ուսս կպած էր կողքիս նստած Անելիայի ուսին, — նա էլ գուցէ նոյն պատճառով երջանիկ էր զգում իրան: Երկու անգամ նա կռանալով պաշեց հօրաքրոջս ձեռքը — այնպէս, սրտի չափազանց ուրախութիւնից: Նրան շատ էր սազում բրդուս բոան ու մորթէ զլսարկը, որի տակից հազիւ էին երեսում նրա թուխ, գեռ գրեթէ մանկական

աչքերն ու ցրտից կարմրատակած թշերը։ Զահէլութիւնը վրայիցը թափում է։

Լաւ է Պլոշովում ու խաղաղ։ Սիրում եմ մանաւանդ հինաւուրց ահագին բուխարիները։ Զօրաքոյրս անտառները աչքի լոյսի պէս է պահում, բայց ցախ չի խնայում, այնպէս որ առաւօտից մինչև երեկոյ բուխարիները վառւում են. կրակը գոգում, ճոճում է ու ուրախ մոքեր է բերում մարդուս վրայ։ Երեկ ճաշից յետոյ ամբողջ ժամանակը նստած էինք կրակի առաջ։ Եատ բան պատմեցի Հռոմի ու այնտեղի հնութիւնների մասին, և ինձ այնպէս երկիրածութեամբ էին ականջ դնում, որ մինչև անզամ ինքս ինձ ծիծաղելի էի երեւում։ Զօրաքոյրս իմ պատմելու ժամանակ աչքերը Անելկայից չի հեռացնում, դիտելով մինչև անզամ մի քիչ խստութեամբ, թէ նրա դէմքը արտայայտում է արդեօք պէտք եղած հրճւանքը։ Սակայն նրա դէմքի արտայացտած հրճւանքը մինչև անզամ չափազանց է։ Երեկ Անելկան ասաց ինձ.

—Մի ուրիշ մարդ կարող էր այնտեղ անց կացնել ամբողջ կեանքը ու չը նկատել քո տեսած հրաշալիքների կէմն անզամ։

Զօրաքոյրս խկոյն վրայ բերեց գողմանատիկական հանգստութեամբ։

—Ես էլ միշտ հենց այդ եմ ասել։

Լաւ է, որ այստեղ ինձ նման մի ուրիշ սկեստիկ չը կայ, թէ չէ նրա ներկայութիւնը ինձ նեղ դրութեան մէջ կը զցէր։

Մի քիչ բացառութիւն է կազմում մեր մէջ Անելկայի մայրը։ Նա այնքան բան է քաշել կեանքումը, այնքան հոգսեր է, ունեցել, որ ուրախութիւնը նրա սրտից ընդ միշտ հեռացել է։ Նա վախենում է ամեն տեսակ ասլազայից և անզիտակցաբար կասկածում է, որ մինչև անզամ յաջողութեան տակ էլ թագնւած է մի որ և է որոգայթ։ Մարդու կենդանութեան ժամանակ շատ անբախտ է եղել, յետոյ հազար ու մի նեղութիւն է քաշել իւր կարողութեան պատճառով, որ բաւական մեծ է, բայց վատ վիճակի մէջ է։ Բացի այդ՝ գլխացաւից սկի աչք չի բաց անում։

Անելկան կարծես այն կանանց կարգին է պատկանում, որոնցից մեզնում աւելի շատ կան՝ քան կարծւում է, և որոնց գլուխը երբէք չի ցաւիլ տնտեսական ձախորդութիւնների պատճառով։

Այդ բանի համար շատ եմ հաւանում նրան, որովհետեւ այսպէս

թէ այնպէս՝ այդ ապացոյց է բարձր ձգտումների։ Ասենք՝ այժմ նրա ամեն բանը ինձ զբաւում է։ Խանդաղաստանքը այնպէս արագ է աճում զգայական հակումների հողի վրայ ինչպէս խորը տաք անձրևից յետոց։ Այս առաւօտ սրահում տեսայ աղախնին Անելկայի շորերն ու ոտնամանները տանելիս և—մանաւանդ այդ ոտնամանները—ինձ այն աստիճան յուզեցին կարծես թէ նրանց տէր լինելն ու հագնելը Անելկայի բոլոր առաքինութիւնների թագն ու պսակն էր։

Ընդհանրապէս մենք, տղամարդիկս, սաստիկ թոյլ ենք։ Զեռքս զբել եմ երակազարկիս վրայ ու դիսում եմ զգաց հոնքներիս այդ տեսդի ընթացքը։ Զարկը շատ արագ է։

#### ՊԼՇՈՎ, 8 կամ 9 փետրվարի։

Հօրաքոյր արդէն սկսէլ է իւր սովորական պատերազմը պան Խւաստովսկու հետ։ Այդ այնպիսի տարօրինակ սովորութիւնն է, որ իսկապէս արժի այդ վէճերից մէկը նկարագրել։ Հօրաքրոջս՝ լեզւակաիւը միանգամայն անհրաժեշտ է հէնց միայն ախորժակը բաց անելու համար, իսկ Խւաստովսկին, որ ի դէպ ասած հիանալի է կառավարում Պլոշովը, բորակից ու ծծումքից բազկացած շեախտիչ է և ոչ ոքի թոյլ չի տալ, որ իւր էշին չոշ ասի, այդ պատճառով նրանց կախւները սաստիկ կատաղութեան են հասնում։ Արդէն սեղանատուն գալու ոկտ նրանք սկսում են մէկ-մէկի վրայ չարադրուշակ հայեացքներ դցել, — առաջին զնդակը սուսպի ժամանակ հօրաքրոյրս է արձակում, օրինակի համար՝ այսպէս սկսելով խօսակցութիւնը.

— Զեմ ցիշում ինչքան ժամանակ է, պան Խւաստովսկի, որ ուզում եմ մի տեղեկութիւն ստանամ աշնանացանքսերի մասին, իսկ դուք կարծես զիտմամբ ինչի մասին ասես խօսում էք բայց դրա մասին մի խօսք էլ է չէք ասում։

— Պանի կոմսուհի, աշունքը լաւ էին ծլում, իսկ այժմ երկու կանգուն ձիւն է նստել, ի՞նչ իմանամ ինչպէս է։ Հօ ես Ատուած չեմ, որ իմանամ։

— Զուր աեղը, պան Խւաստովսկի, Ասածու անունը մի տեք։

— Ես նրա տւած ձիւնի տակը չեմ աշխատում նայել, ուրեմն և նրան չեմ վիրաւորում։

— Որ այդպէս է, ուրեմն ես եմ վիրաւորում։

— Ի հարկէ:

— Անտանելի մարդ էք, սպան Խւասառովսկի:

— ԶԵ, տանելի մարդ եմ, տանելի, որովհետև շատ բան եմ տանում:

Այդ կամ մի ուրիշ դրա նման ձեռվ վէճը տաքանում է: Շատ քիչ կը սպառահի որ ճաշը անց կենաց առանց կծու խօսքերի: Ճաշի վերջին հօրաքոյրս լոռում է ու սկսում է զայրացած ուտել, կարծես ուղելով ոխը կերակուրներից հանել: Խակ որ՝ լաւ ախորժակ ունի: Բայց քանի ուտում է, արամազրութիւնը գալիս է աեղը և հետզհետէ հիանալի է դառնում: Այժմ երբ ես ճաշից յետոյ թեւս տալիս եմ Անելկայի մօրը, հօրաքրոջս սպան Խւասառովսկին է տալիս թեւր և գնում ենք սե սուրճ խմելու բոլորովին հաշտ ու համաձան: Հօրաքոյրս նրանից հարցնում է նրա որդիների մասին, նա էլ համբուրում է հօրաքրոջս ձեռները: Խսկապէս նրանք իրար սիրում ու յարգում են: Պան Խւասառովսկու որդիներին տեսել եմ այն ժամանակ, երբ նրանք դեռ համալսարանումն էին: Այժմ երեխ նրանք կտրին տղերք են, բայց թունդ արմատական:

Անելկան սկզբում մի քիչ վախենում էր ճաշւան պատերազմից: Հասկացրեցի նրան բանի էութիւնը և այժմ, երբ որ վէճը սկսում է, նա երկայն թերթերունքների տակից դադարուկ նայում է ինձ, ժպտում է բերնի ջնակներով և այդ ժամանակ այնպէս կերպարանք է ստանում, որ մարդ ուղում է նրան խժուի: Ոչ մի կին չեմ տեսել կեանքումն, որ այդպիսի կատարեալ ալէբատորէ քունքեր ունենայ ու այդպիսի երակներ քունքերի վրայ:

## 12 Փետրւարի

Յօէ դրսել թէ իմ մէջս խակ և խակ Յւիդիոսի կերպարանափոխութիւններն են կատարեել: Յուրաը նստել է, եղանակը վասացել է, եղիսլուական խաւար է տիրում: Ոչ մի կերպ չեմ կարող այնպէս լաւ նկարագրել, թէ ինչ է կատարուում դրսել, ինչպէս եթէ ասեմ, որ նեխած եղանակ է: Սակայն ինչ արասափելի կլիմա է այստեղի կլիման: Հուռմում, ամենավատ եղանակներին, արեգակը էլի օրը մի տասը անգամ կ'երեխ. խակ այսոեղ ահա երկու օր է այնպէս է, որ քիչ է մնում ցերեկը ճրագ վասենք սենեակներում: Այդ

սև ու ծանր խոնաւութիւնը թափանցում է մարդուս մտքերի մշջ, սև գոյն է տալիս նրանց և միենոյն ժամանակ ձնշում է: Խնձ վրաց հօ սարսափելի է ներգործում: Հօրաքոյրս ու Խւասովվակին այսօր աւելի թունդ էին կռւում քան երբ և իցէ: Խւասովվակին պնդում էր, թէ հօրաքոյրս թոյլ ըլ տալով, որ ծառերին ձեռք տան, վչացնում է անտառները, որովհետեւ հին ծառերը փտում են, իսկ հօրաքոյրս պատասխանում էր, թէ առանց իրան օգնութեան էլ բաւական ծառեր են կարասում մեր անտառներից,—«Ես պառաւում եմ, թող անտառն էլ պառաւի»: Այդ խնձ յիշեցնում է մի շեախտիչի, որ, մեծ կալած ունենալով ամենալաւ հողերում, մշակում էր միայն «մի հրացանի ասպարեզի» չափ տեղ:

Բայց այդ շատ էլ հետաքրքիր բան չէ: Ակամայ սաստիկ տհաճութիւն պառճառեց ինձ Անելկայի մայրը: Այսօր չերմանոցում նա սկսեց ինձ պատմել իսկ է մայրական, բայց անէսթետիկական պարծենկոծութեամբ, թէ ինչորէս ուզեցել է նշան դնել Անելկայի վրաց իմ ծանօթ Կրոմիցին: Խնձ վրաց այդ այնպէս ազդեց ոնց որ մեկը մաստից փուշ հաներ պատառաքաղի ասումով: Այնպէս ինչպէս այն կապուտակ լոյսը գորովս շարժեց դէպի Անելկան, թէև նրա արժանաւորութիւնը չէր, այնպէս էլ Կրոմիցկու մօտ—մօտ անելը սառցը սիրոս դէպի նա, թէև նա մեղք չուներ դրամնում: Կրոմիցկուն, այդ կապիկին, մի քանի տարի է ճանաչում եմ ու սկի չեմ սիրում: Ծագումով նա աւստրիական Սիլեզիայիցն է, որտեղ մի ժամանակ կարծեմ Կրոմիցկիները ահապին աւատական կալւածներ են ունեցել: Հւոմում նա պատմում էր, թէ իրանց տոհմը դեռ ԽՎ-ըդ դարում կոմական տիտղոս է ունեցել, —և հիւրանոյներում Շկոմ Փոն Կրոմիցկին էր գրել տալիս անունը: Եթէ բոված սուրճի երկու հատիկների նման սև ու պապղան փոքրիկ աչքերն ու նոյն գոյնի մազերը չլինէին, նա կը նմանէր ճաշից մնացած պանրի կեղեկից կորած—շինած մարդու, որովհետեւ իսկ որ այդ տեսակ երեսի գոյն ունի: Բայցի այդ՝ նա նման է մեռելի գանգի: Ես դէպի նա միանգամայն Փիզիկական զգւանք էի զգում: Ենիկ, ինչքան այդ բանը աշքեցս զցեց Անելկային: Եատ լաւ գիտեմ, որ նա Կրոմիցկու տեղակ ու նրա գիտաւորութիւնների համար պատասխանատու լինել չի կարող, բայց այնուամենայնիւ այդ բանը իմ աչքիցս նրան սաստիկ զցեց:

Զեմ ի հանում, թէ ինչու նրա մայրը այդպէս երկար ու բարոսի պատճեց ինձ այդ բանի մասին, որովհետեւ եթէ զրանով ուզում էր ինձ շատափեցնել, նպատակին սկի չը հասաւ։ Նա (պանի Պ-ն) շատ մեծ արժանաւորութիւններ ունի, քանի որ կարողացել է զիմանալ հազար ու մի հոգսերի ու գեռ զատիարակել այդպիսի մի աղջիկ, բայց անշնորհք է ու ձանձրալի՝ իւր մշտական գլխացաւով ու մակարոնիզմներով<sup>1)</sup>։

—Խոստովանում եմ—ասաց նա—ես նրա կողմն էի։ Երբեմն ընկնում եմ հոգսերի բեռի տակ, ես այն կնիկներից եմ, որոնք գործերից գլուխ չեն հանում, իսկ եթէ մի քիչ սկսել եմ հասկանուլ, այդ նրանից է, որ երեխայիս են վերաբերել, և այն էլ ինձ այնքան թանկ է նստել այդ, որ ոյժ ու առողջութիւն չի մնացել մշջս։ Կրոմիցկին շատ աչքաբաց տղայ է։ Ահազին գործեր ունի Յղեսասացում և ինչ-որ նաւթի կապալներ ունի ուսպեկուլացիաներ է անում Բաքւում, «պատ սայ-յե» (ես ինչ զիտեմ)։ Բայց նրան երեւի խանգարում է այն, որ այստեղի հապատակ չէ։ Ես էլ մասնում էի, որ եթէ նու պատկեր, պարտքերից կ'ազատեր Անելիկայի կալւածը և միենոյն ժամանակ կ'աշխատեր հայատակութիւնը փոխել այդ կալւածին տէր գաւնալու համար։

—Իսկ Անելիկան, —հարցրեցի անհամբերութեամբ։

—Տեսնում էի, որ Անելիկան շատ էլ չի սիրում նրան, բայց այդ ոչինչ, նա շատ բարի երեխայ է։ Բացի այդ՝ իմ մահիցս յետոյ նա կը մնար առանց իննամսութեան, այնպէս որ...

Էլ հարց ու փորձ չարեցի, որովհետեւ չեմ կարող ասել թէ ինչպէս զայրացնում էր ինձ այդ և թէև հասկանում եմ, որ միմիացն Անելիկայի շնորհիւ է որ պատկը գլուխ չի եկել, բայց էլի վատս է դալիս, որ նա թոյլ է աւել իւր վրայ նայել այդ զարշելի արարածին և մանաւանդ, որ կարողացել է մի վայրկեան իսկ տատանւել։

Ինձ համար այդ՝ ջղերի իննդիր կը լիներ։ Մոռանում եմ սակայն մի բան՝ այն է, որ ամեն մարդու ջղեր իմիս պէս չեն և որ Կրոմիցկին, չը նայած իւր շաքարի թղթի նման երեսին ու մեռելի

<sup>1)</sup> Մակարոնիզմ կը նշանակ՝ խօսակցութիւն կամ զրւածք՝ ազատագույնութիւն մի քանի լեզուներից խառնութել։

զանդի նշանութեանը, կանանց կարծիքով չնորհքով մարդ է համարւում:

Տեսնես ինչ «աֆերաներ» է անում: Մոռացայ հարցնէի թէ հօվարշաւայումը չէ, թէւ շատ հաւանական է որ Վարշաւայումը լինի, որովհետեւ կարծեմ ամեն ձմեռ գալիս է: Գալով նրա այդ գործերին, այսքանը միայն կամեմ, — գուցէ երևելի գործեր են, բայց հաւատալս չի գալիս, որ հաստատ ու անյօղգող հիմք ունենան: Ես սպեկուլեանա չեմ և չեմ կարողանալ ոչ մի բորսայական գործ գլուխ բերել, բայց քիչ ու միշ այդ բաներից գլուխ հանում եմ: Բայցի այդ շատ բան գիտող ու բառական հեշտութեամբ եզրակացութիւններ գուրա բերող մարդ եմ: Ինչ ծածկեմ՝ ևս հաւատ չունեմ մեր շեախտիչների (յե՞ն ազնւական) վրայ, որոնք իրը թէ սպեկուլեացիաների վերաբեր մամբ հանճարեղ մարդիկ են: Վախենում եմ, որ Կրոմիցկու ճարպկութիւնը ժառանգական կամ բնասուր ընդունակութիւն չը լինի, այլ ջղացին ախտ (ներող), որ այդ ուղղութիւնն է ստացել: Շատ եմ տհակել այդ տեսակ օրինակներ: Մէկ էլ տեսար որտեղից որ է գուրս պրծաւ մի շեախտիչ՝ սպեկուլեանա: Երբեմն սպառահում է մինչև անգամ, որ սկզբում կոյը բախտը կարում է ու նա կարճ ժամանակում հարսաւութեան տէր է դառնում... Բայց այս մշկին տեսած չկամ, որ մահից առաջ մնանկացած չը լինի:

Այզպիսի ընդունակութիւններ կամ ժառանգում են կամ ձեռք են բերում սկսած ա—բ—գ—ից: Խւասառվակու սպեկքը գուցէ յաջողութիւն ունենան, որովհետեւ նրանց հայրը սպառահարար ունեցած չունեցածը կորցրել է և նրանք սպառմ են այբ—բէնից: Բայց ով որ սպառաստ կարողութեան տէր լինելով և առանց առեւտրական աւանդութիւնների, առանց մասնագիտական հմտութեան ընկնում է ազգալիք բաների ցետեից—անպատճառ զլիի վրայ կը գայ: Ազնւական գասակարզի մէջ այդ, կրինում եմ, դրամական ներոզ է: Սպեկուլեացիան չի կարող յենել սպառանքների վրաց իսկ թէ որքան սպառանքներ կան այդ ազնւականների սպեկուլեացիաների մէջ— Աստծուն է միայն յայտնի:

Սակայն ցանկանում եմ պան «իոն Կրոմիցկուն» յաջողութիւն:

## 14 Փետրւարի:

Рах! рах! рах! (հաշոռվթիւն, խաղաղութթիւն): Արդէն այն անախործ տպաւորութիւնը անցել է: Բայց ինչպէս ամեն բան զգում, հասկանում է Անելկան: Ուրախ էի ձեւանում, թէեւ սիրոս ուրախ չէր, իմ վարմանքիս մէջ դէպի նա հազիւ մի ամենաչնչին տարբերութեան նշոյլ լինէր, բայց էլի նկատեց, զգաց: Այսօր ալբոմները նայելիս, երբ որ մենք մենակ մնացինք, ինչպէս՝ պէտք է ասած՝ յանձախ ենք մնում, որովհետեւ զիտմամբ մեզ չեն խանգարում, Անելկան սկսեց շփոթել, այլայլել: Խսկոյն հասկացաց, որ ուզում է ինձ մի բան ասել և տատանուում ու վախենում է: Մի բոպէ մաքովս մի ցնորամիտ բան անցաւ,—ինձ թւաց թէ նա ուզում է յացնել, որ սիրում է ինձ: Բայց խսկոյն ցիշեցի, որ լեհունու հետ զործ ունեմ: Ամեն մի քոստ լեհուհի կամ, եթէ ուզում էք, ամեն մի թագուհի, կը մեռնի ու առաջինը չի խոստովանիլ թէ սիրում է: Աղորմութիւն է, եթէ հարցնելուց յետոյ արտասանի՝ այսոց: Խացի այց՝ Անելկան ինձ մոլորութիւնից հանեց, որովհետեւ յանկարծ ալբոմը ծածկեց ու, շփոթութիւնից մի քիչ կմլմալով, հարցրեց.

— Ի՞նչ է պատահել քեզ, Լէօն: Անպատճառ քեզ մի բան պատահել է, չէ:

Սկսեցի նրան հաւատացնել, որ ինձ ոչինչ չի պատահել, սկսեցի ծիծաղել ու հանգստացնել նրան, բայց նա զլուխ թափ տալով շարունակեց:

— Երկու օր է տեսնում եմ, որ քեզ մի բան պատահել է: Գիտեմ, որ քեզպէս մարդու սրտին մի ամենաչնչին բան անդամ կարող է զիազէել... և սկսեցի ինձ ու ինձ մոտածել, հօ ևս առիթ չեմ տւել, հօ այնպիսի մի բան չեմ ասել, բայց...

Այգանը նրա ձայնը մի քիչ դողաց, բայց նա նայեց իմ աչքիս մէջ:

— Ես քեզ ոչ մի վառ բան չեմ արել՝ չե՞:

Մի բոպէ լեզւիս ծայրին պոտում էր՝ «Եթէ մի բանս պակաս է, այն է միայն, որ դու իմա չես, իմ ամենաքաղցր Անելկա», — բայց ահը, ինչպէս ասում է Հոմերը, մազերիցս բոնեց: Ահ ոչ թէ Անելկայից, այլ այն սողնակից, որ կարող էր ներքեւ գալ ու դուռը կող-

պել: Բայց էլի ձեռքը բոնեցի, համբուրեցի ու որքան կարող էի ուրախ ասացի.

—Դու աղնիւ ու քաղցր էակ ես, իսկ ինձ համար զարդ մի անիլ, որովհետեւ ինձ հետ ոչնչից-ոչինչ չի պահառել. բացի այդ՝ դու հիւր ես Պլոշովում և իմ պարտքս է հոգալ, որ դու լաւ զգաս քեզ այստեղ:

Այդուղ նորից համբուրեցի նրա ձեռքը և այն էլ ոչ թէ մի ձեռքը, այլ այդ անգամին երկու ձեռն էլ: Այդ բոլորը զեռ կարելի էր վայնաչարին ազգականական քաղաքավարութեանը վերագրել, — և այնքան ողորմելի է մարդուս բնաւորութիւնը, որ այդ զիտակցութիւնը, այն դանակը, որի յետեին այս դէսքում կարելի էր թագ կենալ, ինձ սիրտ էր տալիս: Այդ զգացմունքը ողորմելի եմ անւանում նրա համար, որ ինձ չի սպանում ոչ մի ուրիշ պատասխանատութիւն, բացի այն որ ինքս իմ առաջ պէտք է պատասխանատու լինեմ, իսկ ինձ հօ չեմ խաբելու: Խակայն զգում եմ, որ մինչեւ անգամ իմ առաջս էլ սպատասխանատու չեմ լինելու, որովհետեւ զգայարանքներս միշտ ինձ տարել են ուր որ կամեցել են, իսկ իմ յարաբերութիւններիս մէջ դէպի Անելկան բոլորովին զգայարանքներիս իշխանութեան տակ եմ գտնուում: Դեռ մինչեւ այժմ բերնումն զգում եմ նրա ձեռքի քաղցր հարաւորութիւնը — և էլ ինչ ասեմ՝ փափազս սահման չունի: Ասզ թէ ուշ ես ինքս կը կողպեմ այն գոնակը, որով այսօր զեռ կարող էի փախչել զաշոր: Բայց իսկապէս կարող էի որ: Այս, եթէ որ մի բան զբանեց ինձ օգնէր:

Այժմ բոլորովին ակներեւ է, որ նա սիրում է ինձ: Ամեն բան ինձ մղում է դէպի նա:

Այսօր ինքս ինձ այս տեսակ հարց աւեցի, — «Եթէ այդ անխուսափելի բան է, էլ ինչո՞ւ ե՞մ այսօր — էզուց քցում»:

Մտածեցի ու այսպիսի պատասխան զտաց, — «Եմ ուզում մի չնչին բան էլ է կորցնել այն յուղմունքներից, այն զողաճարութիւններից, այն տալաւորութիւններից, այն հոգեզմայլութիւնից, որով լիքն են կիսակատար խօսքերը, հարցական հայեացքները, ակնկալութիւնները: Ուզում եմ «ըոմանե»-ս մինչեւ վերջը տանել: Կանանց էի մեղաղբում, թէ զգացմունքի արացայց տութեան ձևերը զգացմունքից բարձր են զատում, իսկ ինչպէս

երեսում է ինձ համար էլ նշանակութիւն ունի, որ այդ ձևերը բոլորը կատարւեն: Ինչ արած՝ մարդս երբ որ հասակն առնում է, այդպիսի բաններն էլ են նրա համար նշանակութիւն ունենում: Նկատած եմ նոցնպէս շատ անգամ, որ մենք, տղամարդիկս, եթէ որոշ աստիճանի նրբութեան են հասած լինում մեր ջղերը,—կանացի բնաւորութիւն ենք ունենում: Ես, բացի այդ, մի քիչ էլ էպիկուրեան եմ զգացմունքների նկատմամբ:

Վերեսում բերած խօսակցութիւնից յետոյ ես ու Անելիան հիանալի արամագրութեան մէջ ընկանք: Երեկոյեան ես օգնում էի նրան թղթից լուսամփոփներ կտրաել, որովհետեւ այդ ժամանակ կարող էի կպչել նրա ձեռներին ու շորերին: Ես դիմամբ խանգարում էի նրան բանելու ժամանակ. Նա իրան երեխայութեան տւեց ու սկսեց երեխացի նման չարութիւններ անել, երբեմն-երբեմն դիմում էր հօրաքրոջս ասելով միակերպ ու արագ ձայնով՝ այնպէս ինչպէս գանդառում են վոքրիկ աղջիկները:

—Մօրաքոյր, Լեօնը ինձ հանդիսու չի թողնու՞:

(Կը շարունակուի)

## ԳԻՏԵՐԱՅԻՆ ԴԻՑՈՒՅԻՆ

Զ. ԲԱԼՈՒԹԻԵՎԱՆԻ

Ահա վեշեց մեղմ զեփիւուր,  
Խջաւ ցողը թարմագին,  
Եւ երկնային բացւեց դռւուր  
Ու յայտնւեցաւ Դիցուհին:

Կա մըսախոհ արձակում է,  
Իր ծառերը թըլսադրյն,  
Յետոյ նոցա սըփըռում է,  
Որ ծածկին ողջ բընութիւն:

Մազերի մլջ շողշողում են  
Ազամանդեայ աստղիկներ,  
Որ Դիցուհուն նըւիրել են  
Մի խումբ սիրող հրէշտակներ:

Կա երբեմըն խոնարհում է  
Իր գըլուխը քընքշալից,  
Այդ ժամանակ գըլորւում է  
Մի-մի առարդ այնուղից:

## ՀԵՅՆԵ-ից

«Du bist, wie eine Blume,  
So hold und schön und rein...»

Դու մի ծաղիկ ես անրիծ,  
Պարկեշտ, ազնիւ ու սիրուն.  
Քեզ նայելիս՝ մի թափսիծ  
Պաշարում է ինձ թագուն:

Ես կ'ուզէի, թանկապին,  
Դընել ձեռքըս քո դըլլսին  
Եւ ազօթել, որ այգովէս  
Միշտ անարաստ պահպանես:

## ԶԳՈՅՑԸ

(Ե Կ Ս Պ Ր Ո Մ Պ Յ Յ)

Զ. ԲԱԼԹԻՊԵՏԱՆԻ

Փառքը — դա մի բարձըր սար է,  
Վեր ելնելը շատ դըժւար է,  
Ասուած չ'անի որ այցթաքես,  
Ել փըրկելը անհընար է:

# ՄԻ ՊՏՈՅՑ ՆԱԽԿԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ

(Զմիւռնիացի և նորա ծովալին ու ցամաքային շրջակայքի անցեալից  
ու ներկայից):

ՑՈՎՀԱՆՆԵՍ ՏԵՐ-ՄԻՐԱԲԵԱՆԻ

(Շաբաթակութիւն <sup>1)</sup>)

ԶՄԻՒՌՆԻԱՅԻՑ ՔԻՌԱ ԿՊ.ՋԵՆ

Ես արդէն զազուց կարօտ էի մի կղզի և կղղիացած կեանք տեսնելու՝  
բառիս բուն նչանակութեամբ, բաց ի հարկէ ևս ալ ևս չի կարող քա-  
դաքակրթութեան ներկաւ զարում, երբ չոգեկառք, չոգեմեղենաւ հեւա-  
զիր աճնափսի արագութեամբ հեշտացնում են հազորդակցութիւնը, Ռդի-  
սեան, Հոմերեան ժամանակների կղղիացած կեանքը տեսնել: Սակայն և  
աճնափս՝ առաջուց քիչ թէ շատ աեղեկութիւններ հաւաքած լինելով սպա-  
սում էի տեսնել այդ առանձնացած վակրերում մի ալ կեանք, շատ բանով  
տարբեր խզմիրցիներինից Աւստի հէնց որ առիթը ներկայացաւ, ես մի  
հակ ուղեկից բարեկամի հետ զարձեալ միրելի ծովն երաւ: Մեղ տանող  
շոգենաւը ուռւսական էր, որ Ալքասանդրիս էր զնում: Հանապարհորդներ  
շատ չկալին, ծովը հանդարաս էր, մենք առանց որ և է աշքի իմկնող մի-  
ջադէպի՝ 8 ժամ էմառ զիշերը կղզին հասանք: Քիոսը զամանւում է Լեսրո-  
սից հարաւ, Խզմիրից 88 հազարամետր հեռաւորութիւն ունի, իսկ իւր  
հանդէպ զանւող թերակղզուց բաժանւած է մի նոր պարանոցով: Ալճակս  
որ ցամաքն երեսում է և առագաստաւոր նաւով մի ժամ հազիւ քաշում:

1) Տե՛ս «ՄուրՃ» 1892 Տ. 1.

Ոչ ես և ոչ ընկերս տաճկակամն անցաթուղթ ունէինք, մինչդեռ տաճկակամն օրէնքով հպատակ ես թէ ոչ քո պետութեամն անցաթզթից զատ ունենալու ես և աեղակամը, եթէ ազ նահանգ ես զնում: Արար մաքսաւորը թէ առաջ խիստ դէմք ցոյց աւեց, տոկան իմանալով որ մենք հիւրանոցն ենք իշնելու և մնալու, թող աւեց: Ազ սրահն ջը իբրև տուգանք աւելացած լուսոց լրիւ առան իմ տաճկահպատակ ուղեկցից, իսկ ի նկատի ունենալով իմ մեղմացուցիչ հանգամանքները՝ ես անհշամ տուղանքով բանը վերջացրի:

Դիշեր ժամանակ ծովափնեակ կատարոն քաղաքը, որ նաև Գլու է անւանուում, մի տուանձին տեսարան չը ներկազայնուում: Մենք շոապեցինք այս կղզու տուննատառաջն և իւր տեսակուում համարեա միակ հիւրանոցը, ուր ամարակին մի քանի ամիսները աշխարհի չորս կողմերից՝ Հնդկաստանից, Ամերիկակից, Եւրոպակից, Աֆրիկելոց զալիս են բաղմաթիւ հարուստ ընտանիքներ ու ամենասներ գննէ ատրին մի անգում սիրելի հայրենիքն ու ծննդառակին տեսնելու և նորան չը մոռանալու: Եւ ահա սեղանի շուրջը միշտ լի է լոխներով, որոնք միմւանց պատուում են իրանց տանտրական ընդարձակ ձեւնարկութեանց հետևանքների մասին: Քիոսցի վաճառականը և առագաստաւոր նաւերը, որոնք նաև այս գարսւմ ամիսներով ճանապարհ են զնում, հռչակաւոր են բոլոր լոխների մէջ: Բաց այս բոլոր լոխներից մինն ամենից շատ գրաւեց իմ ուշըն ու միաքը, — երբ աեղեկացակ նորակենագրութեանը: Մի խօսքով նորա ամրողջ կութիւնն մասին զաղախուաւում համար՝ առեմ որ ապդ՝ տանական բաղմաթիւ (Ամնաստրեանցներից) մէկը՝ Գեօրգի Վուրօն էր, որի վրակ մասով են ցոյց տալիս, երբ նա իւր սիրելի հայրենիքում շրջում է: Եւ ես այնքան սրասովին և ներքին նախնութիւն գտակ ապակ ապա երկու բարերարների մէջ, որ ես ազ ես չեմ կարող մինն երևակաւութեան ներկազայնել՝ առանց մրւակն: աւելին՝ ես շատ անգում շիռթում եմ ազ երկու սիրելի պատկերները, որովհետեւ արգէն 10 տարի առաջ էր, որ ես սմաման Ասմաստրեանցին տեսնել էի Պետերբուրգում, իսկ լոխն բարերարին միան մի քանի անգում տեսնելու բազզն ունեցաւ: Այս, մեծ է եղել հելլենացին հին ժամանակիներում իւր քաղաքակրթական բացառիկ դիրքով, որ ազ ես մի երկրում կրմնելու չէ, մեծ է այդ աղջն աջմ իւր բարերարութեամբ որ կարելի է առել նախկին կեանքի առանց է: Արքան հազւադիւտ են տաճկահպատէրի մէջ ուղարակ կազմականցներ, Ամնաստրեանցներ, Մելիք-Համբաղեանցներ, Յովեանիանցներ, անցքան սովորական երեսիներ են նոյն հանգամանքներում ապառ լոյն մեծ և խորհրդակի որաները: Բացց Գ. Վուրօնի մեծապործութեանց մասին քիչ լուսու, երբ ես կրագալիքներում իմ վորքիկ ուղերութիւնը դէմք՝ «Հոմերեան Ապառամը», որ իշով 3/4 ժամ հեռու է քաղաքից: Գիշերն այս խորհրդականութիւններու աշկողին մտանք՝ առ աւուեան վաղ վիրկինալու և կղզու հետ ճանօթանալու վիտառորութեամբ: Չիշերը սուսափի մրգիածուի

էր, կարծես ամբողջ հիւրանոցը շարժուում էր և չը նակելով աւս հողմերին՝ ողը ծանր էր և քնանալը դժւարին:

Քիոս կղզին այժմ ունի մօտաւորապէս 62,000 բնակիչ, խալ զլիսաւոր քաղաքը ուր մենք ենք գտնուում՝ Քիոսը կամ Կաստրոնը արմենան կողմուում 14000։ Ականեղ նասուում է կուսակալից զաս կղզու լունական թեմակալը։

Ահա թէ ինչպիսի սեփական մօտաւորի համար է քաղել Բուեէլէ աշխարհագրական և պատմական հաճրագիտարանը (Dictionnaire universel d'Historie et de Géographie, 1876) առ կղզու մասին։ Այս հաճրագիտարանից մենք համեմ նաև մեր վերաբերալ մի երկու տեղեկութիւնները։ Խաղողի հոչակաւորէ, ունի թուզ, պիտուղ, ձիւթ (մաղդաքի), Այս կղզին ամենից առաջ մարդաբնակ է եղիղ ալլազպների և կարիացիների<sup>1)</sup> միջոցավ, ապա՝ Կրիտ, և Հօրոս կղզիների բնակիչներն են եկել։ Նա չատ անգամ է փոփոխել իւր անունը՝ Օֆիիւզ, Պիտիիւզ, Եթալէ, Մակրիս և վերջապէս Քիոս։ Նա պարծենուամ էր թէ ինքն և Հոմերոսին կեանք աւել։ Նա հայրհնիքն էր ողբերգակ Խոնի, պատմաբան Յէսպոնի, փիլիսոփակ Միարուգորի, քանդակագործ Բիւզապի և Անթէրմի և այլն։ Վաղ ժամանակներուու Քիոսը ծովալին պատուառելի ոչ և ունեցել, Պարսկական պատերազմների ժամանակ նա բանաղտառած էր եղիղ զօրքեր մասակարարել միծ թագաւորին, բայց Քուրքուսի սպասուութիւնից վասու նա միացաւ Ավմանի հետ։ Պելոպնիզեանի պատերազմների միջոցին նա Աթէնքի գաշնակիցը մնաց։ Նա պատիժ կրեց՝ լավեդէմոնական լուծին ենթարկվելու, ապա՝ մակեոպոնական թաղաւորներին։ Աղեքանողի մահանեից վետու ևս վիճակ ընկաւ Պերգամափի թագաւորին։ Նա Փիլիպոս Մակեոնացուն ընդդիմացաւ։ Հոսոմին գաշնակիցը զաւաւ, բայց վասու Միհրդատին օդնութիւն հասցնելով նորան հատիմէական հասարակ նահանջի աստիճանի իջևը ին և այս ժամանակներից վետ և որ նա կորցրեց իւր բոլոր կարեռութիւնը։ Խաչակրաց պատերազմների ժամանակ Քիոսը մի քանի անգամ նւաճւեց գէնուացիների, չունական և լատինական կուսաների, թուրքերի և վենետիկացիների ձեռքով։ Գէնուացիներն ավանեց արիապետեցին 1346—1566, այսինքն մինչև ան ժամանակ, երբ թուրքերի ձեռքն ընկաւ։ 1821 Քիոսցիք արասամբական փորձ արին, բայց լոռուր։ Էրանց ճիպերը պատճառ եղան ավս կղզու աւելիմանը, որ սարսափելի կերպով ամակացաւ 1822-ին։

Քիոսը 1880 թ. սարսափելի երկրաշարժներից վետու կրկին վերակենդանացել է։ քանդուածների տեղը չինել են հետպետէ աւելի գեղեցիկ ու կանոնաւոր փողոցներ ճաշակաւոր աներով։ Յետ ընկած թաղերու կամ դեռ երկրաշարժից խարխուլ դրութեան մէջ մնացած հին աներ,

<sup>1)</sup> Փոքր-Ասիայի հարաւարքի մուտքաւում էր։

Կան մարդիկ, որոնք շփոթւում են, չշկուում իրանց զործողութիւնների մէջ, երբ գիտեն, որ մէկը ուշալբութիւնով նալում է նրանց: Ես ճանաչում եմ շատ պիանիսաների, որոնք չեն կարող ածել, եթէ մէկը նրանց մօտ կանգնած լինի: Շատ զիտնականներ չեն կարող խօսել հասարակութեան առաջ և ալին:

Աշխատանքիս երկրորդ մասում կը տեսնենք, որ այս հալեացքի կցորդութեան ովտով լաջողել է երեխաներ և կանաքը լափշաակել:

Ժողովրդի մէջ հաւատուամ կալ, իրը թէ կան մարդիք որոնք չար աչք ունեն և կարող են մէկին (կամ մարդու կամ անասունի) աչքով տալ:

Բաց առնելով չափազանցութիւնները, որոնցով միշտ լիէ ժողովրդի փորձնական զիտողութիւննորը, այն հիմնական նկատողութիւնը, թէ աչքով տալ հնաւոր է, կարող է ճիշտ լինել և ահա ինչպէս.

«Չար աչքից վիճակարութեան զազափարը կազմել է երեխ աճն իրազութիւնից, որ մի քանի աչքեր, ինչպէս ուն, խոչոր, փալուն աչքերը, ամելի հեշտ են վացնուամ կամ հրապուրում մեղ, քան թէ մանր, անդո՞ն, անարտակալիչ հալեացքը:

Կապուս խոշոր աչքերը դուցի աւելի գրաւիչ են, քան թէ ուրիշ գոհնաւորները:

Այս կապուս կամ ոն մեծ աչքանի մի անձն վտղոցով անցնելիս կարող է հրապարաքի մեջ քցել պատահողներից շասերին: Սրանց հաջեացք-ները սեւում են միմիանց, հրապուրւածը բախտակելով հրապուրիչ աչքերովի ազ ևս չի նացում իւր շուրջը, չի նկատում սպառնացող վտանգը, որովհետեւ այս բողեիս նրա տարողջ հոգեկան ուժը կենտրոնացած է, հաջեացքում: Եւ այս բախտակերւան, այս հրապարի մեջ, նա զիպչում է անցորդներին, վորոցի պատերին ու ծառերին, կամ ուրը սալթաքում, է վայր է ընկնում, կամ վուսի մեջ զլորւում կամ կառքերի տակ!...

Ամբոփը կ'ասի.—ազդ մարդը աչքով ու ենց:

Մի ուրիշ օրինակ.

Այս միենան մարդը պատահում է մի կնոջ, որը մի երեխակ ունի զրկեն: Չար աչքը մատենում է, զրկում է երեխակին, անս, ինչ սիրուն երեխակ է, ինչ չաղ է»-ասում է նա և հետանում: Նախապաշտուած մօր սիրուը վախ է ընկնում, չար աչքը զովից նրա երեխակին, ուրեմն սրան մի վտանգ է սպառնում, ու խեղճ կնօջ աչքերը յառած են մնում ազդ անձի վրա, նա հրապարի մեջ է ընկնում, ապինքն՝ կորցնում է իրան ու տեղնուտեղը քարանում: Ան ժամանակ ազդ շակլած մօր թերը ու ուերը թուլանում են և, եթէ հրապարը մեծ է, նա կամ ինքն է վայր ընկնում, կամ երեխակին վայր քցում, կամ մի առարկակի խփում նրան և ալզ:

Եւ ազդ մարդը կ'անիծի չար աչքը:

Մի երրող զէպք:

Ազդ չարապուչակ մարդը ճանապարին պատահում է մի սապի երկու եղ լծած, կամ մի ձի լծած կառքի: Ազդ եղը կամ ազդ ձին նրան զուր են գալիս, նա նալում է կենդաններին: Հրապուրւած կենդանիները, հաջեացքի կցորդութեան պատճառով, սալթաքում են, վայր ընկնում, վեաս-ւում, կամ կառքը, սապը վախցնում, ջարդուիչուր անում:

Բաւական է, որ մի երկու ապափիսի դէպքերի պատճառը լինի մի անձն, որ ավաս աչքից տիտղոսին արժանանար: Ան ժամանակ բոլորը նրա վրա խեթ աչքով կսկսեն նալել: Սա հասարակութեան վեասակար ան-դամ կը դառնաց և այնուհետեւ անս բոլորը, ինչ որ նա կարող է աչքով տալ, թաղցրած է նրա չար աչքերից:

Եւրոպակումն էլ շատ տեղեր, մանաւանդ խալիակում, հաւատում են այս վաստ աչքերին, որոնց յետաօր անուն են տապլ:

Փոքր չի պնոսի անունները:

Վերջացնելով հրապարի (fascination) ուսումնափրութիւնը, մենք, ընթերցողի զարմարութեան համար, ուզում ենք առաջ բերել այն զանա-դան անունները, որոնք տրում են այս հիպնոսական դրութեանը:

Ահա աղ անուները, որոնց նշանակութիւնը մի է, <sup>1)</sup>:

Փոքր չի պնտիսմ.—Petit Hypnotisme—Малый Гипнозъ.

Թովութիւն.—Fascination—Обвражение.

Հակեացքի կցորդութիւն կամ Ակնակցութիւն.—

Prise du regard—Сплющеніе глязъ.

Հրապուչք (Հրապուրավնք).—Charmie—Очарованіе.

Կիսաքարացումն—կիսաքնակածութիւն.—Etat cataleptique—сомнамбулическое состояніе.

Ընդհանրապէս հեղինակները համարեա անխափր զործ են ածում այս բոլոր անուններն էլ: Պարիզի գրողները յաճախ զործ են ածում Փոքր չի պնտիսմ անունը, հակաղիւնում այս դրութիւնը Մեծ Հիպնոտիսմին, իւր զասական երեք շրջաններով:

Այն միջաշրջանները, որոնց նկարագրեցինք «Վիսաանզգանութիւն-Վիսաաքարացումն» և կիսաքարացումն—Վիսաաքնակածութիւն» անուններով, զասական հիպնոտի երեք սատիճանների վրա երկու սատիճաններ էլ են ամելացնում: Ուրեմն ընդամենը կ'ունենանք հինդ աստիճան, որոնք են.

1) Անզգակամ քուն (Վիթալիյա):

2) Վիսաանզգանութիւն—Վիսաաքարացումն (Վիթարգո-Վատալեպսիա):

3) Քարացումն կամ Արձանացումն (Վատալեպսիա):

4) Վիսաաքարացումն—Վիսաաքնակածութիւն կամ Թովութիւն, կամ Հրապումը, կամ Փոքր Հիպնոտիսմ (Վատալեպտո-Վոնսամբուլիսմ):

5) Քարացութիւն (Վոնսամբուլիսմ):

2-րդ և 4-րդը մննք կարծութեան համար կ'անւանենք. առաջին և երկրորդ միջաշրջաններ:

Ակտիւ, հիպնոտը վերջի վերջու Պարիզի վիտսականներն էլ բաժանում են հինգ շրջանների և այս հանզամանքը անտարակուս մօտեցնում է զոնէ այս կետով Պարիզի ուսմունքը Նանսիի ուսմունքին, որովհետեւ այս վերջինը միշտ բազոքիւ է պարիզիցիների երեք շրջանների դէմ:

Ներշնչականութիւն և նրա աստիճանները.—Վիսաարթիւն և թիւնութիւն:

Մենք աւսանք, որ հիպնոտածի ներշնչելու ընդունակութեանը, կամ մի խօսքով, ներշնչականութիւն աստիճանը կախած է հիպնոտական քնի աստիճանից: Մի աստիճանում ներշնչականութիւնը (suggestibilité, внушаемость) մեծ է, (ակտինքն, հիշտութիւնով են ընդունում և իրագործում մել տած ներշնչումները), միտում նա թուլ է:

1) Մեր լեզուում՝ մի շաբաք բառեր կան, որոնք անխափր զործ են ածում քըանիսիական՝ charmer և առա յօвражить բառերի տեղ: Երկար որոնելուց յետոյ, մենք լեռտիենք, թովութիւն (обвражение) և հրապույ (очарование) բառերը:

Նանովեցիք, որոնք առաջինն են ուսումնառիրել «ներշնչումն արթնութեան մէջ», իրանք հաւասարցնում են, որ քնարածութիւնը կարելի է երկուսի բաժանել, խոր և թեթև քնաչածութիւններ ի առաջ գրած բերած փաստերից կարելի է եղբակացնել որ քնարածական դրութիւնները շատ են և որ ամենախոր քնարածութիւնից մինչև արթնութիւնը միշտը միջանկեալ դրութիւններ կան:

Հաւասական է ուրեմն, կրկնում ենք, որ այս ներշնչական երեսիները կատարում են այս միջազդաններից մէկի մէջ և ամելի իրաւացի կը լինէր այս տեսակ ներշնչումն՝ անւանել:

### Ներշնչումն կիսարթնութեան մէջ:

Բերնհաչմի փոքր & երը.—Ներշնչումն եր Բերնհաչմը, որի անունը սերս կապած է ներշնչան հարցի հնայ, 1883 թվին Թուանում հաւաքած գիտնական ժողովին մի վեկուցամ է անում, որի մէջ գիտնականների ուշը զարձնում է այն զարմանալի փաստի վրա, թէ կան անձեր, որոնք արթուն միջոցներն ել ընդունակ են ներշնչումներ ընդունել և կատարել: Դիմոնակալին, Շարլ Ռիշէ, Բոստեկը՝ Քրեմօն և ուրիշները հաստատեցին Բերնհաչմի փորձերը:

ԱԱհա, օրինակ. Տ.-ը, իմ հիւանդներից մէկը, որը բնտելացած է հիպնոսին, ասում է Բերնհաչմը, և որը ընկնում է թե իսկ քնարածութեան մէջ: Առաջ ց քնեցնելու, ես նրան ասում եմ լանկարծ (և երնլե-pourrpoint). «Փփեցիք ձեր ձեռը, այլ ես չէք կարող բանալու»: Նա ձեռը խփում է և իդուք ձիգ է թափում բանալ: Ես պարզել եմ տալիս նրա թեր, ձեռը բաց, անում և ասում եմ:—«Պուք չէք կարող խփել ձեր ձեռը»: Նա շատ աշխատում էին փել բաց անկարող է:

«Ես ասում եմ:—«Պուք ձեր ձեռները, գուք չէք կարող կանգնեցնելո՞»— Նա անդազար պատում է ձեռները մէկը միամի ետեից: Ես աւելացնում եմ:— «Ձեր բոլոր ձիգը գործ դրէք կանգնեցնելու, եթէ կարող էք», նա ասում իկ աշխատում է, որ գոյնէ ձեռները իրար կողյնի և ալդպիտով կանգնացնի, բաց ի զուր: Ես ինքու բանում եմ մի թեր, միւրը շարունակում է պատճ զալ, ու հէնց որ բաց եմ թաղնում—կրկին պատասմ է:

«Զգացողական ներշնչումն եր էլ կարելի է կատարել տալ: Եմ անսամբուլներից մէկին բառական է, որ ասեմ: «Ձեր ձախ կողմը անզգալ է», և այդ կողմը այլ ես չի զգալ քորոցի ծակոցր... խակ միւր կողմը զլաւուն է: Ես կարողացակ ամբողջ մարմինը ալսալիսավ անզգապացնել և անզգապացնել անսպիս խոր, որ մէկ օր այդ հիւանդին հինգ տասամը գուրս քաշեցին և նա ոչինչ չը զգաց:

«Զգակարանքներն ել կարող են ներշնչման ենթարկել: Նրա տեսանելիքը ինական է: Ես ասում եմ:—«Դամ ձախ աչքով շատ լաւ և շատ հե-

ուռ ես տեսնում, խոկ աջով վաս և շատ մօտ, Յեսու կարդացնել եմ տալիս և ճշմարիտ որ նրա ձախ աչքը սրատեսէ, խոկ աջի լուսը պակասնել: Նոյնը ականջների վերաբերութիւնով:

Նոյն միջոցով կարելի կաթւած աչարութիւն, անդամն երի թռւլութիւն բարուցանել. մի ձեռը, կամ մի ոտը, կամ երկու ոտները թռւլացնել:

Բոստէը երեք կանանց վրա ցոց տես, որ առանց հիպնոսելու կարելի է ամեն տեսակ թռւլութիւններ և անդամալուծութիւններ առաջացնել: Հասարակ ներշնչումով Բոստէը կարողացաւ նրանց խլացնել կուրացնել, անդգալացնել և ամեն տեսակ ցնորքներ տեսնել տալ:

Մեծ հեշտութիւնով բարուցամ են ամեն տեսակ ցնորքներ և պատրանքներ: Մի խօսքով—այս «արթու» անւանած դրութեան մէջ մենք կարող ենք (ճշմարիտ է մեծ դժւարութիւնով) անել այն բոլոր շարժողական և զգացողական ներշնչումները, որ անում ենք սոնամբուլիսի մէջ:

Նմանութիւնը աւելի բարածելի կը լինի, եթէ հաւատանք Այիժուակի փորձերին, որը ներշնչումով արթուն մարդուն ամեն տեսակ գործողութիւններ է կատարել տալիս... մինչև անգամ սպանութիւն:

«Օրիորդ Պ.-ին, ասում է այս հետազոտիչը՝ ես ստիպում եմ իւր մօր վրա ատրճանակ (ի հարկէ երևակալական) արձակել: Պատանի չարագործուհին էն աւագէս արթուն է, ինչպէս և հանդիսական ները:

Բայց այս արդէն Նանսիի գիտնականների չափազանցութիւններից մէկն է!...

Կարելի է արդեօք Ենթալրել անգամ, որ մի առողջ և արթուն աղջիկ իւր մօր վրա ատրճանակ կրակի?

Կարծիք չկալ, որ այսպիսի ներշնչումներ միան հիպնոսի մէջ են հնարաւոր: Կրկնում ենք, որ աւելի հասկանալի և աւելի հաւանական է ենթագրել որ այս կարգի ներշնչումն էլ, ինչպէս և տուաջ նկարագրածներս, ընդունում են և կատարում կամթեթեն քնակածութեան, կամ այն միջաշրջաններից մէկի մէջ որոնք քնակածութիւնից արթնութեան են տանում և որոնց մենք կիսարթնութիւն անւանեցինք:

## ԳԼՈՒԽ Զ.

ՓՈՐՁՆԱԿԱՆ ՀԻՊՆՈՏԻՍՄԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՒՈՏՈՒՄՆ

Ե՞նչ է հիպնոտիսմը.—Նրա շքչանները.—Ներշնչումները.—Նրանց առաջին բաժանումն, —Նրանց երկրորդ բաժանումն, —Դանց երրորդ բաժանումն, —Ո՞նչնաւորութեան երկուումն, —Ֆեղիդա Հ-ի պատմութիւնը:

Մենք վերջացրինք հիպնոտիսմի կարճառօտ պատմութիւնը: Բայց աշխատանքիս երկրորդ մասին անցնելուց առաջ, աւելորդ

Հի լինի համառօտել մինչև այժմ՝ պատմածներս, որպէս զի մի ամ-  
փոփի գաղափար տանք ընթերցողին հիպնոսական երեսյթների գա-  
սաւորութեան և համեմատական կարևորութեան վրա:

Ի՞նչ է հիպնոտիսմը:

Հիպնոսը մի արւեստական նեարդային դրութիւն է, որը սաւ-  
տիկ մօտ է Հիստերիա կոչւած հիւանդութեան:

Նատերի կարծիքով, հիպնոտիսմը ոչ այլ ինչ է, եթէ  
ոչ արւեստական (փորձնական) հիստերիա:

Հիպնոտիսմի երեսյթները նկատել են շատ հին պատմական  
ժամանակներում, բայց գիտնականապէս սկսեցին ուսումնասիրւել  
վերջին տարիներս միայն (1875 թւից), պալ. Ռիշէի և Շարկօի տւած-  
ուժդին զարկեց յետոյ:

Ֆրանսիական գիտնականներին է պատկանում այս կարեոր գի-  
տելիքի ուսումնասիրութեան պատիւը: Պարիզի և Նանսիի հետազօ-  
տողներին է պարտական գիտնական աշխարը, որ այսօր հիպնոտիսմն  
երեսյթների խառոս պարզւել է և որ հիպնոտիսմը այսօր նեար-  
դային երեսյթներին շարքն է անցել:

## I

Հիպնոսի դասական շրջանները:

Հիպնոտական նինջը ներկայացնում է մի քանի աստիճաններ,  
ամենախոր քնից մինչև արթնութիւն:

Դասական կամ Պարիզի (Շարկօի) վարդապետութեան համա-  
ձայն, այդ աստիճանները թւով երեք են. Լեմարզիա (անգլայու-  
թիւն), Կատալեպսիա (քարացումն) և Սոնամբուլիսմ (քնայածու-  
թիւն):

Այս երեք «հիպնոտական շրջանների» մէջ զետեղւում են հիպ-  
նոսի բոլոր յայտնութիւնները:

Հիպնոտի բնաորոշն այն է, որ նա կորցրել է կամքը, ար-  
դեւառյժը կամ կոնտրոլը:

Այս հանգամանքից հետեւում է այն զարմանալի անպայման  
դիւրահաւատութիւնը, որը ներշնչային երեսյթների պատ-  
ճառն է:

Աեթարգիացի մէջ - հիպնոսածը մի դիակ է, առանց զգացողութեան և առանց շարժումների:

Կատալեպսիացի մէջ, բացի քարացման երեսյթները, նկատում են նաև նմանողական ներշնչումներ, որոնք յայտնի են նմանողութիւնն կամ կապիկութիւն անուններով:

Սոնամբուլիսմը (քնայածութիւն) բնաորոշում է նրանով, որ այս շրջանում ենթակացի զգայարանքները, յիշողութիւնը և մտաբերումն զրեթէ անհաւատալի լարման են համարմանի նայց այս շրջանի ամենանշանաւոր երեսյթը ներշնչումն է:

Նորագոյն հետազոտութիւնները ցոյց տւեցին, որ այս երեք դասական շրջանների մէջ երկրորդական շրջաններ ևս կան, որոնց մենք միջաշրջաններ անւանեցինք և որոնք յատկանիշ նշաններ չունեն, այլ ներկայացնում են երկու հարեւան շրջանների երեսյթների խառնուրդ:

Այս միջանկերակ շրջաններից առաջինը ընկած է Աեթարգիացի և Կատալեպսիացի, իսկ երկրորդը Կատալեպսիացի և Սոնամբուլիսմի մէջ:

Այս երկրորդ միջաշրջանը յայտնի է և Փոքր Հիպնոտիսմ, կամ Հրապուրածի վրա մենք գտնում ենք թէ քարացման (կատալեպսիացի) և թէ քնայածական (սոնամբուլական) երեսյթներ:

## II

Ներշնչումները:

Հիպնոսի երեսյթներից ամենանշանաւորը անառարակոյս ներշնչումն է: Այս պատճառով թող ներւի մեզ մի քիչ երկար կանգ առնել այս երեսյթի վրա, որպէս զի ընթերցողը կարողանաց մի հայացքով լըմբոնել ներշնչման փաստերի ահազին կուտակունը:

Ներշնչումն հիպնոսածի այն զարմանալի ընդունակութիւնն է, որի շնորհքով նա ընդունում է և կատարում ներշնչողի թելագրութիւնները:

Ներշնչման միջոցով մենք յարուցանում ենք քանդամալուծութիւններ, ամեն տեսակ անզգայութիւններ, կուրութիւն, խլութիւն, ճաշակի, հոռոռելիքի անյետանումն:

Ներշնչման միջոցով մենք վտխում ենք հիպնոսածի աչքին առար-

կաների գոյնը, մեծութիւնը, ձեզ. — մասիտը դաշոյն բարձնում, կամ զիրքը կատու (պատրանք — ալլօզի):

Ներշնչման օրէնքով ենք տեսնել տալիսնրան բացակայ առարկաներ, կամ անցետացնումնրա աչքի առաջ դանւող իրերը (ցնորք — գալլօցիացի):

Ներշնչման ազգեցութիւնը այն աստիճան զօրեղ է, որ կարող է փոխել հիգնուածի ամբողջ հողեկան և մարմնական աշխարք, նրան ասպակեղէն, կամ մեղրամոմից շինած դարձնել, կամ փոխել նրա հասակը, սեռը, նրա անձնաւորութիւնը, մինչեւ անգամ նրան շուն շինել...

Մի խօսքով, ներշնչողի բերնից գուրս թուած մի բառն անգամ՝ բաւական է, որ մի նոր աշխար բացւի քնայածի առաջ, աշխար, որի մէջ նա երեւակացութիւնով կը շրջի, զիսելով ամենասպանչելի բնութեան տեսարաններ՝ անուանախիտ լեռներ, նաւերով ծածկւած ծովեր, ծաղկալից դաշտեր, ամբողջ բնութիւնը լի հրաշալիքներով, սքանչելի արեւով ափաւած, հրաշուրիչ և սոսկալի իւր յափշտակող վեհութեան մէջ։ Եւ ինքը ներշնչւածը, իրական աշխարից վերացած, ներշնչման թեերի վրա շրջում է կամ առանում այս երեւակացական երկրի երեսին, արևի ճառագայթներով վայսայած, ծաղիների բուրմունքներով արբեցած, ծով, ցամաք, քաղաքներ, գաշտեր տախտով, իջնելով ծովի յատակը կամ ամպերի վրա լողալով, մանելով տներ, խուռն ամբոխի մէջ, իւր կորցրած սիրելիների զիրկն ընկնելու։ Եւ հոգին գհացլած, սիրալ մի անասելի երջանկութիւնով լցւած նա, ներշնչողի յաճոցքին համեմատ, կը բարձրանայ երկինք, կը շրջի դրախտի մէջ, հրեշտակներով շրջապատած, և կը մօտենաց Ստեղծողի ահուելի Մեծութեան!...

Հիմի փոխեցէք ձեր ներշնչումը — և դուք կը գահավիժեք նրան դժոխքը, ուրաւականներով և դարշելի հրեշներով լի դժոխքը, որը գոեհիկ ժողովրդի երեւակացութիւնը լցրել է զարհուրելի գարշելութիւնով։

Հիպնոսի մը շրջանումն է կատարւում ներշնչումն։

Քարացման շրջանից մինչեւ արթնութիւն ենթական ընդունակ է ներշնչումներ ընդունելու և իրագործելու։ Նրա ներշնչանութիւնը աճում է ներքեւից վեր, հասնելով իւր գաղաթնակէտին կիսալքնութեան շրջանում։

## III

- Ներշնչումների առաջին բաժանումը:  
 Ներշնչումը մենք բաժանեցինք երեք կարգի:  
 1) Նարծողական ներշնչումներ:  
 2) Զգացողական ներշնչումներ:  
 3) Գործողութիւնների ներշնչումներ:  
 1) Նարծողական ներշնչումների մենք յարուցանում ենք շարժումներ, անդամալու ծութիւններ, մի որ և է անդամի թութիւն:

2) Զգացողական ներշնչումների մենք ենթակայի մարմի մի մասը, կամ նրա ամբողջ մարմինը անզգաց ենք դարձնում, նրա ճաշակելիքը, հոտոտելիքը թուլացնում, կամ ընդհակառակը. — Նրա կաշին դիւրագրգիւ դարձնում և առհասարակ բոլոր զգայարանքները զարմանալի լարման հասցնում:

Բացի այդ, ներշնչման միջոցով մենք յարուցանում ենք պատրանքներ, և ցնորքներ, փոխել ենք տալիս ենթակայի անձնաւորութիւնը, արնագրոշմներ (стыгматы) առաջ բերում և այլն:

3) Գործողական ներշնչումների միջոցով մենք թելագրում ենք բարդ գործողութիւններ, լի պատրանքներով և ցնորքներով, — գործողութիւններ, որոնք պիտի կատարեն կամ քնի մէջ, կամ արթնանալուց յետոյ, մինչև միշտարի ժամանակ:

## IV

- Ներշնչումների երկրորդ բաժանումը:  
 Նայելով թէ ինչ միջոցով ենք մենք ներշնչումներ յարուցանում, այս վերջինները պիտի երկու կարգի բաժանել.

1) Նմանողական ներշնչումներ (suggestion imitative), որոնք յացնուում են Կատալեպսիայի (քարացման) և Թովչութեան մէջ: Այս այն է, ինչ որ մենք նկարագրեցինք նմանողութիւն կամ կապիկութիւն անունով և կայանում է նրանում, որ հիպնոսածը կրկնում է մեր շարժումները: Այն ներշնչումները կատարում են ուրեմն տեսութեան միջոցով:

2) Լոռողական ներշնչումներ (suggestion verbale), ամենաշարիորները, որոնք նկատում են միայն Հրապառութան-

Քից վեր մինչև արթնութիւն։ Փանի մենք մօտենում ենք արթնութեան, այնքան աւելի հեշտանում է ներշնչումներ անելը։ Այնպէս որ շատերը ընդունակ են գառնում ներշնչւել չափազանց թեթև հիսնոսի մէջ, այն աստիճան թեթև, որ շատ գիտնականներ չեն կարողացել որոշել ինչպէս ասում է ծիլ դը լա Տուրեոը, թէ այդպիսի դէսկերում քնած է ենթական, թէ զարթուն և մինչև անգամ նկարագրել են մի շարք ներշնչացին երևոյթներ «ներշնչումն արթնութեան մէջ» անունով։

## V

Ներշնչումն երի երրորդ բաժանումն։

Կան ներշնչումներ, որոնք մոռացւում են զարթնելուց յետոյ, կան և այնպիսիներ, որոնք մնում են քնայածի յիշողութեան մէջ։

1) Հրապուրանքի և Կիսարթնութեան մէջ (արթնութեան ըստ հիսնոսագէտների) ստացած ներշնչումները մնում են հիսնոսածի յիշողութեան մէջ։ Այնպէս որ ներշնչւածը արթնանալուց յետոյ պատմում է իւր տեսածը ու կատարածը։

Այդպիսիներից շատերը արթնելուց յետոյ պատմումեն, թէ ներշնչումներն ստանալիս նրանք աշխատումէին դիմադրել և չը կատարել ներշնչած գործողութիւնը, բայց կորցրել է ին իրանց կամքը ու ստիպւած էին թելադրման հպատակել։

Երբ նրանց ցնորքներ են ներշնչում, օրինակ, ասում են. «ձեր առաջ առիւծ է կանգնած», «հիսնոսածը սկզբում ծիծաղում է ծաղրում է հիսնոսողին», որ սա իրան խելագար է կարծում։ Բայց կամաց կամաց, մինչդեռ հիսնոսողը հեղինակաւոր ձայնով կրկնում է նրան ներշնչումն, ենթական (հակառակ իւր կամքին) սկսում է մի ինչ որ ստեր տեսնել, այս ստերը կամաց կամաց առիւծի ձեւ է ընդունում, ոգի է ստանում... և ներշնչածը չի յապաղում տեսնել իւր առաջին այս առիւծը, լսել նրա մոնիթունը, տեսնել նրա աչքերի փայլը և այլն, թէև մինչև վերջ նա համուած է, որ այս իւր երևակայութեան պառազն է։

2) Խակական Քնայածութեան մէջ արած ներշնչումները բոլորը մոռացւում են զարթնելուց յետոյ և մտաքերում են միայն յետագայ Քնայածութեան մէջ։

Այսպէս, երբ մի անձն ընկնում է քնայածութեան մէջ, նա մտաբերում է իւր առաջիկայ քնայած դրութիւններում առացած ներշնչումները:

Աւրեմն այսպիսի անձերը երկու կեանք կ'ունենան. մէկը արթուն, միւսը քնայած:

Երբ այս անձը քնայածութեան մէջ է, նա բոլորովին մոռանում է իւր արթնութեան մէջ անցկացրած կեանքը և ցիշում է այն կեանքը, որը նա նախընթաց քնայած դրութիւնների մէջ է անցկացրել:

Իսկ երբ նա արթնութեան մէջ է, մոռանումէ իւր, այսպէս ասած, քնայածական կեանքը:

Այս քնայածական կեանքը կարող է շատ երկար լինել, այնքան երկար, որ մի որոշեալ անձի կեանքի մի նշանաւոր մասն կազմել:

## VI

Անձնաւորութեան երկուսումն:

Բազմաթիւ օրինակներ ցոյց են տալիս, որ կան անձինք, որոնք քնականաբար լնկնում են քնայածութեան մէջ և մնում այս դրութեամբ ամբողջ ամիսներով: Այսպիսիների կեանքը երկու մասն է բաժանում, որոնց կարելի է անւանել արթուն և քնայական կեանք:

Բժիշկ Ազանը առաջինն էր, որ գիտնական աշխարի ուշագրութիւնը այս օտարութիւնը կառուցմի վրա գարձրեց, նկարագրելով տիկին Ֆելիզա X-ի կեանքը:

Այս դրութիւնը այսօր յայտնի է, Անձնաւորութեան (ինքնութեան) Երկուսումն (Le dédoublement de la personnalité) անունով:

Ֆելիզա X-ի կեանքը անձնաւորութեան երկուսման մի զարմանալի օրինակ է:

Գուցէ մի օր յաջողւի մեզ մանրամասն քննելու այս օտարօտիւնը կառուցմի, այսօր թող ներւի մեզ միայն համառոտել այսաեղ աշխարահուչակ տիկին Ֆելիզաի պատմութիւնը:

«1858-ին, ասում է բժ. Ազանը, ինձ հրափրեցին խնամելու մի ջահել աղջկակ, Ֆելիզա X... անունով, որին խելացար էին կարծում. Սա այն ժամանակ տասն և հինգ տարեկան էր: Այս մի հիսուերիկ կին էր, խիստ

աշխատասէր և խելացի, լուրջ բնաւոթեան տէր և գրէթէ միշտ տիտոր:

«Համարեա ամեն օր, առանց վականի պատճառի, կամ ամենափոքր լուղման պատճառով, նա ընկնում էր երկրորդ գրութեան (կամ քնակած դրութեան) մէջ և ահա ինչպէս.

«Նա նստած է ու կար է անում: Յանկարծ նա ցաւէ զգում շնչերակ-ներում և քնում է խոր քնով, որից անկարելի է զարթեցնել նրան և որը տեսում է երկու երեք լոտի, վետո նա կարծու զարթնում է: Բայց այժմ նա նման չէ առաջւակ աղջկան, այժմ նա ուրախ է, ծիծաղկոտ, երգելով շարունակում է իւր գործը, հաճաքներ է անում, աւելի ընդունակ է դառել և ապլ և չի զգում այն ցաւերը, որոնք տանջում էին նրան իւր բնական (արթուն) դրութեան մէջ: Այս նոր—երկրորդ գրութիւնը տեսում է օրական մէկից մինչև երեք ժամ, որից մետու Ֆիլիպան զարթնում է, բոլորովին մոռա-նալով ամենը, ինչ որ կատարելի է այս դրութեան մէջ:

«Այսպէս, երկրորդ դրութեան մէջ այդ աղջիկը իրան նւիրել էր իւր վիւսացուին և մի օր, երբ բնական դրութեան մէջ էր, ինձ զանգատմեց, թէ օտարոտի բաներ է զգում փորումը: Աղջիկը պարզապէս չվի էր, բայց ես ոչինչ չասեցի իրան: Մի լոպէից մտու նա ընկաւ երկրորդ դրութեան մէջ և ասեց ծիծաղելով: «Ես շատ լաւ գիտեմ, որ չվի եմ»:

«Հետեւեալ տարիները երկրորդ գրութեան մէջ ամլի աղջիկը իրան նւիրել էր իւր վիւսացուին և մի օր, երբ բնականին: Այսպէս, երբ ֆելիդան ընկնում էր երկրորդ կամ քնակած դրութեան մէջ, նա մոռանում էր այն ամենը, ինչ որ անցել էր նրա գլխով բնական (արթուն) կեանքում, և ընդհակառակը, բնա-կան դրութեան մէջ նա բռորովին կորցնում էր մոքից երկրորդ դրու-թեան մէջ անցած բաները:

Յետու այս երկրորդ դրութիւնը ամլի ևս երկարելով, արթնութիւ-նից ամելի է տեսում, անուպէս որ, երկար տարիների ընթացքում, բնական կեանքը մի քանի օր էր միայն տեսում, այն ինչ երկրորդ դրութիւնը ամ-բողջ ամիսներու եւ ֆելիդաի հողեկան դրութիւնը անտանելի էր, որովհետև նրա կեանքի մէջ դատարկութիւններ էր գույանում և նա փոխարինաբար առաջին կամ երկրորդ դրութիւնների մէջ ընկնելով, մոռանում էր իւր նախըն-թաց կեանքում կատարւածները, մինչև անգամ մոռանում էր իւր որդիկերանց, որոնք առաջիկատ դրութեան մէջ էին ծնւել:

«Ֆելիդաի կեանքը, երեսուն երկու տարուց վեր, նմանում է մի գրքի, որի միջից մէկով քասանով, երեսունով թերթեր են պոկած: Ինչ օտարոտի ընթերցանութիւնն, Եթէ մի թերթ միայն պակասէր, դեռ կարելի կը լինէր մոքին հետեւել, իսկ եթէ քսան թերթ է պատռած, այդ անկարելի է:

«Այսօր ֆելիդան քառասուն և իննը տարեկան է: Տաս տարի է, ինչ երկրորդ դրութեան տեսութիւնը կարճացել է: Բնական դրութիւնը կա-մաց-կամաց երկարեց, և այժմ հազիւ թէ ամիսը մէկ անգամ նա կ'ընկնի

իւր քնակածութեան մէջ, այն էլ մը քանի ժամով միան։ Ազնպէս որ ֆե-  
լիդան համարեա բժշկել է»։

Նոյնանման դէպքեր առաջ են բերում ուրիշ հեղինակներ ևս,  
բայց ցաւակցաբար մենք չենք կարող աւելի երկար կանգ առնել այս  
հետաքրքիր երեսյթի վրա։

Ահա փորձնական կայ յարուցած Հիսուսամլ իւր նշանաւոր  
արտայայսութիւններով։

Ըսթերցողը պիտի միշտ նկատի ունենայ արւեստական  
հիպնոսի երեսյթները, որպէս զի նրան հասկանալի լինեն բնա-  
կան հիպնոսի յայտնութիւնները, որոնց մասին պիտի խօսենք  
այս աշխատանքի երկրորդ մասում։

## ԳՐԱԽՈՍՈՒԹԻՒՆ

ԿԱՐԱՊԵՏ ԵԱՂՈՒԲԵԱՆ, ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՍԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ. Թիֆլիս,  
տող. 3. Մարտիրոսեանցի 1891 թ. <sup>1)</sup>:

Այն ուշադրութիւնը, որին արժանացաւ այլ բառարանը, ինքն ըստ  
ինքեան մի լաւ ապացոց է թէ ինչ կարօտութիւն է զգում և ինչպիսի  
անհամբերութեամբ է ոպասում մեր հասարակութիւնը մի ալպախի գրքի.  
Լուս տեսնելուն պիս ազգ բառարանը խօսակցութեան նիւթ դառւաւ թէ  
մասնաւոր շրջաններում և թէ պարբերական թերթերում. գրախօսեցին ան  
ոչ միայն մուր թերթերը, այլ և ոռուսերէն տպագրվող թերթերից, գոնեա  
ևս գիտեմ՝ մինը. Ազդ բոլոր գրախօսութիւններից ամենաճիշտը և ամենա-  
անաշատը ես համարում եմ այն, որը լոյս է տեսել բառարանի հետ միա-  
սին. այդ պ. Եազուբեանի իրակ Յառաջաբանն է. Ահա ինչ է ասում պ. Եա-  
զուբեանը ինքը իւր աշխատութեան մասին. «Չը գիտեմ ով ասել է, թէ  
կատարեալ բառարան միմիայն Աստուած կարող է կազմել բակց ալսոեղ  
կատարելութեան մօտիկ անգամ խօսք չէ կարող լինել. Ով ծանօթ է բառա-  
րանագրութեան, նա զիտէ, որ մանկարելի է երկու տարրուաց ընթացքում որ  
և է լրիւ, թէգուց <sup>2)</sup> ամենաթեթև բառարան կազմել. մանաւանդ որ ես  
չէի կարող իմ բոլոր ժամանակս նուիրել թողնելով իմ հերթական այլ պա-  
րապմունքներս». Չը գիտեմ ով ասել է թէ՝ մի որ և է աշխատութեան  
առաջին քննադատը, զուցէ ամենախիստը, ինքը հեղինակն է լինում. և այդ  
հաստատում է պ. Եազուբեանը, որը ոչ թէ քննադատում է, այլ ուղղակի  
դաստապարտում է իւր աշխատութիւնը, ինքը խոստովանելով թէ՝ «աշաեղ  
կատարելութեան մօտիկ անգամ իրուք չէ կարող լինել» և պատճառաբար.

1) Հրատարակում ենք այս գողւածը ի նկատի ունենալով հայ բառա-  
րանագրութեան շահը, որով միայն կարելի է արդարացնել այս գրախօսա-  
կան գողւածի մասովոր մեծութիւնը. Պահպանում ենք նաև հեղինակի մի-  
այն իրան բատուկ ուղղագրութիւնը, որի մասին մոր նկատողութիւնը  
կ'անենք իւր տեղում.

Դան. Խմբ.

2) Բնագրից բերած կատարերը ես արտագրում եմ բնագրի ուղղա-  
գրութեամբ:

Ներով ազդ՝ թէ նա չէր կարող իւր բոլոր ժամանակը նվիրել (ազդ գործին), թողնելով իւր հերթական ազ պարապմունքները։ Մի քիչ վետոյ պ. Եազուբեանը իւր բառարանի ներքին արժանաւորութիւն ունենալը կասկածում է, ասելով՝ «սական որքան ազդ աշխատակցութիւնները նպաստել են բառարանիս ներքին արժանաւորութիւնը—եթէ մի աչն ունի բարձրացնելուն, այնքան իմ աշխատակիցները հեռու են պակասաւոր կողմերի պատասխանաւութիւնից»։ Մի քանի տաղից վեառ պ. Եազուբեանը մի ազ ճշմարտութիւն է խոստովանում. «Յս ինքը էլ լաւ գիտեմ, ասում է նա, որ բառարանու ունի բազմաթիւ և պակասաւոր կողմերը Դորանցից գուցէ գլխաւորը ան է, որ թէսկիտ բառերի քանակութիւնը 30,000-ից էլ անց է, անուամենանիւ իւր տեսակին լրիւ չէ կարող համարուել, որքան ինձ ցանկալի էր։ Շատ կարելի է, որ բազմաթիւ բառեր, որոնք պիտի լինեն ազդ բառարանում, դուրս թողւած են։ Զետքի տակ եղած, պատրաստի նվաթից, որքան հնարաւոր էր, օգուտ քաղեցի։ Սական դա բաւական չէ, Հավերին աշխարհաբար բառարան լօրինողը պիտք է ինքը ևս նիւթ ժողով։ Մենք չունենք ոչ մի հայերէն բառարան, որի բասերի քանակութիւնը (նումնիլաստուրը) քիչ շատ լրիւ լինի։ Պէտք է նորից և ինքնուրուն կազմի, անա նոր բառարան կազմնլու դժուարութիւններից մեջը Բացի ազդ պիտք է օգուտ քաղել գաւառական բարբառներից, որ գետ մշակուած, անզամ զրի անցրած չեն, պիտք է օգուտ քաղել նորակազմ բառերից, որ ամենայն օր զրեթէ կազմնում են... իսկ ազդ բոլորը առնուազն պահանջում են <sup>1)</sup> ժամանակ։ Մնում է միայն զարմանալ, որ պ. Եազուբեանը, ինքը իւր գործը այս աստիճան անխնակ դատապարտելով, ինքը խոսափանելով՝ թէ իւր բառարանը ոչ միայն կատարեալ չէ ազ և նորա «կատարելութեան մօտիկ անգամ խօսք չէ կարող լինել <sup>2)</sup>», ինքը կասկածելով իւր բառարանի ներքին արժանաւորութիւնները, լաւ իմանալով որ իւր բառարանը բազմաթիւ պակասաւոր կողմեր ունի, որ բազմաթիւ բառեր, որոնք պիտի լինեն այս բառարանում, դուրս թողված են,—այնու ամենանիւ տպագրում է իւր աշխատութիւնը, որ սպասող հասարակութեան ձեռը տակ մի բառարան, որ «ունի շատ պակասաւոր կողմեր» և որի մէջ «բաղեաթիւ բառեր թողուած են» և բայցականչում էլ է թէ՝ feci, զօօդ քանի. ախըր ինչ fecisti, սլարոն, քանի որ զուք ինքներդ զզում էք և լազոնում էք որ ձեր գործը թերի է և պակասաւոր և որ զուք ժամանակ չէք ունեցել մասնաւորապէս և ինչպէս հարին է ազդ գործով պարապիլու

<sup>1)</sup> Ալիմինքն՝ պահանջում է:

<sup>2)</sup> Ուզում է առել՝ կատարելութեան մօտիկ լինելու մասին անգամ խօսք չէ կարող լինել.

Բայց գույցէ պ. Եազուբեանի խոստովանութիւնը ինքնազատապար-  
տութիւն չէ ալ մի տեսակ համեստութիւն, ասենք՝ հեղինակական համես-  
տութիւն. այս, ադդ ազգպէս կը լինէր, եթէ պ. Եազուբեանի գործը՝ բա-  
ռարանը՝ ինքը չը գար հաստատելու իւր հեղինակի ասածները թէ՝ «բա-  
ռարան» ունի բազմաթիւ. պակասաւոր կողմերու և թէ՝ «բազմաթիւ բա-  
ռեր, որոնք պիտի վնէին այս բառարանում, զուրա թուրած են»։ Այս  
վերջին խօսքերը հաստատելու համար զիմննք թէկուզ հէնց առաջին երեք  
տառերին, ապատեղ տեսնում ենք բայցակայ օրինակի համար, հետեւել  
բառերը։

Ա.	անսովիւս	Բ.
ազակ	անսովիւս	բազնիք (կամ բազնիս)
ազատածին	աշուզ	բասրանք
ազատաբեր	աշքալուս	բարակ (գուշայ)
ազգակցական	աշքալուսնք	բարդ (ցոցի)
ազգակցարար	աշքակապուկ	բարկացկոտ
ազգապետ	առ (նախողիր)	բարձել
ալ	առոք	բարձած
ալ (ալք)	աստանդական	բարձունք
ախզր (ախիր)	արածացնել	բարձրաբերձ
ախտաբեր	արանք <sup>1)</sup>	բայցաւասուալ
ախտաբոյժ	արար (արար աշխարհ)	բայի
ախտահալած	արազ	բոււ
ակնասլիշ	ափոպրանք	բաւարար
ածխավաճառ	արիգ	բաւարարութիւն
ականակուռ	արհառ	բեկուն
ականաւոր	արժենալ	բեկունութիւն
ականչալուր	արիւնախանձ	բեռնել
ամբարիչտ	արիւնիալել	բթամիտ
ամենօրեաչ	արշին	բիր
ամօթանք	արտասուաթոր	բլրակ
ալդ	արտասուակալել	բլրոտ
ալս (ճնշե)	արտացոցել	բնազդաբար
ալսահար	արտացոլում (ն)	բնազդօրէն
ալսահալած	արքալազարմ	բնորոշ <sup>3)</sup>
անագել	աւագալիախումբ	բոկոտն
անբաւ	աւաղել	բող
անդուլ	աւանակ (կաւանակ)	գ.
անկշտում	աւել (=առաւել)	զազ (արշին)
անլովելի	աւետչէք <sup>2)</sup>	զազանական
աննկատ	ավլոր	

<sup>1)</sup> Ոչ ալն մտքով, ինչ մտքով որ բերւած է բառարանում։

<sup>2)</sup> Համեմատիր՝ բանողէք, կրողչէք, միջնորդ չէք։

<sup>3)</sup> Բառարանումը կաէ բնաւորուց, որ և սխալ է և ամելի քիչ գոր-  
ծածական։

գաղանակերպ	գինեսէր	գործող
գահալէժ	գինեստուն	գործողութիւն
գամել (գամ—մել)	գինելու	գորովագին
գայթակդանք	գիշերագնաց	գորովալիր
գայթել	գիշերախառն	գորովալից
գափսոն	գիշերակերպ	գորովախառն
գալախազ	գիշերամնալ	գորովում (ն)
գգակ <sup>1)</sup>	գիշերահաւասար	գութան
գեղազարդութիւն	գիշերայն	գուժաբեր
գեղանի	գիտակցել	գուժատու
գեղաշուք	գէս	գուժկան
գեղապաճոլճ	գէրուց (գիրուց)	գունագեղ
գեղապանձ (ձ)	գլուսակ	գուսան
գեղեցկաբան	գլուզակ	գչչչալ
գեղեցկաբանութիւն	գլխահան	գռեհկանալ
գեղեցկաբառ	գլխել	գտնել
գեղեցկադիր	գլխատուռ	գրախօսութիւն
գեղեցկանիստ	գլխացաւանք	գրախօսական
գեղեցկահիւս	գնդակակերպ	գրատախտակ
գեղեցկավառ	գնդակաձև	գրարար
գեղեցկատես	գոհունակ	գրբաց
գետնաթաւալ	գողուն	գրկատարած
գերազասել	գողոնի	գրկածութիւն
գերազասելի	գողոն (և գողոնք)	գրկանք
գերազասութիւն	գողոնվի	գրոհ
գերազանձ (ձ)	գոռ	գրոհ տալ
գգգգել	գով (և գովք)	գրոհել
գլուց	գործադիր	գրող (գրողը տանէ)
գժոռութիւն	գործակատար	գրվանքա
գինդ (և գինտ)	գործառնութիւն	գօս
գինեծան	գործասէր	գօսանալ
գինեծանութիւն	գործասիրութիւն	գօսութիւն
գինեթեր	գործատեաց	

Ես չեմ ուզում պարծենալ բոլոր պակաս բառերը լրացրած լինել. դորա համար կը հարկաւորվէր ամելի ժամանակ, քան թէ ինչքան գործ է ածել պ. նաղուբեանը իւր ամբողջ բառարանը կազմելու համար. նոյն խոր պատճառով չենք խօսում մնացեալ տառերի բառարանի մասին, բաց որ ընթերցողը չը կարծէ թէ միւս տառերի տակ բաց թողված բառեր չը կան, կարող ենք մի քանի օրինակներ բերել դէսից-դէսից. հէնց, օրինակ, դէս, դէն, դէսից-դէնից, դէս ու դէն ից խօսքերը ընթերցողը չի գտնիլ ինչպէս և չի գտնիլ հէնց բառը. ուրիշ օրինակներ՝ թէկուզ<sup>2)</sup> առնուազն,

<sup>1)</sup> Կակ առով գտակ, դռով նախազասելի է.

<sup>2)</sup> Գրելու է թէ իուզ և ոչ թէկուզ (լինչպէս որ գրում է պ. նա-

գրժել, էղուց, ինչի (կամ ինչն), խանդավառ, ծիծեռ, հէջ, հէքաթ, հետաքրքրելի, մատզահաս, մեխ, մղեղ<sup>1)</sup>, ելնել, խտիտ, հրէշաւոր, նախշ, շահի (ծ կոպ.) ոսկելար, որմնաղիր, սագ, սազել, սակարկել, սրտաբաց, սրտաճաք, վերկենալ, վէր (==վալը), տեղալ, քուրք և աղն, և աղն:

Ազապէս ուրեմն պ. Եսպուրեանի խստառվանութիւնը թէ «բազմաթիւ բառեր գուրս թողուած են» հաստատվում է, այդ, եթէ պատիւ է բերում հեղինակի անկիղծութեանը և բարեխղճութեանը, պատիւ է բերում անշուշտ նորս բառ արանին:

Բառարանի այդ պակասութիւնը, որը, ինչպէս ասում է հեղինակը, «գլխաւորն է գուցէ», բաց միակը չէ. հեղինակը լաւ դիտէ «որ իւր բառարանը ունի բազմաթիւ պակասաւոր կողմերոյ նա թէն չէ ասում որոնք են այդ պակասաւոր կողմերը, բաց մենք իրաւունք ունինք նոցա շարքում զնել ան զաւուաբանութիւնները, որոնք գուցէ միան Ախալցխափի բարբառին լատուկ լինելով, տեղ են զտել մի բառարանում, որը՝ իւր վերնաղրին նախ, ընդհանուր հաներէնը պիտի պարունակիր: Ես ասացի գուցէ միան Ախալցխափի բարբառին լատուկ, բաց որովհետեւ Ախալցխափի բարբառը Տաճկա-Հալսաստանի բարբառներից մէկն է, ուրեմն այդ բառերը կարող են լատուկ լինել արևնտեան ուրիշ բարբառներին էլ. անուռ ամենազնիւ այդ իրաւունք չէ աավա ալդ բառերին մասնել մի ընդհանուր լեզվի բառարանի մէջ, որի գլխաւոր հիմքը արեկինան գրականականն է ըստ երմութիւն և արեկինան բարբառները պիտի լինէին, եթէ հարկաւոր լինէր: Եւ առհասարակ բարբառներից օգուտ քաղելը բառարանի համար անքան հեշտ չէ, ինչքան թվում է: Իմ կարծիքով՝ բարբառներից մի որ և բառ համելու և ընդհանուր բառարանի մէջ մտցնելու համար հարկաւոր է նախ և առաջ նորն բառը որոնել ըոլոր բարբառներում, գոնեա զլիսաւոր բարբառներում. եթէ ազդ բառը գտնվեցաւ նոցա մէջ, կամ գոնեա նոցա մեծամասնութեան մէջ, ան ժամանակ կարելի է զնել բառարանի մէջ, տալով ալդ բառին զլիսաւոր բարբառի գոնը և արտասամնութիւնը (զորօրինակ արեկինան հաներէնում—արարտեան բարբառի արտաքինը). կամ թէ զիցուք մեղ պակասում է մի բառ մեր գրականական լեզվում. մեղ լայտնի չէ և չենք գտնում գրարառի բառարաններում անգամ. որոնում ենք բարբառներում և անստեղ էլ միան մինի մէջ ենք գտնում. կարող ենք, եթէ անսպատճառ այդ բառը մեղ հարկաւոր է ունենալ և անպատճառ հաներէն, կարող ենք հանել այդ բարբառից և զնել ընդհանուր բառարանում, ան էլ կողքին նշանակելով

դոգեմնը), որովհետեւ կազմւած է հետեւալ երեք բառերից՝ թէ+իւ+ուպ (իս)=թէ կ'ուզ և ապա=թէ կ'ուզ:

<sup>1)</sup> «Ալ ինչպէս զարմանի մղեղ որ քամին ցրիւ է տալ-ո» (գիրք Սագմոսաց, աշխարհ. թարգմ. Բրիտ. ընկեր. 1879 թ. եր. 1):

թէ ալս ինչ բարբառից է ալս բառը: Ահա թէ ինչ տեսակ պիտի օղապիք բառարանն կազմողը մեր բարբառներից: Խոկ ալդ գիտէք ուր կը տանէր, ալդ կը տանէր կը հասցնէր մեզ զգալու ան ահազին պակասը, որ կալ մեր հակական լիզվագլխութեան մէջ. ալդ պակասն է մեր բարբառների համեմատական բառարան չունենալը: Ազդպիսի մի բառարան մի զործ կը լինէր, որ մեծ ծառակութիւն կը մասուցանէր մեր նոր լիզվի շնուրու և խստակելուն. բայց զա ծանր զործ է և չամենան զէսու մի մարզու զործ չէ: Ազդպիսի մը բառարան կարելի է կազմել միան ան ժամանակ երբ մենք կ'ունենանք հաւաքած և ապած հարուստ նիւթեր, երգեր, աւանդութիւններ, հեքաթներ և ալն զանազան բարբառներով և մի և նոն: Ժամանակը ամեն մի բարբառով զրված պիտի ունենալ իւր բառարանը և մի կարճառօս քերականութիւն (Հնչիւնների և ձևերի առանձնակատկութիւնները). ցանկալի կը լինէր, զորօրինակ, որ Գ. Սրուսնձանանը տար մեզ մի բառարան իւր բոլոր զրվածքների (Մանանավ, Գրոց-Բրոց, Համով-Հոռով և այլն), աւելացնելով այնպիսի տեղական բառեր, որոնք նորա ժողովածունների մէջ չեն մտել. ցանկալի կը լինէր որ նոյնը անէր և Ա. Պատկան-Եսանը իւր՝ Նոր-Նախիջևանի բարբառով զրածների համար, ցանկալի կը լինէր, որ մեր ուսումնովները, երբեմն զրոշանոց թարգմանական զրականութեան էաւելից ընկնելու փոխարէն<sup>1)</sup> իրանց մարդինի բարբառով ժողովածուններ կազմէին, կենցազավարական, առասպելարանական և ալն բառերով ու զարձվածներով հարազատացնէին և հնչիւնարանական ու քերականական ծանօթութիւններ աւելացնելով՝ հաստարակէին կամ զիմէին հրատարակելու. Գ. Ազգականցը, զորօրինակ, ահազին զարկ կարող է առաջ թւում է ինձ Ղարաբաղի բարբառի ուսումնասիրութեանը, և թէ իւր ուշադրութիւնը զարձնէր ալդ առարկալի վերաբ: Նոյն ինքը պկ. Խաղուրեաննը աւելի մեծ ծառակութիւն արած կը լինէր հավագիտութեանը, եթէ, առանց պատրաստութիւն, ժամանակ և լաջող հանդամանքներ ունենալու՝ Հակերէն-Խուսերէն բառարան կազմելու տխուր միաբը թողնէր և տար մեզ մի բառարան Ախալցխափի բարբառի. զորանով նա մի մեծ ծառալութիւն արած կը լինէր հակական բարբառապիտութեան ապա և լիզվի ուսումնասիրութեան: «Ձիգ-Ճիգ-Ազումեհօկու», տալիս է պկ. Խաղուրեանը իւր բառարանում: Զը պատահելով արեւելան բարբառներից ոչ մինում, հաւանականարար ենթաղբում ենք թէ ալդ բառը Ախալցխափի բարբառի պիտի լինի. իսկ ուսուերէն ԱՅԱՍԵ-ԱՅԱՍԵ-ը միտըներս ընկնելով, հասկանում ենք ալդ բառի ծագումը: Ակատեղ մարդ ակամակ երեւակալում է թէ լանկարծ մի հանաքչի ուղենար Խոերէն-Հակերէն բառարան շնոել և հետեւալ բառերը դնէր իւր բառարանում:

<sup>1)</sup>) Մենք սական ալդ «զրոշանոց» կոչւած զիգերի արհամարտողներից Շան. Խմլ.

ԱԿԱՊԵ-ԱԿԱՊԵ — հաւկ ձուռ

ՏԵՐ-ՏԵՐ — սադ

ԽՐԵ-ԽՐԵ — խող

Նման չՅՐ ԱԽՆԻԼ արդեօք մեր լառաջ բերած

ՃԻՎ-ՃԻՎ — ԱԿԱՊԵԽԵՐԵ:

Ահա թէ ինչ հետևանք կարող է ունենալ բարբառների հետ անզգուն և աճնառուս վարփելը: Եթէ ընդհանուր լեզվի բառարան կազմողը չ'օգտագի բարբառներից այն եղանակով, ինչպէս վերև ասացի, ալսինքն՝ համեմատաբար և ընտարդարաբ, մենք ոչինչով չենք ապահովված որ այդպիսի բառարաններում չենք անմնիլ այս ահասակ զաւառական կուրիօզներ՝

Ֆոքի, աղաք, իժում, գանա, հըրդօկեպ, ըլըպազտրակ, լըհա, մըհէկի, և ալզն՝ բառեր, որոնք իրանց տեղումը (բարբառների բառարանումը) շատ հետաքրքրելի էն, բայց ընդհանուր լեզվի բառերի շարքումը՝ զգիլու չափ օտարութիւն: Պր. Կաղութեանը մտցնում է իւր բառարանի մէջ Ախալցխամի բառերի ձևեր և բառեր անշուշտ ոչ այն պատճառով որ նա այդ բարբառը մեր միւս բարբառներից աւելի զերազանց է համարում, այլ որովհետեւ, ինչպէս նա ինքը խոստավանում է՝ այդ բարբառը, իւր մալիհնին լինելով՝ աւելի ծանօթ է իրան: Բայց այդ զեռ իրաւոնք չէ տալլս պ. Կաղութեանին ախալցխաման զաւառականութիւններ մոցնել մեր լեզվի բառարանի մէջ, որը հիմնված է զլսաւորապէս արարատեան բարբառի վերաւ, իսկ միւս բարբառների մասին՝ ասել թէ մեր զաւառական բարբառները «զեռ մշակված, անդամ դրի անցրած չեն»<sup>1)</sup>: Եթէ «գաւառական բարբառներ» ասելով պ. Կաղութեանը հասկանում է երկրորդական, երրորդական բարբառները, ալսինքն՝ այն, ինչ որ գաւառաբարբառներ (ГОВОРЫ, подзаречные) ենք անվանում, զուցել մասամբ իրաւացի է. բայց եթէ նա այդ ասելով հասկանում է, որ շատ հսւանական է թվում ինձ, առհասսարակ մեր բարբառները, չարաչար սխալում է. միթէ նա չը գիտէ որ Տիֆլիսի, Երևանի (Արարատեան), Ղարաբաղի բարբառները ոչ միւսն պրի անցրած են, այլ մինչեւ անդամ հարուստ գրականութիւն ունին, իսկ Տիֆլիսինը, բացի հարուստ գրականութիւն ունենալուց՝ մի քանի անդամ հետազոտված է<sup>2)</sup>, ինչպէս և Ղարաբաղինը՝ թէն համառօս կերպով<sup>3)</sup>, նոյնպէս և զօկերէնը, որը թէն գրականութիւն չ'ունի, բայց հետազոտութիւններ ունի:

Ախալցիս է, ինչպէս տեսնում էք՝ բաւականին բարեկաջող՝ գործի դրութիւնը արենելեան բարբառների վերաբերմամբ. ոչ պակաս է նոյնը և արե-

<sup>1)</sup> Յառաջաբան, Երևան VI.

<sup>2)</sup> Հախվերդեան, Պետերման, Տոմսոն:

<sup>3)</sup> Պատկանօն. Աշեֆե, օճ արմ. ճատ.

մաեան բարբառների նկատմամբ<sup>1)</sup>: Ուրեմն ասել թէ՝ «գաւառական բարբառները դեռ մշակված, անդամ զրի անցրած չեն» նշանակում է տեղեկութիւն չ'ունենալ մեր զրականութեան մէջ գոյութիւն ունեցող անպիսի մի խոչոր երևութիւն մասին, ինչպիսին է մեր բարբառավին զրականութիւնը: Բայց որովհետեւ ես չեմ կարող ենթադրել որ պ. Եաղուքեանը լսած անդամ չը լինէ Սունդուկեանցի պիհսաների մասին, Պոօշեանցի վէպերի մասին, Արտվեանի «Վէրք Հայաստանի» մասին և ազն և ազն, մնում է ուրեմն կարծել թէ նորա ասածը մահանակ է միան: Ալ ուզրակի պ. Եաղուքեանը Ախալցխաչի բարբառը՝ իբրև իւր մակրենին՝ գործնականապէս իմանալով, նրանից բառեր առել մտցրել է իւր բառարանի մէջ, իսկ միա բարբառները, չը զիտենալով կամ շատ քիչ զիտենալով՝ զանցաւութեան է տակել ու իրան և ուրիշներին հանգստացնելու համար ասել է թէ՝ նրանք ողեռ մշակուած, անդամ զրի անցրած չեն»: Դորանով միան կարելի է բացատրել որ պ. Եաղուքեանի բառարանի մէջ մտել են անպիսի բառեր, ինչպէս ձիգ-ձիգ, վար, դան, դանը գալ գոցել (ճանապարհը գոցել), զինովն ալ զինովցնել աղուոր, աղուորն ալ (աղուորցնել-աղուորութիւն) ճանչուոր, ճանչուորն ալ (ճանչուորութիւն, ճան, չուորցնել) և ազն, և միենովն ժամանակը չը կայ ճուտ, վէր, հէր, մէր, էս, էդ, էն, էգուց և ազն: Ճուտ բառը, ճմարիս է կալ, բայց նա ըստ Եաղուքեանի բառարանին նշանակում է ճեւենութ (животныхъ); պենեց; սատանի ճոււա—չերտենու, բայց ճուտ իբրև հաւի ճուտ— ցկլենօք չը կայ, մինչդեռ մեր բոլոր արեելեան բարբառներում ցկլենօք նշանակում է ճուտ և ոչ ձիգ-ձիգ<sup>2)</sup>: Յետո՞յ մտցնելով բառարանի մէջ վաչը բառի արևմտեան զաւառականութիւնը՝ վար, հեղինակը չը պիտի մոռանար տեղ տալու նորա արեելեան կերպարանափոխութեանը վէր, ինչպէս և չը պիտի մոռանար հէր, մէր, էս, էդ, էն ձեերը, որո՞նք նուն հնչիւնափոխութեան օրէնքով են լառաջացել ինչպէս և վէր ձեր: ալդ օրէնքն է այս—է, մի օրէնք, որ մնծ ովդ և գործադրութիւն ունի մեր արեելեան՝ համարեա բոլոր բարբառներում, ես ասում եմ համարեա բոլոր բարբառներում, որովհետեւ նոցանից մինը՝ Ադուեցոց բարբառը այդ օրէնքին չէ ենթարկում, այդ չէ փոխում է, ընդհանուր հակերէն հաչը—ազուլ, հաչը, մալր—ազուլ, մաչը, աչծ—ազուլ, աչծ և ազն, և ոչ միան աչ չէ փոխում, ալ անդամ պատրաստ է (ասինքն՝ ընդհա-

<sup>1)</sup> Ալլահվերդեան—Ուլնիա կամ Զէլիուն, Ար. Սեփակեան—Քնար մշեցոց և գանեցոց, Գ. Սրուանձտեան—Մանասէ, Գրոց-բրոց, Համով-հոտով և ազն, Ախտամերկեան+Սիւլիմ (==Դ. Պատկանեան). Տոմսոն—Ախալցխաչի բարբառի հետազոտութիւն և ազն:

<sup>2)</sup> Աչդ բառը, ըստ երևութիւն, կազմւած է ձագ բառից (« փոխած է»), որը կրկնված է:

նուր հակերէնի է-ն) լազնացնում վտխում է այ, օրինակ՝ տէր—ագ, տայր, պէտք—ագուլ, պայտք, ու է ը գոչականից չառաջացած բայը—ագուլ, սուրամը (սիրում եմ), մինչև անդամ թրքական խեր—ագուլ, խայր<sup>1)</sup>։ Զընաւած աշնու ամենանիւ իւր այս լատկութեանը (ըստհանուր հակերէն այս ագուլ, այ և երբեմն ա, ինչպէս ցուց տվի ներքե գուրս բերած ծանօթութեան մէջ) ագուլեցոց բարբառը անդամ չէ տալիս մեղ ոչ վաչը և ոչ վար ձեր, այլ հակառակ իւր ոգուն, տալիս է վէր։ Պարզ է ուրեմն թէ ինչ լան և ընդհանուր գործածութիւն ունի վէր ձեր։ Եթէ վաչը բառի վէր ձեր գաւառաբանութիւն էլ համարվի, դա անու ամենանիւ մի այն պիսի պատկառելի գաւառաբանութիւն է, որ իւր մագր ձեր (վաչը) գործածութեան սահմանը հնացնելու չափ նոյածել է. էլ ինչու մեղ խսրենք՝ ոչ ոք մեղանից չէ ասում՝ վաչը և կ աչգտեղից, այլ ասում ենք՝ վէր և կ աչգտեղից, մինչեւ անդամ գուցի աւելի յաճախ՝ վէր և կ եղաւեղից, ապինքն՝ աչգ ձեր (ինչպէս և աչս, աչն) նոցն վիճակին է հնթարկում։ Ճշմարիտ է էս, էդ, էն, հէր, մէր գործածութեան այն ծաւալը և սահմանը չ'ունին (աչս, աչդ, աչն, հաչը, մաչը ձերի փոխարէն), ինչ որ ունի վէր ձեր վաչը-ի փոխարէն, բայց և աշնապէս աշնքան՝ գործածական են թէ գրականական և թէ առաւել կենդանի խօսակցական լեզվում, որ այդ ձեւերը բառարանի մէջ չը մտցնելը ցուց է տալիս հեղինակի անուշաղութիւնը գէսի լւր գործը. եթէ ոչ պիտի ենթաղրենք թէ նա բառարան է կազմել առանց «Մեղնից շատ տուաջը»-ը անդամ կարպացած լինելու<sup>2)</sup>, կամ թէ երբէք չէ լսած ապալիսի դարձված, ինչպէս՝ հէր օրհնած<sup>3)</sup> մի դարձված, որի մէջ հէր ձեր անդաման նվա-

<sup>1)</sup> Նոյն վիճակին չաճախի ենթարկում է և ընդհանուր հակերէնի է, ալինքն՝ լազնանում այ դառնում, օրինակ՝ միաք—ագուլ, մայոք, միս—մայս, ցին—ցայն, ծիծ—ծայծ և ալին։ Մանրամանութիւնների մէջ չ'ընկնելու համար՝ հետաքրքրողին են ցուց կը տամ «Ագուլեցոց բարբառը» § § 3, 4. խակ ապսեղ կ'աւելացնեմ մրացն որ, չը նախած իւր ապէ հաստատ օրէնքին, ապսինքն՝ ընդհանուր հաէ. այ=ագուլ, այ (մինչև անդամ յաճախ ընդհ. հաէ, և և է=ագուլ, այ), զօկիրէնը տալիս է անու ամենանիւ ոչ աչս, աչդ, աչն, ալ (==էւ, էլի), այլ՝ աս, ատ, ան, ալ, մի երեսիթ, որ լսառվէ արեմտեան բարբառներին։ Արևմտեան տարբի ներկարութիւնը զօկիրէնում մի շատ հետաքրքրական նիւթէ է, որի մասին ես կը խօսեմ մի ուրիշ անդամ։

<sup>2)</sup> Ես ունեմ տանը գերեցիկ մտնեակ.

Առ, էն քեզ լինի, պարզեէ ինձ կեռնք,  
—էն առանց քեզ էլ կարող եմ տառնալ:

<sup>3)</sup> Աւրիշ ացի տեսակ դարձվածներ կամ բարդութիւններ, որոնց մէջ մտնում է հէր, մէր և ոչ հաչը, մաչը, թող մտաբերէ ընթերցողը ինքը։

Ճել է իւր մազր ձեփ տեղը. Եդուց <sup>1)</sup> բաւը, ու. Յաղութեանի համար ան-  
չակտ գաւառականութիւն լինելով, նոյնպէս բաց է թողված. մինչդեռ  
անսպիսի արևմտեան գաւառարանութիւններ, ինչպէս դան, դանը, դան  
աղուոր, աղուորնալ, ելել, ճանչուոր, ճանչուորնալ և աջն մոռացութեան  
չեն արված. ի հարկէ ազդ և զոյա նման բառերը կարող են մանել մեր  
գրականութեան մէջ, առաւել մի այնպիսի ուժեղ գրվ միջոցով. ինչպի-  
սին է Գամառ-Գաթիպաշի գրիչը, բայց թէ այնու ամենաշնիւ մեր զուտ  
արևելեան գրական լիզի և առաւել մեր լուսաւոր հասարակութեան կեն-  
դանի խօսակցական լեզվի նկատմամբ գոքա մնում են արևմտեան գաւա-  
ռարանութիւններ. ամեն մէկը մնալանից կը համարնայ ի հարկէ թէ ինչ է  
նշանակում՝ ճան ապարհ ը գոցել բայց ինքը կ'ասէ ճան ա-  
պարհ ը փակել. մենք հրճանքով կարգում ենք Գամառ-Գաթիպաշի  
և Աս հայ հազին կը ճանչնամամա <sup>2)</sup> կամ «ծուխը ամազի պէս կ'ելլէ ը  
գեպի վեր», բայց էլի մենք ինքառը կ'ասէինք ծուխ է ելնում, ծուխ  
կ'ելնէ ը և այն. գինովնայ գինովնել բառերը եթէ պ. Յաղու-  
թեանը լիանչիւն ձեռվ (զինովնալ, զինովնել) մէջ բերեր ամելի ընդ-  
հանուր կերպարանք տված կը լինէր, և ընդհակառակը՝ մատադահաս  
աւելել բառերի կողքին չը պիտի մոռանար նոյա կարճ ձերը՝ մատ-  
դահաս, աւելել.

Ինձ ծուռ չը համանալու համար, ևս պիտի առեմ թէ՝ ևս այս բանի  
դէմ չեմ բողոքում՝ թէ ինչու աղուոր, ելել, գոյել, քով և ապն զոյա  
նման բառեր մոնել են բառարանի մէջ. վերի ասացի թէ ազդ և զոյա նման  
բառեր կարող են մոնել և մոնել էլ են մեր գրականութեան մէջ և դորանով  
արդէն իրաւունք են ստանում բառարանի մէջ անդ ստանալու. իմ ասելու  
այն է թէ նախ՝ չը պիտի արհամարհնին կամ մոռացութեան արվէին այնպիսի  
բառեր ու ձեեր, որոնք արենելուան գլխաւոր բարբառներին բոլորին էլ միա-  
ժամանակ լաստով լինելով մոնել՝ են լուսաւոր հասարակութեան կենդանի  
խօսակցական լեզվի մէջ և անտեղից՝ զրականական լեզվի մէջ. երկրորդ՝  
ես դէմ եմ միայն գաւառարանութիւնների բառարանի՝ մէջ մոնելուն  
որոնք զուտ տեղապին նշանակութիւն ու բնաւորութիւն ունին և այդ  
պատճառով ընդհանրութեանը խորթ են. օրէնտակ ալէվլիկ <sup>3)</sup>՝ ձիգ-ձիգ և ազն:

Խոկապէս ընթերցողը իրաւունք ունի առաջարկելու որ այս պէպ-  
քում ես չը բաւականանամ և ազն, ով, ալ լառաջ բերեմ բոլոր գաւառա-

<sup>1)</sup> Յառաջացած աէդ (разевѣтъ, үтре) բառից աէ փոխելով է և այդ նշանակութեամբ (за үтре=завтра) ուրիշ ձեստիսութիւն չունի:

<sup>2)</sup> Գոցել և ճանչնալ ասենք բառերի շարքում չը կան էլ. գոց-  
ել պատճառով ենք ճան ապարհ բառի տակ բերված դարձվածներում:

<sup>3)</sup> Հակազգեան բառարանը 2 հատ. լաւելված (Աշխարհիկ բառք ան-  
պիսքը ի զրոց առ մեղ եղելոց) այդ բառը բերում է ալէվլիկ ձետի:

կան խորթութիւնները, որոնք տեղ են զտած բառաշանումը. բայց դա մի այնպիսի առաջարկութիւն է, որը պահանջում է որ ևս մեր լոլոր բարբառները, նոյսա թվում և Ախալցխափնը, դործնականապէս իմանամ, որ ևս չը գիտեմ. կամ թէ հարկաւոր է ձեռքի տակ ունենալ մի անպիսի բառարան, որ խօսի մեր գրականութեան մէջ չը կար էլ համեմատական բառարան հազկական բարբառների. Այդ գործը, ամփոքն՝ բառաջ բերել և որոշել բառարանի մէջ մտած զաւասական խորթութիւնները՝ էլի ինքը պ. Եպուրեանը կարող է կատարել իւր բառարանը երկրորդ անգամ տպագրիելու կամ աւելի ճիշդն ասած չորսանկանը բառարանը կրկին անգամ մշակելու ժամանակը. Այն ժամանակը եթէ նա այդ զաւասական խորթութիւնները դուրս ցցելու չը կ'նի, ցանկալի կը վնչէր, որ զո՞նեա նոյս կողքին փակագծի մէջ նշանակէր թէ այս ինչ բառը ալս ինչ բարբառի է, Յուսան ժամանակը չի մոռանալ նա՝ նախալաշարմունքը մի կողմ թողած, տեղ տալ իւր բառարանում մի շաբք թրքական բառերի, որոնք անդանալի կերպով մտել են մեր նոր լուղի՝ մէջ, օրինակ՝ զօշագ<sup>1)</sup>, եօլա (գնաւը տանել), ախըր, զարդ, հէջ հէք քաթ և ալն. միենոն ժամանակը չի մոռանալ զուրս ցցելու. իւր բառարանից անպիսի շինծու, աշխատական բառեր, որոնք իրանց անդաշողութեամբ ուղած զագալարը չնա արտապատմ. օրինակ՝

բանադատ—литературный критикъ

բանագաւառական—литературно-критический

բանադատութիւն—литературная критика

բանախօս, բանախօսական, բանախօսութիւն տառենարանութիւն  
բանաձև<sup>2)</sup>—формула

բանաձևել—формулировать

բանաձևութիւն—формулирование, формулировка

բանամրցող<sup>3)</sup>—диссертантъ

<sup>1)</sup> Կօչագ—թէն մնանք ունինք նոշանիչ՝ կտրիձ, քաջ, բայց երբ մէկի արտած քաջութիւնը կամ զործի լաւ կատարած լինելը ուղում ենք դովիլ, ասում ենք՝ զօշագ (և այդ մորթի՝ նորա արածը—զօշաթիւն), ոռուերէն մօլուծեց! (զանազանիր մօլուծեցъ):

<sup>2)</sup> Բանախօս, բանաձև բառերի մէջ, առանձին առած՝ բան էլ ենք հասկանում, իսօս էլ ենք հասկանում, ձև էլ ենք հասկանում, բայց պանց միացրած ժամանակը ոչինչ որոշ և պարզ խմաստ չենք սուանում. (Չի կարելի սական չը նկատել որ բանաձև խօսքը աշղին բաւականաչափ ընդունելութիւն է դասձ մեր լիդում. Ծ. Խմբ.):

<sup>3)</sup> Բանամրցող, բանամրցութիւն—диссертантъ, диссер-тантъ, ոռուերէն այս խօսքերի չառաջացյել են լատիներէն գիսսերո բայց, որ նշանակում է՝ մանաւաման քննելը զատկը հետազոտել և մրցելու հետ ոչինչ էրպ չունի, ուղեմն հակիրէնը սխալ է կազմված և ոչ

բանամըսութիւն – диссертациј  
 բառացրում – словоопрение  
 բեմասաց <sup>1)</sup> – декламаторъ  
 բեմасиցական – декламаторескій  
 բեմасиցութիւն – декламація  
 բանաքաղ <sup>2)</sup> – веза опно заимствующій изъ чужого сочиненія  
 բոլորազарդ – бордюръ  
 գումարտակ – эскадронъ  
 գասակ – рота  
 վաշտ – бригада  
 նախերգանք – увертюра  
 ալգերգ – серенада <sup>3)</sup>  
 գեղգեղանք – фioritura և աղջու

Ազդ և զոցա նման բառերը կրում են իրանց վերաէ սխոլաստիկա-  
 կան գարբնոցի դրոշմը, ավինքնա՞ն ան ուղղութեան, որը պահանջում է որ  
 ամեն մի գաղափար անպատճառ հայերէն բառով արտաչափովի. բայց որով-  
 հետեւ չաճախ պատահում է որ մի գաղափար չափնելու համար պակասում  
 է նորա արտաչափուղ բառն հայկական բառը, ապա հարկաւոր է մինել մի  
 նոր խոռք, զանազան բառեր իրար միացնելով կամ մի հին-հին բառի նոր

միան ուզած գաղափարը չէ արտաչափում, առ բոլորովին ավ միտք է  
 չափնում, որ ոչինչ կատ չունի dissero (диссертантъ, диссертациј) բայի  
 նշանակութեան հետ

1) Բ ե մ ա ս ա ց (-ական, -ութիւն) պարունակելով իւր մէջ քեմ  
 բառը, սահմանափակում է դեկламаторъ (-скій, апія) բառի սակելի լսոն  
 նշանակութիւնը. հայերէն վերծանուղը (մերձանութիւն, վերծանել), որ  
 ը կաէ ու. Եաղութեանի բառարանում, թվում է ինձ աւելի արմար է  
 ապէ իմաստը արտաչափելու. Հայկաղեանն բառարան՝ վերծանուղը  
 (լ. anagignosco recognizeo, lego, recito) ընթեռնուլ, որ ըստ լուն,  
 ոճով՝ վերձանաչել. որպէս թէ կարդալ իմանալով. վերծանելի է ըստ են-  
 թաղատովինան, ըստ առողանութեանցն, ըստ արտնութեան. Թր. Քեր-  
 կերծանութիւն է քերթածաց և շաբարաց անվթար լսուաջրերութիւն,  
 Թր. Քեր:

2) Բ ա ն ա ք ա ջ բառի կազմութեան մէջ ոչ մի բան չէ ցուց աալիս  
 ապօրինի քաղլւածք անելու միտքը

3) ա չ գ ե ր զ – серенада բոլորովին սխալ է. սերենада բառը չա-  
 ռաջացել է լսալիներէն serus բառից, որ նշանակում է ոչ առաւու կամ  
 առաւուեան, առ ընդհակառը՝ ուշ տնապան. սերենадա ուրեմն չէ  
 նշանակում աչգերզ, ալդինքն՝ առաւուեան երդ, առ ընդհակառակը՝  
 երեկուան կամ գիշերվաց և օրինակ՝

Отъ Севильи до Гренады,  
 Въ тихомъ сумракѣ ночей,

նշանակութիւն տալով։ Ես չեմ ուզում առել թէ մի նոր գաղափար լայտ-նելու համար անպատճառ հարկաւոր է հենց ուղղակի փոխ առնել առանց դէս ու դէն նաև լու և այդ չէ էլ լինում. մնաք տեսնում ենք թէ ինչքան նոր բառեր են կազմիւլ և մտել հաստատվել մեր լեզվի մէջ այդ բառերը չաջող լինելով՝ զառել են սեպհականութիւն գրականական, լուսաւոր հասրակութեան, անգամ ժողովրդական լեզվի. այդպիսիք են՝ հի ասթափ վել երկաթուղի, հեռադիր և ազն. բաց թէ մտցնել լեզվի մէջ բոնի կերպով անսպիսի բառեր, որ ժողովրդով և նորա լնազդումը չէ ըսդունում, այս նշանակում է ձեր խմասից վեր զասել և առանձին ջանք զործ զնել անհանկանալի լինելու համար։ Անիմասա և շնծուկամական բառերի թվում վիշելու է փաստ—Փակտ, նախարար—Առաջնորդ, ուստի բառերը դոցանից՝ առաջինը՝ չը գիտեմ ինչ թիւրիմացութեամբ, շատերը ուզում են որ անպատճառ եւրոպական ֆակտ բառը նշանակի. զուի բան է կարծես. քանի որ փաստ նշանակել է և նշանակում է պատցուց, պատճառ, պատճառաբան բառը, ինչ հարկաւորութիւն<sup>1)</sup> (որից չառաջցել է փաստաբան բառը), ինչ հարկաւորութիւն կաչ աղաւաղել բառի խմասու և զործանել անսպիսի մի նշանակութեան համար, որ նա երբէք չէ ունեցել. պակասութիւն էք զբամ ֆակտ բառի, կարելի է մտցնել լեզվի մէջ այդ բառը ուղղակի անպէս, ինչպէս նա կաչ ինչպէս այդ արել են եւրոպացիք, որո՞նք մեզանից ոչ պակաս միջոցներ ունին այդ բառը իրանց մայրենի լիզերով ունենալու և անու ամենապնդ փոխ են առել։ Մեր այդ մօքրօցյական պուրիզմն է, որ՝ բացի վերունչեալ օրինակներից, արտադրել է անսպիսի մի անհեթեթութիւն, ինչպէս նախարար—Առաջնորդ է, և պ. նաղուրեանը ոչ միան համաձան է այդ բառի այդ նշանակութեանը, այլ նա այդ բառի իսկականը չը գիտէ անդամ. նորա բառարանը նախարար բառի համար տալիս է միակ նշանակութիւն—Առաջնորդ<sup>2)</sup> և ոչ մի խօսք նորա խկական նշանակութեան համար։ Փորձեցէք ապա այդ տեսակ բառարանի օգնութեան համար լինուի համար, ապազիսի նախադասութիւններ՝ հալոց նախարարները ջարդեցին պարտից զօրքերը. նախարարները իրանց զնդերակ օգնութեան հասան. ճին Հայաստանը ուներ 900 նախարարութիւններ<sup>3)</sup> և ազն։

Раздаются серенады,

Раздается стукъ мечей.

Գումարտակ, գտառակ, վաշա, նախերգամնք, զեզզեզանք  
և ազն, իբրև տերմիններ—կտմապականութիւններ են:

<sup>1)</sup> Տես Հայկապեան բառարան:

<sup>2)</sup> Համապատասխան մտքով էլ, առաջին և ախարար բառութիւններ:

<sup>3)</sup> Նախարարութիւն, ըստ Նաղուրեանի՝ մոնիստերство և միան մինիստերство:

Այս բոպէին բերած օրինակները նախարար, վաստակաց, ազգերդ, վաշտ և ազն բաւերը կամացական և խմաստի ազգաւայրութեանը Արնելով միննուն ժամանակը մեղանչում են պլիստոր նպաստակի զեմ), անհէտառ բառու հետո և զլիստոր) նշանակութիւնը<sup>1)</sup>:

<sup>1)</sup> *Qanawqashin kipku VI.*

2) Старшество (փոխանակ старшинство), բարձրագույն (փոխանակ բարձրագույն) դուռը, և սոցական գործադրություն (փոխանակ սոցական) հաւաքական. է, որ տապագրական սիստեմը լինեն և դեպէ նկատել տապագրական սիստեմիը նույնպէս «քաղաքացիություն» են. միտին նկատված վրիստականքը ցանկը չորս երես է բանում. այդ վրիստականքի ցանկը հենց ինքը սկսվում է սիստեմի՝ սիստեմի

վին թվելը աւելորդ համարելով, անցնում եմ բառարանի «զլիսաւոր» մասին, ալսինքն՝ այն մասին, որ հեղինակի զլիսաւոր նորատակն է եղել.

## ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆՑ

(Կը շարունակեի)

---

փոխանակ պէտք է (կրկնված) և տալիս է մի ծիծաղելի կուրիօղ՝ ըն-էկոնոմիա (սիալ) — (ուղղիր) և Ակոնոմիա (եր. 464):

Մի ուղղագրական նկատողութիւնն. Ամեն անդամ նա հանդիպած ժամանակը չէ կարելի ա շնոր. հարկաւոր է խնամել գոնեա օտար բառերը և չը գրել բեզզաւունակ (փոխ. բեզզաւունակ, տես բառարանում անգատափար բառը). առաել որ անանուն պ. Աազուքեանը գրում է եզ չնունական:

## Սոր սովորած գրքեր

1) Рейнеръ, Плато.—„Новѣйшая русско-нѣмецкая метода для изученія въ три мѣсяца нѣм. чтенія, письма и разговора безъ помощи учителя.“ VIII изданіе. Низшій курсъ Варшава, 1892.

2) ՆԱՐԵԿԱՅԻ, Ա.ՆԱՆԻԱՆ. (Տամներորդ դար): —«Գիր խոստովաճութեան»: Հրատարակութիւն Միաբանի: (Արտասաղած 1892 թ. Արարատ ամսագրից): Վաղարշապատ, Մայր Աթոռի տպարան, 1892 թ., զիննէ 50 կոսէկ:

3) Գրամմական հաշիւ Բաքուալ Հալոց Մարդասիրական Ընկերութեան լանուն Ա. Գրիգոր Լուսաւորչին վասն 1891 ամի և Համառօս հաշւեցուցակ մտից և ելլց Մարդասիրական Ընկերութեան գրադարան-ընթերցարանի վասն 1888, 1889, 1890 և 1891 ամաց:

4) ԼՕՆԳԻՆԵԼՈ. Եւանգելինա: { Փոխադրեց Յար. Ղարագիօվեան, հրա-  
ԴՈՒԷ, Ալֆոնս.—Կոլմարի } տարակեց Բ. Արուշանեան, Թիֆլս,  
դատաւորի տեսիլը: { տպ. Վարդանեանի, 1892 թ., զիննէ 20 կոսէկ:

5) ՊՈՏԱՊԵՆԿՈ, Ի.—«Գաղափարական քահանակ» (На действитель-  
ной службѣ). վեպ: Հրատ. Թիֆլ. Հրատարակչ. Ընկերութեան: № 45.—  
Թարգմ. Տ. Ա.: Թիֆլս, տպ. Շարաձեի, 1892 թ., զիննէ 75 կոս:

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ԱՄՍԻԱՅ ՔՐՈՆԻԿ

Տաճկահակերի մասնակցութիւնը կաթողիկոսական ընտրութեան մէջ, Դարաբաղի թեմի ընտրութիւնները, Աերընտրութիւնների Թիֆլոսում:

Տաճկահակերի մասնակցութեան խնդիրը ներկայ կաթողիկոսական ընտրութիւնների մէջ մինչ վետրւար ամիսը մնացել էր կատարեալ անշատութեան մէջ։ Ազգ մանաւանդ տարօրինակ էր, որ Տաճկահակերը աւելի շատ ձաներ ունին կաթողիկոսական ընտրութիւնների գործում, քան ոռուսահակերը, քանի որ Տաճկահաստանում կան 45 էջմիածնական թեմեր, մինչդեռ Ռուսաստանը ունի միայն 6 թեմ, Պարսկաստանը Հնդկաստանով՝ 2 թեմ։ Խակ լազմի է որ 1836 թւականի Պոլոժենիէլոլ ամեն մի թեմ ունի մի աշխարհական և մի հոգեորական պատգամաւորի ձան։ աշխարհական պատգամարը ընտրում է ժողովրդից, խոկ հոգեորական պատգամաւորը հէնց ինքը թեմական առաջնորդն է։ Հետեւապէս Տաճկաստանը իւր 45 թեմերով մասնակցում է 45 աշխարհական և 45 հոգեորականների, ուղենին միասին 90 ձաներով, ուստահակերը 12 ձանով, Պարսկաստանը Հնդկաստանի հետ 4 ձանով։ Դոցա վերաբ ամշանում են Սինողի 8 անդամների և էջմիածնի միաբանութեան կողմից 7 ձան։ Ասել է թէ կաթողիկոսական թեմածուների ընտրութեանը մասնակցում են 90+12+4+8+7=121 ձաներ թեմերից, էջմիածնի Միաբանութիւնից և Սինողից։ և, ինչպէս անոնում ենք, ալդ 121 ձաների մէջ Տաճկաստանը իրաւունք ունի մասնակցելու 90 ձանսով, որ նունն է թէ համարեա 12 ձանից իննը Տաճկաստանին են։ Արդ, ի ընէ Տաճկաստանի և Ռուսաստանի մէջ տարածանութիւն է եղել Տաճկահամբէրի մասնակցութեան ձեփ մասին։ Պոլոժենիէն ոռուսաց օրէնք է, որը սական ունի մի ջաղազին օրէնքի ընաւորութիւն, քանի որ նա վերաբերում է ազ և ազ պետութիւնների հպատակներին և ոչ միայն ոռուսաց հպատակներին։ Արդ, միջազգապահն օրէնողրութիւն սահմանել կարելի է միայն համաձաննութեամբ բոլոր այն պետութիւնների,

որոնց հպատակներին վերաբերում է այդ օրէնքը։ Մինչդեռ 1836 թւականի Պոլոժենիքն արւած է մի ակողման ի կերպով, հետևապէս նա չի կարող պարտաւոր ի չ լինել Տաճկատասանի հաներին, որոնք Պոլոժենիքի տեղ ունեն իրանց Սահմանադրութիւնը, որը Տաճկահաների Պոլոժենիքն է։ Եւ որովհետեւ ազդ Սահմանադրութիւնն էլ մէջազգալին օրէնք չէ, այլ միաւն տաճկական, ուրեմն մի ներքին և ուրեմն միկրոլի (Տաճկատասանի) օրէնք է, հետևապէս նա պարտաւորիչ չի կարող լինել Ռուսաստանի համար։ Եւ զժւարութիւնը ծագում է հէնց նրանից որ Սահմանադրութեան այն կէտը, որը խօսում է կաթողիկոսական ընտրութեան ձեփ մասին, Պոլոժենիքի համապատասխան կէտից տարբերում է։ Տաճկահաները ողբնդում էին որ, համաձայն իրանց Սահմանադրութիւն, իրանք պէտք է մասնակցին ոչ թէ ամեն մի թեմից լատուկ զորա համար ընտրւած պատգամաւրների միջոցով, այլ որոշմամբ իրանց Ազգալին ժողովի, որը ներկայացուցիչ է բոլոր տաճկահաների և որ իրանք, տաճկահաները, չեն կարող առանց իրանց օրէնքը խախտելու՝ վարմէլ մի այլ պետութեան օրէնքը։ Խակ Ռուսաստանը իւր կողմից չի համաձայնուում այս խնդրում համակերպմալ տաճկական օրէնքներին։

Այդ համգամանքից միշտ խնդիր է ծագել տաճկահաների մասնակցելու և զանանակի մասին, մի խնդիր որ մինչ օրս էլ առկաի է մնացել, բայց որը անկատած պէտք է աշխատել միջազգալին օրէնքով լուծել, որպէս զի անորոշութիւն չը տիրէ ապազալում։ Անցեալ 1884 և 1885 թւականների ընտրութիւններին, զժւարութեան դէմք առնեց հետեւ հեղանակով։ Փոխանակ անձամբ մասնակցելու, տաճկահաները, Ազգալին ժողովի վճռի համաձայն, ուղարկեցին եռանուն մի ցուցակ իրանց որոշած կաթողիկոսացուների, որպէս զի կաթուածնում գումարւած ժողովը, լարդելով տաճկահաներին, այդ եռանուն ցանկը ընդունէ, աւելացնելավ իւր կողմից մի չորրորդի անուն։ և ովքեր այդ չորսից ժողովում ամենից շատ ձաներ կ'ըստանան և ում որ երկու ամենաշատ ձաներ տաշցածներից ուստաց թագաւոր-կապրը կը հաստատէ—տաճկահաներն էլ կ'ընդունեն որպէս օրինաւոր կաթողիկոս էջմիածնում գումարած ժողովը լարգեց այդ առաջարկութիւնը, բայց կարող էր նաև չ'ընդունել այն եռանուն ցանկը որ ուղարկւած էր և. Պոլսից ձիցդ է որ ալդպիսի մի երկարութեան հետևանքները անհաշւելի կը լինէին, և հէնց այդ է որ սախաեց էջմիածնի կաթողիկոսական ժողովին ընդունել տաճկահաներից առաջարկած modus vivendi-ին։

Ռուսահաներիս մէջ կաթողիկոսական ընտրութեան այն ձեւ, որ որոշած է Պոլոժենիքով, աւելի ժողովրդական է եղել. և նուն խակ անկախ օրէնքի պահանջներից, ռուսահաները միշտ աշխատել են որ տաճկահաները թիմական պատգամաւրների միջոցով անձամբ մասնակցին կաթողիկոսական ընտրութիւններին և ոչ թէ այդ զործը կատարեն Պոլսի աղջակին ժողովի միջոցով։ Բայց այդ պահանջը որ, ռուսաց օրէնքի պահանջը լինելով, աւելի

Համապատասխան է կաթողիկոսական ընտրութեան ոգուն, միմիայն այս անդամ իւր ներդործութիւնը ունեցաւ թիւրքիանակերի և Թիւրքիայի կառավարութեան վերաբ, որովհետեւ, ինչպէս ընթերցողները շուտով կը տեսնեն, այս անդամ այնանդ վճռւած է որ ամեն մի թեմից գան էջմիածին մի մի աշխարհական և մի-մի հոգեորական պատգամաւոր:

Ահա դում ևմ ակատեզ է. Պոլսի պատրիարք Խորէն արքեպիսկոպոս Աշրդեանի հրահանդը, լզած Թիւրքիայի բոլոր հաջո թեմական առաջնորդ ներին. Այս դոկտորմենտը ներկապացնում է հետաքրքրութիւն ոչ միայն իւր ամբողջութիւնով, այլ և իւր մանրամասնութիւններով:

«Ինչպէս զիտէք, ամենայն Հաջոյ Հարգապետին Տ. Տ. Մակարակ առաջնորդ վախճանմամբ թափուր կը մնալ Արարատեան Մալք Աթուն ի զահակարին իւրմէ, և ըստ սահմանեալ կարգադրութեանց, ներկա 1892 տարու մայսու ամսով Յ-րդ օրը տեղի պիտի ունենաց ի Ս. Էջմիածին՝ Սրբու Հօրն մերոյ Գրիգորի Կուսատրչի արժանագագանդ բաջորդին ընտրութիւնն աղդովին, և հետեւարար, ինչպէս միւս վիճակներն, սոցնպէս և ձեր վիճակն հրափեալ է մանակցիլ սոյն բնարութեան ի ձեռն եկեղեցական և աշխարհական երկուց պատգամաւրաց, որոց մին էք գուշ իբր ներկապացուցիչ համայն հոգեորական զասու վիճակից, և միւսն՝ աշխարհական ընտրելի է լաշխարհականաց իւր ներկապացուցիչ նոցին:

«Յ-րդ, ներփակեալ առաքելով ձեզ էջմիածնի Խինոդին կողմէ, էանուն վիճակիդ առաջնորդութեան ուղղեալ հրափագիրն, ի մատնակցութիւնն ընտրութեան, կը լանձնարարենք իսու հառու վիճելու անոր պարունակութեան, ի միանց հաղորդեալ ձեզ հետեւալ կարմոր զիտելիքներն:

(ա) Նախ քան զամենան հարկ է, որ վիճակիդ գաւառական ժողովն զումարէք ի նիստ և կարմորն զեկուցանելով ըստ խնատափ ո. Սինոդի ծանուցազրին հրափրէք կրօնասովական ջերմեռանդ ովով և առանց անձնական հարկ է նկատմանց՝ աշխարհական պատգամաւրն ընտրելու:

(բ) Վասն զի ընտրելի պատգամաւրն ի զիմաց վիճականոց պիտի մասնակցի Հարգապետի ընտրութեան, հարկ է որ ընտրեալ վիճի ըստ ամենայնի արժանաւրոք իւր ընկերակին դիրքովը պատւաւոր, վատահելի, բարեբաշտ, ուղղամիտ և միայն եկեղեցւու փառաց և օդափն նախանձանդիր:

(տ) Պատգամաւրին ընտրաւթիւնն տեղի ունենալէ վետով, պէտք է տեղեկադիր մը պատրաստվ ընտրեալն ծանօթացնող, ստորագրեալ գաւառական ժողովով անդամոյ և ձեր կողմէ և միանգամայն ընտրութիւնը ծանուցի ընդ փողթ ազգապին պատրիարքարանիս:

(դ) Այս գործովութիւնն էստու պէտք է պատրաստվիք ընկերակցութեամիւ աշխարհական պատգամաւրին ժամանակին մեկնելու համար ի ո. Էջմիածին, ուր պէտք է անվրէս ներկաւ գտնւիք մայիսի Յ-րդ օրն, որ

է օր ընտրութեան ընդհանրական հայրապետին, Զեր մեկնումն պէտք է ծանուցանէք պատրիարքարանիու:

«Ե) Անհրաժեշտ պատման չէ ի վիճականոց ընտրել անսլատճառ պատգամաւորն, այլ կրնակ ընտրուիլ այլ ուր բնակեալ աղջապին ոք՝ որ ունենակ արժանաց հանգամանքն ըստ բ-րդ չօդամու, Կրնան նաև կանձնվիր սուն պաշտօնն ուրիշ վիճակի կողմէ արդէն ընտրեալ պատգամաւորի մը»

«Ղ) Նթէ արգելք մը պատահի և չը կարողանաք ընտրութեան օրն, որոշեալ ժամուն անձամբ ներկաց զտնվիլ ի ս. Եջմիածին, ունիք իրատւնք ձեր կողմէ եկեղեցական ներկալացուցիչ մը կարգելու և ժամանակին առաքելու զան անդ, ընդ աշխարհական պատգամաւորին, խոկ եթէ անակնունելի զիտրածաւ կամ պատճառաւ իւիք կարելլ չը վիճի ոչ ձեր հոգեոր ներկալացուցին և ոչ աշխարհական պատգամաւորին անձամբ ներկաց զտնվիլ անդ նշանակեալ օրն, ընտրութեան ժամուն, լայնամաս զուրք և աշխարհական պատգամաւորն իրաւունք ունիք զրավ վախոնելու ո. Սինողին ձեր կարծիքն, թէ զորն իւկեղեցականաց աղջիս արժանաւոր կը համարէք հայրապետական վեհատիժան իշխանութեան:

«Ի) Կարեոր է զիտենալ որ բացակաչ պատգամաւորաց գրաւոր կարծիքը կ'ընդունի միան կաթողիկոսական ընտրութեան նախնական զործողութեան պահուն, լորում ներկաց պատգամաւորաց ձանն և լայցակալից զրաւոր կարծիքն լուելէ և ամփոփելէ լետով՝ ըստ առաւելութեան ձանից ընտրելի կը հանդիսանան չորեքին աւաղաղոնքք. Խոկ վերջին ընտրութիւնն տեղի կ'ունենալ միան ներկաց զտնւող պատգամաւորաց ձանիւ և այլ ևս բացակալից կործիքն չը կրնար ընդունիլ և ի հաշիւ առնելի:

«Ուստի պատգամաւորաց անձամբ ներկալութիւնն ընտրական վերջին զործողութեան պահուն անհրաժեշտ է կատարելապէս մատնակցած լինելու համար ընտրութեան:

«Յանձնելով ուրեմն այս զիտաւոր կէտերն ձեր մասնաւոր ուշադրութեան՝ կը հրավիրենք ըստ պարունակութեան ո. Սինողի հրավիրագրուն և շրջաբերական գրուս հարկ եղած զործողութիւնները կատարել փութով և ամենան ինամով, որպէս զի կարենաք ընդհանրական հայրապետի ընտրութեան մասնակցինու ձեր իրաւունքն զործագրել, չօդուս և ի փառս Հայաստանեաց Ս. Եկեղեցւու և հայրապետական սուրբ իշխանութեան»:

«Փորէն պատրիարք Կ. Պոլսու (10 փետրար 1892):»

Ծնթերցողների ուշադրութիւնն եմ դարձնում այդ շրջաբերականի այս կէտերի վերաւ, այն է՝ օր 1) թեմական պատգամաւոր կարող է ընալում ոչ միան թեմի ծխական (Թուրքիակամ զաւառական ժողովի) երեսափոխաններից, այլ և զրաից, 2) մի անձ կարող է թեմական պատգամաւոր ընտրել նաև երկու (արդիօք և ամելի ?) թեմերից («կրնակ նաև կանձնվիր սուն պաշտօնն ուրիշ վիճակի կողմէ արդէն ընտրեալ պատգամաւորի մը»)։ 3) Եջմիածնի ժողովից բացականող պատգամաւորները, մինեն նոքա աշ-

խարհական թէ հոգեորական, իրանց գրաւոր ձախով կարող են մասնակցել չորս կաթողիկոսացուների ցացակը կազմնուամ, բայց չնա կարող գրաւոր ձախով մասնակցել վերջնառկան քւէարկութեան:

Արդեօք շրջաբերականի այդ կէտերը համաձան են ս. Ախնողի տասծ հրահանդին և ուրիմն ընդհանուր են նաև մեզ համար, այդ չգիտեմ: Յամենահն դէսս սիէտք է ասած որ Պոլսի Հայոց պատրիարքարքարանը աւելի որոշ շրջաբերական է ուղարկել առաջնորդներին, քան էծմիածնի Ախնողը՝ մեր թեմուրի առաջնորդներին: Եթէ ս. Ախնողը նոչքան որոշ հրահանդ լինէր տւած, Կարաբաղի թեմական պատգամաւորի ընտրութիւնը, որ նշանակած էր այս փետրւարի 14-ին, չեր խանգարվէլ այս հարցի պատճառով թէ արդեօք դրախից մարտ կարող է ընտրուել թէ ոչ: Որտէս երեսում է Պոլսի պատրիարքի շրջաբերականին, թեմական պատգամաւոր կարելի է ընտրել ներսից թէ դրսից, ում որ կամնանան:

Կարաբաղի թեմական պատգամաւոր ընտրելու հրաւիրած ծխական երեսվուխների ժողովը զբաղւած է նվել երկու սիրքնական խնդիրներով: 1) կարելի է արդեօք որ մի քանի երեսվուխներ իրանց ձախով մէկին հաւատան, և 2) կարելի է արդեօք թեմական պատգամաւոր ընտրել նաև ոչ այդ ժողովի անդամներից: Առաջին խնդիրը չարտացյել է այն առիթով որ, ի միջի ալլոց, Նույտւակ վիճակի 12 ընտրւածները իրանց ձախները հաւատացած են ևդեւ նոցանից մէկին, անոնքս որ այդ մէկը պէտք է իրը թէ 12 ձախ ներկալացնէր: Ես չգիտեմ, ինչպէս կը նույն բարձրագուն հոգեոր իշխանութիւնը այդ հարցի վերաբ բայց ես գտնում եմ, որ ընտրողական միլունքին հակառակ է թուզ տալ որ մի անձն, մասնաւանդ երբ նա ինքը չի ընտրւած այս դէպքում 12 եկեղեցական-ծիսկան մողովդներից, կարողմանակ 12 ժողովակների անունից խօսել: Անէ, միւս 11 ընտրւածները չեն ուղեցել իրանք օգտական հաւատից, որ իրանց ընտրւած ժողովըները ունեցել են դէպի նոցա, այդ միահն նշանակում է թէ այդ ընտրւածները խստավանում են իրանց անարժան վիճելը ժողովրդի հաւատը վակելելու բնական է արեմն, որ մի հոգի չպէտք է այս դէպքում ներկալացնեցիչ համարւի 12 հոգու: այդ անթողլատրելի է:

Բայց այլ իմադիր է թէ արդեօք կարող են գրաւոր կերպով իրանց ձախով ուղարկել ընտրւած ծխական երեսվուխները, թէ ոչ: Սա աւելի բարդ ինդիր է, քան առաջինը: Պէտք է կարծել, որ երբ մի ժողովուրդ մէկին ձախսաւոր է ընտրում, այդ մնում է նա այն համոզմունքով որ նա մի որոշ դէր կառարէ թեմական ընտրութեան գործում, համաձան նորան ընտրած ժողովիցի տրամադրութեան՝ ունենալ այս և ոչ այն մարդուն որպէս կաթողիկոս: Այդ գերը մի ձախսաւոր կարող է կատարիլ նաև հեռւից, գրաւոր կերպով միան այն ժամանակի, երբ նա հաստատ իմանում

լինի թէ ովքեր են առաջարկելու թեկնածուներ թեմական պատգամաւորութեան համար, և եթէ ազդ թեկնածուների անունների հետ կապւած են որոշ կաթողիկոսացուների անունները Արդ այդ պահմանը չի կարող կատարել տմնն անզամ, քանի որ դա մեծ մասամբ նոցն խակ ժողովի մէջն է որոշում: Ընդհանուր առմամբ ուրեմն, նպատակագրամար ընտրութիւններ կարելի է կատարել աւելի ան զէպքում, երբ ձախուսորը ժողովումն է և ոչ երբ հեռւից է զրաւոր ձախ տալիս:

Բայց ազդ անսակէաը չի կարող մըակ վճռողական լինել այդ խնդիրը լուծելու համար: Ծխական ամեն մի երեափոխի ձախնը շատ փոքր նշանակութիւն ունի ընդհանուր ընտրողական գործում, ամրագլ Ռուսաստանում ընտրած են թերեա մինչ 300 ծխական ձախուսորներ Յ թեմական պատգամաւորներ ընտրելու համար, ալտինքն մի ձախաւոր ունի միջին թուղթ  $\frac{1}{50}$ -իրորդական ձախն: և որպէսնեա մի թեմական պատղամաւորը Եջմիածնի ժողովի մէջ ունի ընդհանուրի միաւն մօս հարփերուրդ ձախնը, ուրեմն մի ծխական երեափախի նշանակութիւնը կաթողիկոսական ընտրութեան գործում հաւատար է  $\frac{1}{3000}$  շատ անհշան մօսին: Խարելի է արդիօք պահանջել աչս զէպքում այն խստութիւնը, որ ամեն ձախաւոր ինքը անձամբ ներկայ գործուի պատղամաւոր ընտրելու ժողովին? Ես կարծում եմ որ ալդքան խստութիւնը ներկայ զէպքում ամելուրդ է: և այդ անսակէափախ պէտք է թողլ տալ որ ձախն կարելի լինի նաև զրաւոր կիրապով տալ: Ազդ անսակէաը զործնականի վերադ է հիմնուում, մանաւանդ մի երկրում, ուր հաղորդակցութիւնը այնքան էլ հեշտ չէ և մանաւանդ ածան չէ: Եթէ մինք չենք ուզում որ զլիսաւոր քաղաքներից հեռու մինակները ծախքերից վախսենալով տախաւոծ լինեն ընտրել ծխական երեափախիները այն զլիսաւոր քաղաքների ընտիկիչներից, և ուրեմն եթէ ուզում ենք որ այդ հեռու վիճակներում ժողովրդին իրան ծանօթ մարդիկ բնարեն, ապա ես կարծում եմ որ պէտք է թողլ տալ թեմական պատղամաւոր ընտրելու զործում նաև զրաւոր կերպով գործել:

Պարաբազի թեմում բարուցւած միւս ինդրի վերակ ծանրանակ չարժէ: շատ ընական է որ ժողովականները պարտաւոր չին միաւն իրանց միջից ընտրել, այլ կարող են ընտրել պատղամաւոր և ուրա կանդիպատ ում և ցանկանուն:

---

Խմ անցեալ տեսութեան մէջ ես խօսեցի կաթողիկոսական-ծխական ընտրութիւնների մասին Թիֆլիսում, միանդամակ անտես առնելով այն չամառ կերպով կրկնող լուրը, թէ իբր Թիֆլիսի թեմական առաջնորդը անվաւեր է համարել փետրարի Զ-ին կատարւած ընտրութիւնները Ա. Լուսաւորիչ և Եջմիածնեցոց, ուրեմն երկու եկեղեցիներում: Բայց բանից նրեաց, որ այդ լուրը ստուգ էր, անպէս որ փետրարի Զ-ին ծխական ընտրութիւններ

կատարեցին ոչ միայն այն երկու եկեղեցիներում, ուր ընտրութիւններ դեռ ևս չէին կատարել այլ և այն վերը վիշտած երկու եկեղեցիներում, ուր ընտրութիւնները արդէն կատարւած էին:

Դէ այժմ ևս ամենորդ չեմ համարում վիճելի դարձրած ինդրի մասին մի երկու խօսք առել, քանի որ չեղած տեղից խնդիր է ծագել, խնդրից էլ գործ և մինչի անդամ լուրջ գործ, որը թերես եղակի է մեր եկեղեցական վարչական տարիզրութեան մէջ:

Անա թէ ինչումն է խնդիրը: Փետրարի 2-ի ընտրութիւններից էւստով, թեմական առաջնորդին երկու վիշտած եկեղեցիների ծխականների մի մասի կողմից բողոք է դուռմ, թէ իրը այդ ընտրութիւնների ժամանակ գեղծումներ են կատարել, և ահա նոքա խնդրում են որ այդ երկու եկեղեցիներում ընտրութիւնները նորից կատարվեն:

Բայց փաստը ոտք է, որ այդ նոյն եկեղեցիներում կատարւած ընտրութիւնները օրինաւոր են ճանաչել նոյցա նախաղահող քահանաները, որոնք ևս ստորագրել են ընտրութեան թուղթը, որպէս ստորագրել են նաև ընտրող ծխականների ահագին մեծամասնութիւնը: Վուսաւրիչ եկեղեցու ծխականներից բողոքովներ եղել են ընդամենը երկու հոգի, խոկ Նջմիածնեցոց եկեղեցուց մինչ 70 հոգի: Թողնենք մի առժամանակ թէ ինչ բարուական և իրաւական արթէք ունեին այդ բողոքները, ես կը վերադառնամ զրանք կարենուր և իմանալ, որ նոյն այդ եկեղեցիների ծխականները և մի քանի հարիւր այլ մարզիկ, որոնք այդ ընտրութիւնները քահանկուց վաստ հետեանքներ էին նախատեսնում, հարկ համարեցին զիմել Նջմիածնի Սինոդին: Այժմ մենք հաստատ կիսունք, որ Սինոդը հաստատել էր Թիֆլիսի սրբ առաջնորդին այդ երկու եկեղեցիների ընտրութեան վերաբերեալ թղթերը իրան ուղարկել նոյցա քննելու համար և վնարմատութիւններ առաջմ չը կատարել: Բայց սրբ առաջնորդը ուղարկելով թղթերը Նջմիածնին, կարգադրեց կատարել վերճնորդութիւններ այդ երկու եկեղեցիներում, այդ մասին լավարաբելով տեղական մի քանի թերթելում:

Ականեղ զաղափառների շփոթութիւն կառ որ պէտք է պարզել: Աթէ Սինոդը ուղղակի՝ միջամատէր ընտրուղական գործերի մէջ և ինքը ուղենար կտրոգարբել ընտրութիւնների գործը, նշանակելով ընտրութիւնների օրերը, և ընտրմբու եղանակը, —այդ կը նշանակէր առաջնորդի զլիսի վրանով ուղենալ գործել: Այդ կը նշանակէր ուղղակի միջամատէ առաջնորդի գործերի մէջ այն իրաւունքների սահմանում, որոնք օրէնքով թէ առանդութեամբ թեմական առաջնորդներին են լատկացրւած: Բայց Սինոդը ներկաէ զէպքում ամեննեին աղքան հեռուն չի դնացել. Սինոդը ընդունելով մի քանի հարիւր ընտրաղների ստորագրութիւններով մի բողոք թեմական առաջնորդի գէմը ուղեցել է իմանալ թէ որքան հիմնաւոր են ան գեղծումները: որոնց վերաէ հիմնւելով թեմական առաջնորդը քանդել է ուղում կատարւած ընտրութիւնները: Զէ թէ բարձրագուն հոգեւոր իշխանութիւնը վերջ

ի վերջոյ պատասխանառու է ժողովրդի իրաւունքների համար, և նա չը կարող չը հսկել որ այդ իրաւունքները չը խախտեն։ Խակ օրինաւոր ընտրութիւնը քանդել—այդ նշանակում է վիրաւորել ժողովրդին։ արդ, օրինաւոր է եղել թէ չէ—ահա թէ ինչ է ուզեցել իմանալ Տեղակալը և Արքողը։ եթէ սինողը համոզէր թէ ընտրութիւնները օրինաւոր են կատարմէլ, բայց ո, առաջնորդը անու ամենայնիւ չի էարգել կատարւած եղելութիւնը, ապա բնական է որ և բարձրագուն հոգեոր իշխանութիւնը չէր կարող սառնապատվեամբ վերաբերել դէպի հարիւրաւոր մարդկանց բողքը, քանի որ ներկայ դէպօռամ բողոքը ուղղած էր առաջնորդի դէմ, մի իրաւունք, որ չի կարելի ժողովրդից խլեր

Ինձ հաստատ բացնի չէ վետրւարի 2-ին ընտրութիւնների դէմ թեմական առաջնորդին տասծ բողոքների բովանդակութիւնը երկու եկեղեցիների տժգո՞ն ծխականների կողմից։ Օրինակի համար «Նոր-Դար»-ը սաստիկ բողոքեց Ս. Լուսաւորիչ եկեղեցում վետրւարի 2-ին կատարւած ընտրութիւնների դէմ թեմական առաջնորդը չարգեց երկու բողոքների խնդիրը նորից ընտրութիւններ նշանակելով այդ եկեղեցում։ Եւ ինչ զուրուեկաւ Ան, որ վետրւարի 23-ին ընտրութիւններին Ս. Լուսաւորիչ եկեղեցում ժողովուրդը չհամաձայնեց երկրորդ անգամ ընտրութիւն կատարել, էջմիածնցոց եկեղեցում, ուր վետրւարի 2-ին մասնակցեցին աւելի քան 150 հոգի ծխականներ, նոյն «Նոր-Դար»-ը պաշտպանեց բողոքողների դատը և հետևանքը ան եղաւ, որ վետրւարի 23-ին նոյն այգեկեղեցում կատարւեց վերընտրութիւն 19 թէ 18 հոգու մասնակցութեամբ, մինչդեռ 97 հոգի ծխականներից ստորագրեցին մի այլ թուղթ, ուր բացատրւած է իրանց չմասնակցելու շարժառիթը։ Միթէ պարզ չէ, որ եթէ բոլոր ներկայ եղող ծխականները մասնակցեին այդ վերընտրութեանը, ընտրւածները նոյնը կը վենէին ինչ վետրւարի 2-ին?

Տեսէք թէ ինչ խոփշակութեամբ են ընդունում և կրկնում նորա Էավ-կացք լրագրի ան մի լուրը, իբր թէ Մելգանի Ս. Գէորգ եկեղեցու ընտրութիւնների դէմ էլ բողոքներ են պատրաստում տալ։ Զի նշանակում այդ արդիոք խաղաղ ժողովը իսպանական ան անդամութեամբ մասնակցեցին անոնց առաջնորդի անը պատրաստում է վերընտրութեանը, ընտրւածները նոյնը կը վենէին ինչ վետրւարի 2-ին։

Կաթողիկոսական-ծխական երկրոխների Արացուցիչ ընտրութիւնները Թիֆլիսում։

Վետրւարի 26-ին ընտրւեցին։

Մէջմանի ս. Գէորգ եկեղեցում՝

Պ. Պ. Արշակ Բաղդասարեանց,

Կալւապետ Բարսամեանց,

Ալեքս. Խուդակելովեանց։

**Նաւթլուխի ս. Գեորգ Եկեղեցում՝**

Արշակ Տէր-Գրիգորեան

Յովհ. Ապենդերեան

Յովհ. Լոռիս-Մելիքեան, բժ.:

Թիֆլիսի թեմի գործակալութիւններում ընտրւածներն են հետեւեալ-  
ները.

**Ավալցիսայում՝**

Տէր-Գրիգորեան,

Բուգուղեան,

**Ավալքալաքում՝**

Զ. Առւանեան,

Ա. Գրիգորեան,

**Գորիսում՝**

Յովհ. Ալիխանեան,

Բժ. Զ. Տէր-Մինասեան:

**Աղնաթում՝**

Գէորգ Բայինջաղեան,

Յակոբ Փիլիպեան:

**Կուշեթում՝**

Մզարէուլեան,

Յովհ. Մարտիրոսեան:

**Շուշաներում՝**

Ա. Պառաւեան,

Տէր-Ջօղոսեան:

**Թելաւում՝**

Թալթուղեան,

Շահվերդեան:

**Զալալ-Ցղում՝**

Խան-Աղեան,

Տէր-Գաւթեան:

**Վազախի առաջի մասում՝**

Յ. Ալիխանեան,

Գեներալ Վարչամեան:

**Վազախի երկրորդ մասում՝**

Յ. Տէր-Աստւածատրեան,

Խոժեներ Նարալեան:

**Գանձակում՝**

Ն. Տէր-Ներսէսեան,  
ԲԺ. Թեմուրեան:

**Սուխումում՝**

Կարապ. Կամսարական,  
Գէորգ. Մուրադեան:

**Քութայիսում՝**

Յ. Մուրադեան,  
Ա. Ծատուրեան:

**Արդեինում՝**

Ս. Ազնառուրեան,  
Մ. Ազնառուրեան:

**Կումիսում՝ առաջին անդամ՝**

Լին. Ղորղանեան,  
Նիկ. Տէր-Ղենդեան:

**Երկրող անգամ՝**

Արշակ Սպարապետեան,  
Գաւիթ Դաւթեան:

**Թուապսէում (Սև ծովի շրջան)՝**

Յովհաննէս Իռութինեանց,  
Համբարձում Լոփիածեան:

**? բարեկարգութիւնից՝**

Յովհաննէս Բաղալեան,  
Արզուման Վարդանեան:

Սարտի 8-ին կակացած Թիֆլիսի թեմի պատգամատր ընտրելու ժողովի մասին ընթերցողներին լրում եմ ներկայ համարի վերջը:

ՀՈՒՍԻՆԻ

ԵԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԵՒ ՄԱՆԿԱԿԱՆ-ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆ

Մեր ընթերցողներին արդէն լաւաճի է որ թիֆլատում մօտ երկու սարի է զոլովթիւն ունի Միքայէլեան կամուրջի վրայ Հայոց Եժանագին Գրադարան<sup>1)</sup>, որը, ինչպէս հաստատ աղբւրփից լսել ենք, շուտով կ'ունենալ կ'ընթերցարան: Այդ վերին ասախճանի համակրելի հաստատութեան նշանակութեան մասին մի անգամ խօսած լինելով այժմ խոլս կը տանք կրկնութիւններից և կ'աշխատենք, որքան հանգամանքները ներում են մեզ, ծանօթացնել նորա անցնալ տարւակ գործունելութեան մի քանի կէտերի հետ և այն մի քանի խնդիրների որ ծագում են այժմ:

1891 թվի լունարի 1-ից մինչև 1892 թվի լունարի 1-ը դրադարանից օղտել են 580 բամանորդ, որոնցից համարեա  $\frac{2}{3}$  գաւառացիք էին, խակ մնացածները թիֆլուսներից միայն 80 հոգի էին իզական սեռից: Որպէս զի աւելի պարզ լինի թէ մեր հասարակութեան ինչ խամբի ընթերցասիրութեան պահանջներն է լրացնում իւր գոլութեամբ այդ գրադարանը՝ մենք առաջ կը բերենք բամանորդների ամելի մանրամասն ցուցակը.

ԱԲԱԿԱՆ ՍԵՐԻ

1. Աշակերտաներ . . . . .	294	հոգի
2. Գործակասարներ . . . . .	59	"
3. Արհետուաւորներ . . . . .	41	"
4. Վաճառականներ . . . . .	33	"
5. Ծառաներ . . . . .	19	"
6. Առանց պարապմուճքի երիտասարդներ . . . . .	14	"
7. Մանր պաշտօնեաներ . . . . .	10	"
8. Մշակներ . . . . .	8	"
9. Դերասաններ . . . . .	6	"
10. Ռառուցիչներ . . . . .	5	"
11. Ռւաճնողներ . . . . .	4	"
12. Կառապաններ . . . . .	2	"
13. Քահանակ . . . . .	2	"
14. Ֆելչներ . . . . .	2	"
15. Զինուոր . . . . .	1	"
<hr/>		
Ընդամենը . . . . .	500	հոգի

1) Տես «Մուբան» 1890 թ., № 12, եղ. 1636 - 1645.

## Մ Ա Կ Ա Ն Ս Ե Բ

1. Աշակերտուհիներ . . . . .	33 հոդի
2. Օրիորդներ . . . . .	29 "
3. Կանագք . . . . .	16 "
4. Վարժուհիներ . . . . .	2 "
<b>Ընդամենը . . .</b>	<b>80 հոդի</b>

Խնչպէս տեսնում էք օղտողների մեծ մասը (56%) սովորողներ են, այն էլ այնպիսի ուսումնաբարաններից, ուր համարեա բացառապէս չքաւոր ծնողների զաւակներ են ուսանում, այսինքն Ներսիսեան զպոցից, Միքաչ արհեստատրաց, քաղաքացին, հաջոց ծխական, տեխնիկական և արդերանական ուսումնաբաններից, Երկրորդ տեղն են բոնում գործակաստարներ, արհեստատրներ և վաճառականներ (23%), Անըն բերած օրիորդ և կին բաժանորդների թիւը (8%) գլխաւորապէս կազմւած է նոյն դասակարգի աղջկերանցից և կանանցից: Շատ քիչ են ընթերցողներ ծառաներից, կառապաններից և առհասարակ անտեսապէս ամենասոր վիճակի մէջ զտնւող խաւերից, և զարմանալի էլ չէ. այդ խաւերում գրագիտութիւնը շատ քիչ է տարածւած. տնտեսական իշխառութիւնը միացն մարզուա Փիզիկականի վրաէ չլ ազդում, ալ և նոյնուու ու մտքի վրաէ են ծանրանում: Տնտեսապէս լաւ պահմաններում գտնւողներից և ինտելիգենցիալից բաժանորդներ համարեա չը կան: Պատճառը համկանալի է. նախ՝ գրանք միջոց՝ ունին ձեռք բերել այն մի քանի տասնեակ գրւածները որ կան մեր արդի զրականութեան մէջ և երկրորդ՝ որ խկապէս շատ քիչ մտաւոր մնունդ կաէ նրանց համար մեր ընթերցանական գրականութեան մէջ. խկ նոքա, որոնք մատնադիտական աշխատանքների համար կ'ուղենացին օղտեւէ այդ զրագարանից՝ ի հարիէ շատ քիչ բան կը գոնէին անսուրեղ, քանի որ նորա նպաստակը բորբոքին ալ է: Մասնագիտների պահանջներին կարող էր գոհացում տալ մի ընդարձակ, ճոխ հակական գրադարան, որի մէջ ամփոփած լինէին ոչ միացն հաջոց հին և նոր ամբողջ գրականութիւնը՝ ալ և ան բոլոր օտար զիտնական աշխատութիւնները, որ հաղղվասութեան և արենագիտութեան են վերաբերում: Այդ տեսակ հիմնարկութեան մասին շատ խօսեց Կ. Հ. Բարեգործական Ծնկերութեան ընդհանուր ժողովում մի երկու տարի առաջ, սկզբունքով ընդունւց առաջը. և չատկացրեց տարեկան չափունի գումար, խկ գործի իրականացումը թաղւոց և նոր դեսի ալիքներում...

Եշանագին գրագարանի բաժանորդագինը ացնքան չնչին է, ամսական 20 կոպէկ, որ մատչելի է ահագին մեծ ամսանութեան, խկ որոնք այդ էլ չեն կարող վճարել ձրի են օղտուամ: Բայց մատչելութիւնը գնի կողմից գիւռ բաւական չէ որ ընթերցանութիւնը աւելի խոր արմաններ դցի և աւելի լայն կերպով տարածւի: Դրա համար հարկաւոր է, որ

գրադարանը տաէ բաւականաշափ առատ և առողջ մտատր մնունդ է որ նա հարուստ լինի ընթերցանութեան գրքերով, մի պահանջ, որ կարելի է դնել մի հասարակութեան, ազգի առաջ և ոչ մի հաստատութեան որ ունի ան, ինչ գոլովթիւն ունի իւր աղքատիկ մակրինի գրականութեան մէջ: Մի տասը կամ տասն և հինգ տարի առաջ ազնքան սակաւ էին մեղ մօտ ընթերցանութեան գրքեր որ եղած պաշարը հազիւ մի երկու շաբաթւաց նիւթ տար ընթերցողին: Ազդ ժամանակամիջոցում թէև ընթերցանութեան գրքերի թիւը զգալի կերպով աւելացիւ է, բայց անու ամենանիւ ազդ թիւը գեռ չառ է չնշն: Կարելի է ասել որ Էժանագին Գրադարանում ամփոփւած է մեր արդի գրականութեան բոլոր հարստութիւնը և բանից ինչէ զուրս գալիս. եղած չ'եղածը ինչ որ կարող է առաջարկել մեր նոր գրականութիւնը իւր ընթերցողներին—մօտ 770 անուն գիրք է, որոնցից կարդացում են 400-ը, իսկ մնացածները կամ այնքան են հետաքրքրում, որ ցանկացող չը կաէ նրանց բաց անելու կամ եթէ լամարձակներ պատահում են՝ զրանց թիւը 2—3-ից աւել չէ լինում: Քանի որ գործերի զրութիւնը ալս է, հասկանալի է թէ որչափ նպատակավարմար է ձգտումը Հրատարակչական Ընկերութեան կամ մատնաւոր ձեռնարկողների կողմից՝ ճոխացնել ընթերցանակսն գրականութիւնը:

Մանկական-պատանեկական գրքերից, ինչպէս ցոյց է տալիս էժանագին գրադարանի անցեալ տարւակ փորձը, աւելի կարդացում են Հոգմանի, Շմիդտի, Աղակեանի, Վաչետիչի, Ժիվ-Վերնի, Անդերսէնի, Աւենարիուսի, Բիչէր Խտոսի, Ամիչյուսի և Ալֆոնս Գողէի գրւածքները: Մեր գրականութեան մէջ հազիւ 100 գիրք կարելի է հաշմել մանկական—պատանեկական ընթերցանութեան համար: Կորչ քննադատութիւնը գուցէ ազդ թիւը գեռաւելի ևս պակասուցնէր: Մանկական-պատանեկական ընթերցանութեան զրքերի մի «քննադատական ցուցակի կամ ուղեցուցիր» պահանջը շատ զգացում է մեղ մօտ, ոսկան զրա կազմելը վեր է մի անհատի ուժերից: մնում է հաւաքական ոգերազ զուկս բերել ազդ գործը: Դիտողութիւններ թէ ինչպէս է կարդացում, և հասկացում մի զիրք, ինչ ապաւրութիւն է թողնում, որքան չարմար կամ անցարմար է նա՝ աւելի միջոց ունին անելու մեր ուսումնարանների ուսուցիչները և վարժուհիները, որոնք, իբրև ուղղեցոց ազգին դիտողութիւնների, կարող են աչքի առաջ ունենալ Խարկովի իդական կիրակինորեակ ուսումնարանի վարժուհիների հոչակատր «ՊԵՏԱՏԱՅ ԿԱՐՈԴՅ?» աշխատաւթիւնը: Մանկական—պատանեկական ընթերցանութեան գրքերի մասին ազգային նիւթեր աւելի հեշտ է հաւաքել ուսուցիչներին, և վարժուհիներին, որոնք միշամօտ շիտում ունին բազմաթիւ սովորողների հետ: Զանազան կադմին հաւաքած անդիկաւթիւնները և դիտողութիւնները կարող են ուղարկել մի խմբի, անձի, խմբագրաւթեան կամ հիմնարկութեան համեմատելու, քննուելու, խմբագրւելու և հրատարակման և հարկէ

աւելի լաւ կը լինէր որ մի խումբ ուսուցիչներ և վարժուահիներ հէնց իրանք ձեռնարկէին այդ գործը:

Խնչ վերաբերում է չափահասների ընթերցանութեան գրքերին՝ նոցա նիւթն էլ բաւական սահմանափակ է։ Ահա մի տարրամ զլիսաւորապէս ինչ գրքեր են կարդացւել:

Ը ա ֆ ֆ լ՝	6 օրինակ Վայծեր . . . . .	վերցրւած է 113 անդամ
3	Գուշիթ բէզ . . . . .	» 97 »
4	Վարարապի աստղագէտը . . . . .	» 94 »
3	Զալալէղղին . . . . .	» 93 »
4	Խենթ . . . . .	» 91 »
2	Խաչագողի իշտառակարանը	» 85 »
3	Սամուել . . . . .	» 84 »
2	Ոսկի աքաղաղ . . . . .	» 62 »
8	Փունջ . . . . .	» 56 »
2	Մինը ակտոր միւսը աշնովէս	» 50 »
1	Խամսալի Մելիքութիւնները	» 36 »
2	Հաղ կինը և հաղ երիտաս.	» 34 »
2	Պարուր Հայկաղն . . . . .	» 33 »
1	Վարիք Մշեցի . . . . .	» 19 »
1	Ճանապարհ Թիֆլ մինչև Աղուլ.	» 13 »
Ծերենց՝	Թէսպորս Ռշտունի. . . . .	» 62 »
3	Թորսս Լեռնի . . . . .	» 60 »
1	Երկունք . . . . .	» 38 »
1	Կաթողիկոս. և Խրիստան հայրիկո	» 7 »
Աղաքեան	Արեգնազան. . . . .	» 65 »
2	Արութիւն և Մանուել.	» 55 »
3	Երկու քոյլը . . . . .	» 35 »
3	Անահիտ . . . . .	» 20 »
1	Բանաստեղծութիւններ	» 20 »
4	Էօրք Անդեղ.	» 12 »
Պռօշեան	Յահէն . . . . .	» 47 »
1	Բղդէ. . . . .	» 43 »
3	Ցեցեր . . . . .	» 40 »
2	Կռուածաղիկ.	» 34 »
2	Սօս և Վարդիթեր . . . . .	» 31 »
2	Հացի խնդիր . . . . .	» 21 »
1	Աղասի . . . . .	» 8 »
Եփրկանգաղէն	օր. Զուր Կոչեր . . . . .	» 62 »
3	Արամիին . . . . .	» 56 »
3	Խնամասար . . . . .	» 38 »

2	»	Գործակառարի լիշտակարանը	33	»
2	»	Նամուս.	29	»
Պարոնեան՝ 2 օր.	Մեծապ. մուրացկաններ (օպոստ. ամսից)	40	»	
1	»	Խիկարի գուշակութիւն. (սեպտ.)	15	»
Ո. Պատկանեան՝ 5 օր.	Տիկին և նաժիշտ.	26	»	
1	»	Ես նշանած էի.	22	»
4	»	Բանաստեղծութիւններ.	14	»
Խրիմեան՝ Հայրի կ' 1 օր.	Խիրաք և Սամուել	14	»	
1	»	Գրախարի ընտանիք.	10	»
1	»	Օխուսի վերջին շաբաթը	9	»
2	»	Վանդուժ.	8	»
Տիւսաբ՝ 3	Վարժուհի.	34	»	
1	»	Մարտա.	14	»
1	»	Սիրանոլ.	13	»
Մ. Նալբանդեան՝ 1 օր.	Թալիսմաններ (Հիւսիս.)	17	»	
Գ. Արծրունի՝ 2 օր.	Անսակլ և ալստեղ.	15	»	
1	»	Եւելինա (նորմերից)	4	»
Ար. եպ. Սեղբակեան՝ 1 օր.	Ամուսնակ, խնդիրներ	14	»	
Սունդուկեան՝ 1 օր.	Խաթաբալա.	29	»	
2	»	Պեպօ.	19	»
1	»	Ելի մէկ զոհ.	10	»
Ղ. Ալիշան՝ 1 օր.	Յուշիկը Հակրենեաց.	10	»	
Սրուանձտեան՝ 1 օր.	Համով հոսով.	11	»	
Նաթանեան՝ 1 օր.	Արաօսը Հակաստանի.	9	»	
Լեռն Սարգսեանց՝ 2 օր.	Ալց թիւրք. Հակաստան.	83	»	
Պալասանեան՝ 1 օր.	Հալոց պատմութիւն.	12	»	
Խորենացի՝ 1 օր.	Հալոց պատմութիւն.	11	»	
Եղիշէ՝ 5 օր.	Վարդան. պատեր. (աշխ.).	14	»	
Ագաթանգեղոս՝ 1 օր.	Հալոց պատմութիւն	5	»	
Աբգ. Յովհաննիսեան՝ 3 օր.	Հալը և Հակաստանը օտարների աչքում.	10	»	
2 օր.	Հալ ազդի կատաղի թնամինները	5	»	
2	»	Կեանկըի պատկերներ.	5	»
Փիրումեան 2՝ Պատկերներ Վասկ. կեանքից.	11	»		
3	»	Խրիմեան Հակրիկ.	5	»
Ատրպետեան 2՝ »	Խե կարապետ.	17	»	
Վ. Փափազեան 3՝ »	Գինեզործի աղջիկ.	20	»	
9	»	Ենեչերի.	15	»
3	»	Լալօ.	13	»
1	»	Պատկերներ թիւրքահալոց կեանքից	7	»

4	»	Թալիալ . . . . .	»	5	»
Ա.	Ն ա մ ա լ ե ա ն ա	3 օր. Նւազած կեանքը . .	»	33	»
	3 օր. Եղիդ աղջիկը . . . . .	»	30	»	
	3 օր. Ծանր քարը . . . . .	»	22	»	
	3 օր. Հարեաններ . . . . .	»	15	»	
	3 օր. Մեր ինչը կը պակսի . . . .	»	13	»	
Լ է օ	2 » Կորածներ . . . . .	»	17	»	
	3 » Արնազին . . . . .	»	12	»	
	1 » Ծայրեր . . . . .	»	11	»	
	1 » Վահան Մամրկոնեան . . . .	»	5	»	
	2 » Վէպ թէ պատմոթիւն . . .	»	5	»	
	2 » Պանդուխտ . . . . .	»	5	»	
Ա ր փ ի ա ր	Ա ր փ ի ա ր ե ա ն 2 » Ա ր մ ւ շ ը . . .	»	7	»	
Փ ի լ ո ւ ի ա ն 2 » Կորած Մարդարիտ . . .	»	50	»		
Կ ո օ	1 » Արտաւազլ և Մարդարիտ . .	»	28	»	
Մ ե լ ի ք - Ծ ա հ ն ա զ ա ր ե ա ն 1 » Հաւ զիւզա- ցու սկ օրը . . . . .	»	11	»		
Ս.	Հ ա խ ու մ ե ա ն 2 » Մ ա ն ի լ . . . . .	»	8	»	
Գ.	Չ ո ւ բ ա ր 1 » Պ ա տ կ ե լ ն ե ր . . . . .	»	15	»	
Կ ա մ ս ս ա ր ա կ ա ն 1 » Վ ա ր ժ ա պ ե ս ի ա ղ ջ ի լ ը .	»	16	»		
Մ ի ա ն ս ա լ ե ա ն 1 » Ք ն ա ր հ ա վ կ ա կ ա ն . .	»	28	»		
Ս.	Շ ա հ ա զ ի գ ե ա ն 1 » Լ ս ն ի վ ի շ ը . . .	»	7	»	
	3 » Հ ր ա պ ա ր ա կ ա խ օ ս ձ ա խ . . .	»	7	»	
Գ.	Բ ա ր խ ու զ ա ր ե ա ն 2 » Բ ա ր ե պ ա շ տ մ ա ր դ ի լ	»	13	»	
Ծ ա տ ու ր ե ա ն 1 » Բ ա ն ա ս տ ե ղ ծ ու թ ի ւ ն ե ր .	»	11	»		
Բ ա լ ու զ ե ա ն 1 » Բ ա ն ա ս տ ե ղ ծ ու թ ի ւ ն ե ր .	»	9	»		
Յ.	Յ ո վ հ ա ն ն ի ս ե ա ն 1 » Բ ա ն ա ս տ ե ղ ծ ու թ ի ւ ն ե ր .	»	9	»	
Ս ա յ ա թ - Ն ո վ ա 2 » Ե ր դ ե ր . . . . .	»	7	»		
Զ ի գ ա ն ի 4 » Ա շ ը զ կ ա ր ի բ ի հ է ք ի ա թ թ ը . .	»	13	»		
	1 » Ք ե ա ր ա մ ի և Ա ս լ ի հ է ք ի ա թ թ ն ե ր ը	»	7	»	
Լ ե ռ ե ն ց 1 » Բ ա ն ա ս տ ե ղ ծ ու թ ի ւ ն ե ր . . .	»	11	»		
Թ ո ւ մ ա ն ե ա ն 1 » Բ ա ն ա ս տ ե ղ ծ ու թ ի ւ ն ե ր .	»	4	»		
Պ ե տ ե ր ը . հ ա լ ու ս ա ն ո ղ ն ե ր ի ժ ո գ ո վ ր լ ա կ ա ն զ ր ք ո վ ի ն ե ր ը բ ա ւ ա կ ա ն ի ն կ ա ր դ ա ց ո ւ մ է ե ն .					
Օ տ ա ր գ ր ա կ ա ն ո վ թ ի ւ ն ի ց կ ա ր դ ա ց ւ ե լ ե ն .					
Է ժ է ն Ս ի ո ւ 1 » Թ ա վ ա ռ ա կ ա ն հ ր է ա լ . . . .	»	52	»		
	1 » Գ ի ա խ ա կ լ բ լ ու ր . . . . .	»	16	»	
	1 » Գ ա ղ տ ն ի ք Պ ա ր ի զ ու . . . . .	»	11	»	
Ա.	Հ ի ւ դ օ 3 » Մ ա հ ա պ ա ր ս ի վ ե ր ջ ի ն օ ր ը . .	»	42	»	
	1 » Թ շ ւ ա ռ ն ե ր . . . . .	»	22	»	

2	»	Կլող Գէօ.	.	.	.	.	.	.	.	.	.	»	10	»
1	»	Անջելլօ.	.	.	.	.	.	.	.	.	.	»	9	»
1	»	Կոստ Պարիզի	.	.	.	.	.	.	.	.	.	»	7	»
Զ ա խ ե ր Ա մ գ օ խ 3 Ե ա բ է ն ի կ տ ա լ լ ր (Բ ժ Բ ա ֆ ֆ ի)	»											»	42	»
Ե ժ յ 3 » Լ ո ւ ս ա ղ ի մ ի ն (Ա ն պ ա ն մ ը ե ր ի ց )	»											»	40	»
1 » Հ ա ղ ա ր ու մ ի գ ի շ ե ր ն ե ր . . .	»											»	35	»
Պ ժ Հ ա ւ զ է 3 Ն ո ւ ց ա ղ ի բ ե ր զ ր պ . . . . .	»											»	26	»
2 » Բ ն ա թ ը լ չ է . . . . .	»											»	10	»
Ս մ ա լ լ ո 3 » Խ ա ք օ վ ն ո ւ թ ի ւ ն . . . . .	»											»	33	»
2 » Բ ն ա ւ ո լ ո ւ թ ի ւ ն . . . . .	»											»	20	»
Լ ե ս ս ի ն զ 1 » Ն ա թ ա ն ի մ ա ս ս ո ւ ն . . . . .	»											»	9	»
Ն ի ւ լ է լ ո 1) 1 » Գ ո ն Կ ա ր լ ո ս . . . . .	»											»	13	»
3 » Օ ր է ա ն ի կ ո յ ս ը . . . . .	»											»	34	»
2 » Ա ւ ա ղ ա կ ն ե ր . . . . .	»											»	27	»
3 » Վ ի հ է լ ո թ ե լ լ . . . . .	»											»	17	»
Շ է ք ո պ ի ր 2 » Հ ա մ է տ ա . . . . .	»											»	19	»
1 » Լ ի ր . . . . .	»											»	17	»
2 » Օ տ ե լ լ օ . . . . .	»											»	11	»
1 » Ջ ո ւ ր տ ե ղ մ ե ծ ա ղ մ ո ւ կ . . . . .	»											»	6	»
1 » Ո ր ո մ է օ և Զ ո ւ լ ի ե ս տ ա . . . . .	»											»	5	»
Գ ե օ թ է 1 » Ա լ ա մ լ լ պ օ . . . . .	»											»	17	»
1 » Վ ե ր թ ե ր . . . . .	»											»	9	»
Վ ա լ ա է ր Ս կ օ տ ա 1 » Խ պ ա ն օ է . . . . .	»											»	10	»
Ս ո լ ի է ր 1 » Տ ա ր ս ի ւ փ . . . . .	»											»	8	»
2 » Ը ո ն ի ա մ ս ւ ս ն ո ւ թ ի ւ ն . . . . .	»											»	5	»
Դ ի կ կ ե ն ո 5 » Ա ր ք ե ց ո վ ի մ ա ն ը . . . . .	»											»	8	»
Ծ ը ն ա ն 3 » Խ ո լ ա մ ո ւ թ ի ւ ն և զ ի տ ո ւ թ ի ւ ն .	»											»	7	»
Լ ե ր մ օ ն տ օ վ 1 » Գ ե . . . . .	»											»	7	»
1 » Գ ի մ ա կ ա ն ա ն ո ւ կ ո ս . . . . .	»											»	12	»

Աչքի անյնելով այս ցուցակը հեշտ է համոզել որ այդ գրքի բի ահազին մասը վերջին 10—15 տարիներս են լուս տեսել: Թէ որ աստիճանի հետաքրքրական բովանդակութեամբ գրքերը տալածում են ընթերցամիլութիւնը՝ դրան ապացուց է Բաֆֆին խելք վեպերավ, և նա դեռ երկար ժամանակ կը մնայ մեր ամենագործլողական գրառք:

Զալիսաս բնթերցալներին սովորաւր բաժանում են երկու որոշ կարգի, առաջինը՝ հասարակ գրադէտ կամ միջինից ստոր կրթութիւն ունեցողներ և երկրորդ, միջին կամ զորանից բարձր կրթութիւն ստացածներ,

<sup>1)</sup> Նկատելու արժանի երեսյթէ, որ անցեալ տարւայ Թատրօնի գյուղաթեան շետքիւ աւելի են կարգացւել Թատրօնական գրւածքները Քանի 1890 թւականին:

ինտելիգենցիա։ Նատ գրքեր, որոնք դրւած են երկրորդ կարգի ընթերցող-ների հասկացողութեան համեմատ, առաջին տեսակի ընթերցողները, աչսինքն ժողովրդի մեծ մասը, չեն կարողանում հասկանալ բանի պատրաստութիւն չունենալու պատճառով։ Այսաեղից բաւաջ է զալիս բուն «ժողովրդական» գրքերի պահանջը։ Արտշելու համար մեր ժողովրդական ընթերցանութեան համար գրքերի ափազը՝ պէտք է իմանալ թէ մեր ժողովուրդը ինչ բովանդակութեամբ և ձեռով գրած գրքեր է հաւանում, ինչ է կարդում, բնչափս է կարդում, ինչպէս է ըմբռնում կարդացածը, ինչ պահանջներ է անում և ավն։ Առանց ուսումնասիրութեան և ճիշգ զիսովութիւնների դժւար է ուղիղ ճանապարհի վրայ զնել ժողովրդական գրքերի հաստարակութիւնը։ Ուսւաց գրականութեան մէջ գտնւում են մինչև անդամ մը քանի մանրամասն ծրագիրներ ազգիսի նվաթեր հաւաքելու համար, ինչպէս օրինակ, և Պրուգաւինի, Բուբակինի և ալլն։ Աչքի առաջ ունենալով ալլպիսի պրոդրամներ, „Կո չիտայ նարօդ?“ աշխատութեան պէս ուղեցոցներ՝ մեր գաւառական ինտելիգենտ երիտասարդութիւնը կարող է նեշտութեամբ արդ ինդրում ուղիղ ճանապարհ գտնել, զնելով հարցերը մեր տեղական պատմաններին համեմատ։

Բացի Թիֆլիսից կան և մի քանի ուրիշ քաղաքներում հաստարակաց գրադարաններ, ինչպէս Տաքու, Շուշի, Ախալցխայ, Խոկ մի քանի քաղաքներում, ինչպէս Ալեքսանդրապոլում, արծարծում է նոցա բանալու հարցը։ Ցանկալի է որ ազդ գրադարաններն ել չը բաւականան միմիան գրքեր բաժանելով ազ նաև հաւաքելին տեղեկութիւններ և զիսովութիւններ։ ան ժամանակ ազդ բոլոր նիւթերից աւելի որոշ գաղափար կարելի էր կազմել մեր թէ մանկական-ժողովրդական ընթերցանութեան և թէ ժողովրդի պահանջների ու աշխարհակեցողութեան մասին։

# ԵՐԱԺԾՎԱԿԱՆ ԱԿԱՏՈՂՈՒԹԻՒՆԵՐ

Գ. ՆԱՀԱՊԵՏԵԱՆԻ

## II

Յունտար ամսից Թիֆլիսի երաժշտական աշխարհում երեք նորաւթիւններ լայտնեցան: պ. Մասկանի (Mascanini) «Գիւղական ասպետութիւն» (Cavaliere Rusticana) մի գործողութիւնից բաղկացած օպէրան, որ ինքը հեղինակը համեստաբար գուսաններգ (մելոդրամա) է անւանել: 2) Արքունական թատրոնում կազացած համերգական (симфонический) առաւտոր և 3) «Ֆառսա» օպէրակից երկու գործողութիւն հակերէն:

Թէ ինչպէս կատարեց «Գիւղական Ասպետութիւն» օպէրան, դորամանին ևս չեմ խօսիլ, այսքանը միան կասեմ, որ ի բաց առած տիկ. Զարուդնավին, բոլոր մուսացած գերակատարները սիրողներ էին:

—Սիրողներ ի՞նչ բանի՝ գուցէ հեգնորէն հարցնելու վնիք գուք:

Սական ձեր արած հարցին ևս համեստութիւնից կը լուսնի:

Թէև լիշած օպէրակում շատ քիչ ինքնուրոջնութիւն կաէ և եղանակների մեծ մասը, մինչև անդամ նւազախմբելու ձեր (այսինքն նւազախմբական գործիքների իրար հետ ձախնակցելու ձեր) փոխ է առւած մինչև աջմ նշանաւոր օպէրաներ գրողներից՝ ինչպէս Բիգէ, Վագներ, Վերդի և ազն, բայց այնու ամենավնիւ չի կարելի իսկոն և եթ չը նկատել, որ այդ օպէրան գրւած է տաղանդաւոր, թէ և գեռ չ'ամրացած ձեռքով: Որովհետև Մասկանին դեռ շատ երիտասարդ է, կարելի է դրականապէս ասել որ նրան փայլուն ապագայ է սպասում «Գիւղական Ասպետութիւն» օպէրայում երաժշտութիւնը շատ քաղցրահնչիւն է (ինչպէս և բոլոր իտալական օպէրաներում) և նիւթի (օյջեր) համակրելիութիւնը մասամբ ի նկատի աւճենալով մեծ հետաքրքրութեամբ է լսւում: Խոկ նիւթը երաժշտութեան համար շատ չնորհակալ է: Երիտասարդ գեղջկունու խաբւած և ոսնակոխ արւած տէրը, նորա վրէժը, նորա սիրեկանի մահը մենամարտութեան ժամանակ, երիտասարդ գեղջկունու վհատութիւնը և ամենը

նոյն հոգով։ Պարոն Խպաղլիտով-Խվանով շատ աջող կառավարեց օպէրան։ Նւազախումբը անպայման լսու էր։ Այդ օպէրան երեք անդամ դրեց Արարիտական ընկերութեան բնիմի վրա։ Ի հարկէ աշտեղ էլ նւազախմբական մասերը, ներածութիւնը և երկրորդ պատկերի անտրակտը, <sup>1)</sup> ներկաց եղողներից մեծամասնութիւնը բոլորովին անուշագիր թողեց, Ես աւելորդ չեմ համարում մէջ բերել տեղի ունեցած հետևեալ կոմիլական դէպքը։ Առջևս նստած էր «Արտիտասական ընկերութեան» ամենօրեակ հիւրիրից (Յա- վեցդառայ) մէկը որը երկրորդ պատկերի անտրակտի կատարելու ամ- բողջ ժամանակը բաւական չարմար և մինչև անդամ աջող գտաւ իրա մօտ նոտած մի կեռջ բարձրածայն բացարտելու սովուանիրի օգտին վիճակա խաղի ողջ տոմսակի և նորա կտրոնների զանազանութիւնը։ Նրա խօսակից տիկինը բարձրածայն ծիծաղում էր։ Զնայած որ մի քանիսը բողոքում էին իմ հարեւանիս անտեղի խօսակցութեան դէմ, անհանգիստ հիւրը չէր կարողանում իրան զափել և, տարօրինակ բան, նորա հետ խօսող տի- կինը այն ժամանակ միայն կատարելապէս ըմբռնեց տոմսակի և կտրոնի մէջ եղած զանազանութիւնը, երբ անտրակտը վիրջացաւ։ Հստարակու- թիւնը սկսեց ծափահարել և անտրակտի կրկնութիւնը պահանջել։ Անհան- գիստ հարեւանս ինձ դարձաւ հարցնելով։

— Դնչպէս է, լաւ է։

— Հիանալի է, պատսախանեցի ես, և երևակացեցէք՝ իմ խռովապուդ հարեւանս սկսեց մեղ հետ ծափահարել և աղաղակիւլ «bis, bis»

Փետրւար 14 ի համերդական նւազահանդէսը պ. Խպաղլիտով-Խվա- նովի կառավարութեամբ ընդհանրապէս հարթ անցաւ և մեծ էր զար- մանքս՝ թատրոնը լի տեմնելով։ Կատարեցին «Լօէնդրին» օպէրափ ներա- ծութիւնը հեղ. Վագների, Ֆէթհովինի № 4 կոնցերտը, Զավկովսկու № 2 սիմֆոնիան և մի քանի ուրիշ բաներ։ Դրանցից անպայման կերպով տիմ- նագրավիչն էր Քեթհովինի կոնցերտը, որը կատարեց պ. Մատկովսկին նւազախմբի ձախակցութեամբ։ Բաց կոնցերտի կատարելու հեռու էր ան- պարաւելի լինելուց։ Պարոն Մատկովսկին լաւ տեխնիկա ունի, բայց նրա տուշեն (ալիինքն ածելու ձևը) կոպիտ է, բոլորովին վուրկ այն բանից ինչ որ ոռուսերէն՝ պեսցեստէ է կոչւում։ Անուամենալինիւ ալդ կոնցերտը հա- ստարակութեանը դուր եկաւ։ Ամենալաջող կատարածը պէտք է համարել բացառապէս նւազախմբական մի գրածք՝ Զավկովսկու սիմֆոնիան։ Մեր սովորական թատրոնական նուագախումբը, որը սիրողներով ստարացած էր, փորձառու դիրիժորի կառավարութեամբ լաղթեց արևտական կեր-

<sup>1)</sup> Մի անի օպէրաներ, բայց ընդունած ներածութիւններից ունին նաև փոքրիկ ներածութիւններ բոլոր դործողութիւնների համար ջոկ-ջոկ, որոնք (այդ ներածութիւնները) անտրակտ են կոչւում։

պով կաղմած այդ գրւածքի բոլոր դժւարութիւններին և ընդհանրապէս ֆուրոր գործեց:

Բայց ինչ ահագին անդունդ կաէ Բեթհովենի և Զալկովսկու գրւածների մէջ՝ Ամենք Զալկովսկին խոկի շաւակնութիւն չունի համեմատելու, բայց անուամենախնիւ այդ երկու կոմպոզիտորների գրւածքների կատարւելու ժամանակ նրանց մէջ եղած նշանաւոր տարրերութիւնը չի կարող աչքի չ'ընկնել: Ամենից առաջ Բեթհովենի բոլոր գրւածքներում աչք է զարնում հանճարի կորովը, երաժշտական մոռքերի խորութիւնը, կատարելու գիրքների գիրքների գործիքների հրաշալի միաւորութիւնը: Զալկովսկու մօտ կորով գրէթէ չ'կաէ նրա գրւածքներում զիմաւոր զերն է խաղում էրուղիցիան (ալինքն երաժշտութեան լանճածաւալ գիտութիւնը) բայց նրա երաժշտական մոռքերը առախ հ ս ս ր ա կ (banal, բանալինեան) են և մինչև անդամ գուհկական են: Օրինակի համար՝ վիճակ սիմֆոնիակի վերջին մասը: Բայց այդ բոլորը փոխարինուամ է, ինչպէս ես վերև վիշնցի, էրուգիցիալով՝ դիտնականութեամբ և երաժշտական գործիքների գիտուն կցորդութեամբ (сочетаніе).

Այդ պատճառով զարմանալի չէ, որ ապժմեան նշանաւոր երաժիշտների մէջ (մանաւանդ Արևմտեան Եւրոպակում) գոնուամ են մարդիկ, որոնք Զալկովսկու գրւածքները չեն սիրում: Բայց դուք ոչ մի տեղ, ոչ մի երկրում և ոչ մի երաժիշտ չէք գտնիլ որը Բեթհովենի դէմ գէթ մի բան առարկէր:

Հալերէն «Ֆառուտի» մասին մի այլ անդամ:

**ԹԵՍԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՀՈՐԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎԸ  
ՄԱՐՏԻ 8-ԻՆ 1892 թ.**

Արձանագրում եմ մարտի 8-ին կալացած ժողովի նվատը, թողնելով ինտագալում անելու իմ նկատողութիւնները:

Ժողովը տեղի ունեցաւ թեմի առաջնորդարանում: Դահլիճում տեղ են գրաւել ծխական երեսփոխանները, պաշտօնակատար անձերը և մամուլի ներկայացուցիչները, Վերջններիս համար, սական, որպէս երեսում է, առաջուց պատրաստութիւն չը տեսնամք, Դիւանի սեղանի երկու կողքերը գրաւել են՝ տէր-Ղետով Խարազեան, տէր-Յովհաննէս Մարտիրոսեանց, տէր-Մարգիս Աղաջանեան, տէր Աշոտ Թէմուրագեան: Ժամը  $12\frac{1}{2}$  մատում է թեմի սրբազն առաջնորդ տէր-Ամերիք եպիսկոպոս Սահմասակեան և տեղ գրատում զիւանի սեղանի ճակատին, ունենալով իւր կողքին նահանգապետի ներկայացուցիչ իւ. ք. իւ. պ. Ամիրեանին: Սրբազնի ներս մանելը ողջոնում է ոտքի կանգնելով:

Սրբ. նախագահը լավոնում է որ, նախկին փոխարքակի հրահանդի համաձան, ժողովը համարում է բացւած երբ ներկայ են իրաւասուների երկու երրորդը: Տէր-Ղետովը զեկուցանում է թէ ժողովին ներկայ են իննըսուն (90) հոգի:

Սրբ. նախագահը լավոնում է՝ ծխական երեսփոխանների թիւն է 100<sup>(1)</sup>։ Հետեապէս 90 հոգի ներկայ լինելով՝ ժողովը լավոնում եմ բացւած, լավոնում է նաև որ որ և է խօսակցութիւն որ զուրա է նվատի նպաստակից՝ արդելում է:

Նվատը սկսում է վերսուսգելով ներկայ եղողների անունները, որի համար տէր-Ղետով Խարազեանը կարգում է ընտրածների անուն-ազգանունները Թիֆլիսի եկեղեցիների և գաւառական բարեկարգութիւնների կարգով: Ներկայ եղողները լավոնում են իրանց ներկայ լինելը, երբ նոցանունը կարդացւում է:

<sup>(1)</sup> ՌՄՊՀՆ անցեալ № 1-ում (Ամսւայ քըռնիկ) յայտնւած էր թէ Թիֆլիսի թեմի քոլոր ծխական երեսփոխների թիւն է 103: Այդ թիւը Ճիշդ է: Ըայց որ ժողովին 100 հոգի էին հրաւերւած, այդ նրանից է, որ թիւմ առաջնորդը անվաւեր համարեց ու Լուսաւորիչ եկեղեցու ընտրութիւնը:

Վերաստութիւնից յախնեց, որ բացակաէ էլի՞ն՝

1) Ալեքս. Մանթաշեան և իշխ. Արդութեան, որոնք զբաւոր ոչինչ լաւառած չեն:

2) Ալ. Մելիք-Աղարեան, որի մասին նվելեանը յախնեց թէ նա, Մելիք-Աղարեանը, իրան մի բաց թուղթ է տեղ սրբ. նախաղահին հասցնելու համար ան դէպօսմ, եթէ նիստը կը կաջանավ:

3) Նազար Ղաղարեան, որից տասցած հեռագիրը պ. Մալխասեանը կարգում է, ուր առած է թէ նա իւր կանդիտատի անունը հեռագրով ուղարկել է սրբ. նախաղահին:

4) Բացականեր, որոնք իրանց ձանը վաւերացրած թղթերով լանձնել են ուրիշներին.

Յակոբ Տէր-Ռօղոսուեանցին ներկալացնում է պ. Յ. Շատուկիւնու խանաղեանցին՝ բժշկ. Քուչարեան:

Յոհի. Մուրադեանին՝ Յ. Հասան-Զաւալեան:

Մատթ. Աղնասուլեանին՝ Ալ. Քալանթար:

Դաւիթ Դաւթեանին՝ Պետրոս Սլոմնեան:

Պ. Չերքեզեանցին՝ Ա. Սպանդարեան:

Յ. Մուրադեանին՝ Խ. Մալումեան:

Խօսք է լինում ներկալացուցիչ չունեցող բացականների մասին՝ և խմացւում, որ նոցա ձանը չը պիտի հաջւի:

Պր. Գ. Տէր-Նըթքոբեան (բժ.) չադմում է որ Եջմիածնեցոց եկեղեցու առաջին անդամ (փետրւարի 2-ին) ընարւածները բողոքագիր են տեղ իրան՝ ժողովում կարդալու համար:

Սրբ. նախաղահը մերժում է բաղաք կարդալը: Տէր-Գրիգ. դնում է բողոքագիրը սեղանի վերակ և հեռանում:

Նոնը կատարում է պ. Լոխիցեան ո. Լուսաւորիչ եկեղեցու վետրւարի 2-ին ընարւածների կողմից: Նոր-պարական ձաներից մեկը բացականչում է անպատկառ կերպով՝ պատռաեցէք այդ թղթերը:

(Նկատաղութիւն. Եջմիածնեցոց եկեղեցու վետրւար 2-ին կատարած 3 հոգու ընարւութիւնը սրբ. առաջնորդը համարել էր անվաւեր, նշանակել էր վերընտրութիւն վետրւարի 23-ին, որ և կալացաւ Միան վետրւ. 23-ին ընարւածները ստացել էին հրաւերք ժողովին ներկաէ զոնւելու: Սր. Լուսաւորիչ եկեղեցում վետրւ. 2-ին կատարւած ընարւութիւնը ո. առաջնորդը անվաւեր համարեց, բայց վերընտրութեան օրը ընարւութիւնը չը կատարեց: Այդ եկեղեցուց ուրեմն ներկալացուցիչներ չը կավճ ժողովում):

Այդ բողոքաղիրի առիթով նկատեց ա. Կաբագուկը, թէ վետրւարի 2-ին կատարած ընարւութիւնները Եջմիածնեցոց և ո. Լուսաւորիչ եկեղեցում նա անվաւեր է համարել սրի մասին ինքը յախնել է Սինողին, ուղարկելով պահանջւած թղթերը. բայց մինուրը չի յախնել իրան թէ վաւեր են:

Պր. Քաղաքացին նկատում է թէ Սինոդը չի լաւանել թէ վաւեր է, ուրեմն նիստը չի կարող կատանալ:

Ապա խօսք է ուզում պ. Գ. Արծրունի և լաբոնում մօտաւորապէս հետեւեալը.

Գ. Աքծրանի: «Այստեղ իրաւունքների ինդիր է ծագում: Ժողովը կազմած է բաղկացուցիչ մասներից, որոնք գեռ չեն որոշած: Քանի որ ձեր (առաջնորդի) դէմ Սինոդին, որպէս աւելի բարձր ինստանցիավի, բողոքել ենք մի քանի եկեղեցիներում կատարւած ընտրութիւնները քանիզած լինելու համար, ուրեմն աւատեղ վէճի ինդիր կաէ. և քանի որ Սինոդը զեռ ևս վճիռ չի տւել ազ մասին, ուստի ալսօրւաէ ժողովը թերի է: Դիցուք Կումիսում երկու անգամ ընտրութիւններ են կատարւել. Սինոդը զեռ չի լաւանել թէ որն է նոցանից օրինաւոր, ուրեմն եթէ մենք ալսօր ընտրութիւն անենք, Սինոդը կարող է կասացիա անել: Խմ հակառակորդը Մողնու եկեղեցում ազնուութիւն է ունեցել պաշտպանելու իմ կուտակից երկու ծխականների իրաւունքները ընտրութեանը մասնակցելու. ինչու նոքա նոյն ազնուութիւնը չեն բանեցնում, պաշտպանելով ոչ թէ մի քանի ծխականների, այլ մի քանի եկեղեցիների հարիւրաւոր ընտրողների իրաւունքը: Ազդ բողովի հիման վերակ ես և իմ համախոնները գուրս ենք գալիս:

(Արծրունու հետ գուրս են գալիս նորա համախոնները թւով 45 հոգի: Դահլիճում մնում են մնացածները: Դրսում կանգնած մեծ, մինչ 500 հոգուց բաղկացած, ամրոխի կեցցյների դոթիւնը տեսում է մի քանի բոպէներու Անցնում է մօտ կես ժամ մինչ նիստի վերսկելը):

Արք. Կաթոքիչը հարց է առաջարկում, ընդունել արդիօք ժողովը կալացած: Միաձան պատասխանում են՝ աղու:

Աքաջաջ Յովհաննիւն: Յարգելի պ. Արծրունու ակնարկած հակառակորդը, որը Մողնու եկեղեցում պաշտպանել է նորա կուտակից երկու ծխականների իրաւունքները – ևս ևս: Բայց նոյցա պաշտպանելու պատիւը մերարեւում է ոչ թէ ինձ, այլ բոլոր ժողովին: Լատինական մի առած առում է audiatetur altera pars, այսինքն՝ հակառակորդին պէտք է լարգել: Բայց զորա զէմ մեղանչեց Արծրունին, զուրս գնալով ժողովից, առանց լսելու իւր հակառակորդներին: Մենք համակրութիւն ենք պարտական որբ: Նախաղահին, որը համբերողութիւն ցուց տւեց, թող տալով խօսել մեր հակառակորդներին: Ալսօր մենք կանչւած ենք մեր ասմանական սրբազն իրաւունքները զործադրելու: Քանի որ ժողովին սկզբում ներկայ էին 90 հոգի, հետեւապէս ժողովը կատացած է:

Գէրգէ Նեանգուշեան: Պր. Արծրունու ասածով, ժողովիր զումարելուց առաջ պէտք էր սպասել Սինոդի վճունի: Բայց երբ խօսում են ներքին և վերին ատեածների մասին, պէտք է որ զորա վերարերեալ մի կանոնաղութիւն լինի: Ազգպիալն է միան Պոլութենիէն, ուր չի ասւած թէ եկեղեցական ընտրութիւնների գործը պատկանում է Սինոդին, այլ ասւած

է թէ նա պատկանում է թեմ. առաջնորդին Սինողին զիմել են բողոք-ներով. բայց նո՞ն ազդ Ախնողը կարող է վճիռ չը տալ նաև ամրողջ մի տարի, համարելով իրան իբր անձեռնաս ատեան ազդ բողոքները քննելու համար. Քանի որ Ախնողից մինչ ալժմ վճիռ չկաչ ուրեմն պէտք է կատարիլ առաջնորդի վճիռը. Խմ զգացմունքները Արծրունու և կուսակցութեան ալարւաչ արարքի վերաբ ես լայտնում եմ Արբազանին, կառավարութեան ներկազացուցին և բարգելի ժողովականներին, որ ազդ վարժունքը վայել է միան նրանց, որոնց համար չկաչ ոչ կարող, ոչ կանոն, ոչ սրբութիւն:

Այս. Նախագահ-Առքէրէ լաւանուամ է հետեւալլ, «Ահնք ալսօր հաւաքւել ենք ոչ նրա համար, որ քննենք խմ և Ախնողի մէջ եղած զորձերը (հաւանութեան նշաններ): Ես ընդունել եմ բողոքազիրները և լայտնել եմ Ախնողին, որը պահանջել էր խնդրին վերաբերեալ թղթերը. Ես հարզանդ եմ խմ իշխանութեան: Ախնողին լաւանի է որ ալսօր, մարտի 8-ին, ես նշանակել եմ թեմ. պատգամաւրի ընտրութեան ժողովը: Ուրեմն եթէ մինչ ալժմ Ախնողը չի համաձել ընտրութիւն չը կասարել՝ հետեւապէս նու համաձանն է: Եթէ զորանով ես ապօրինի զործ եմ կատարում՝ ես կը պատժեմ Եթէ, այս ժողովը ապօրինի է, Ախնողը լեռու էլ կարող է նորան վաւերական չը համարելու:

Նահանդապետի ներկազացուցիչ ի. լո. պ. Անքեան, ժողովականների հայրմունքին պատասխանում է թէ նիստը կանոնաւոր է:

Ակսում են տալ թեկնածուների անունները:

Գ. Յունկուակէտն: Առաջարկում եմ քէարկել միան պ. Արքար Յովհաննիսեանին և պ. Նպանդար Ստանդարեանին: (Համաձանութեան նշաններ):

Անքան Պարզանեան կարծիք է լայտնուամ, որ ժողովը շարունակել կարող է միան ներկազացութեանը  $\frac{2}{3}$ -ի և քանի որ ընդամենը ծխական ընտրածներ 100 են, հետեւապէս զոնէ 66 հոգի պէտք է ներկաչ լինեն:

Ազդ պատճառով նա առաջարկում է հաշվել միացած ձաւները:

Նրան պատասխանում են թէ նիստը ոկտեմբերի է 90 հոգով, և նիստի ընթացքում գնացածները չեն հաշըւառմ: Եւ նա համաձաննուամ է: Նահանդապետի ներկազացուցիչը կրինում է թէ ժողովը վաւերական է:

Խօսք է լինում Արծրունուն քէարկելու մասին:

Առանդուկէտն լավանուամ է որ քաղաքավարութիւնը չէ քէարկել մի քայլակալի, առաջուց իմանալով որ կը սկանավ, քանի որ նորա կուսակիցները հեռացան:

Դնում են պատ. Արք. Յովհաննիսեանի և Սպ. Սպահանդարեանի տուփերը. Քէարկութիւնը սկսում է: Հայր Պանդ Խարազեանը կարդում է իրաւառների ցուցակը առաջւակ կարգով: Ներկաչ եղողը, իրան կանչելլաւ առաջ է գնում դէպի զիւանի սեղանը, ասորալում է ընտրողական թղթին և մօտենում առափերին քմներ զցիր համար:

- Ներկայ էին և քւէարկոթեան մասնակցիցին՝
1. Սումգալիւան, Գարդիէլ.
  2. Յովհաննիսեան, Արդար.
  3. Պորզոնիւան, Անտոն.
  4. Պանդուրալեան, Բարսեղ.
  5. Տէր-Կարսպանտեան, Յովհ.
  6. Ալիխաննեան, Կոստանդին.
  7. Խոսրովեան, Նիկող.
  8. Խուզագեան, Յովհ.
  9. Բարական, Աւետիք, բժ.
  10. Աւթանդիլիւան, Միք., բժ.
  11. Միրզոյւան, Մինակ.
  12. Փիրումեան, Նիկ.
  13. Մովսիսեան, Ստ.
  14. Սպանդարեան, Սպ.
  15. Միրիմաննեան, Բագրատ.
  16. Յարութիւննեան, Խաչակ.
  17. Մելիք-Բարախաննեան, Խաչակ.
  18. Տէր-Գրիգորեան, Միմոն.
  19. Արեղեան, Մանուկ.
  20. Տէր-Յովհաննէսեան, Գրիգ.
  21. Առաքելեան, Դարչօ.
  22. Տէր-Ասատրեան, Աղասի.
  23. Գրիգորեան, Նիկող.
  24. Աբրահամեան, Խոսկի.
  25. Աքիմնեան, Գէորգ.
  26. Բեհբուղեան, Իշխ. Կոստ.
- Քւէարկութեան հետեւանքները.
- Ալրդար Յովհաննիսեան **46** սպիտակ և **4** սև (ինքը իւր համար ձեռնպահ):
- Սպանդար Սպանդարեան **43** սպիտակ և **7** սև (ինքը իւր համար ձեռնպահ):

Անհետաքրքրական չեն հետեւալ մանրամանութիւնները: Ընդհանրապէս սպասում էին թէ 51 հոգուց քւէարկուդները կը ստանան դոնէ 48 ձայն, ալսինքն ժողովի սկզբում և ապա եկած 95 ձայնների կէսից մէկով աւելին <sup>1)</sup>, բայց երբ իմացեց, որ Արդ. Յովհաննիսեանը ստացաւ 46

<sup>1)</sup> Վեձ անհասկանալի մնաց թէ ինչու 95 հոգի հաշւեցին ժողովին մասնակցողների թիւը, քանի՛ որ բացականեր միայն 4 հոգի էին, հետեւազէս ըստ իս, ներկայ էին 96 հոգի:

սպիտակի, ինքը քէարկւողը և շատ ուրիշները մի մի հարցական նշաններ դարձան, որովհետև տարսկուսանքի մէջ ընկան թէ արգեօք և ձայնով նա ընտրւած է թէ ոչ. Ահա ինչու փոխանակ ծափահարութիւնների՝ տըխուր լուռթիւն (Verstimmung) տիրեց դահլիճում. Մի փոքր ծափահարութիւններ վաստակեց ալ. Սպանդարևանը, երբ վերջացաւ նորա քէների հաջուը, թէն վերջինս առաջնից աւելի քիչ ձայներ ստացաւ. Բայց վերջը հանգստացան, երբ տիրեց այն կարծիքը, որ քմարկողներ պէտք է համարել ոչ 95 հոգի, այլ 51 հոգի, և որ նետեատրէս ընտրւածները ստացել են ձայների բազմութիւն և կամ վիշելով որ նիստը սկսւեց 90 ձայնով և ոչ 95-ով, նետեատրէս 46-ը կէսից աւելի է: Գաւթում կանգնած ընտրւածներին համակիր մօտ 150 հոգուց բաղկացած ժողովուրդը սպասում էր ընտրւածներին ողջոնի ցուցեր անելու:

| ՈՒՍԻՇՆԻ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ընդհանուր քաղաքական գրութիւնը։ Ֆրանսիակի նոր մինիստրութիւնը։ Ֆրանսիական կարդինալների կակտարարութիւնը։ Միջին-եւրոպական սեռութիւնների առևտրական գաշնը։ Մաքսակին բեփորմը Ֆրանսիակում։ Պրուսական գպցոյցական նոր օրինագիծը։

Ներկայ 1892 թւականը սկսեց և շարունակում է եւրոպական միջազգային յարաբերութիւնների տեսակէտից՝ ոչ աւելի մսիթարական կերպով քան անցեալ տարի։ Նոյն հակառակ ոյժերը որ կազմին անցեալ տարի, մնում են և այժմ, զեռ աւելի էլ խիստ կերպալ լարւած, որովհետեւ ոյժերի համախմբումը աւելի էլ որոշ է այժմ, քան անցեալ տարւայ սկզբին։ Ֆրանսիան, որը երկու տասնեակ տարի միայնակ էր մնացել եւրոպական կրնցերուում, անցեալ 1891 թւականին վերջապէս յաջողեց իւր արտաքին քաղաքականութեան համար մի զօրեղ զաշնակից գտնել, միաբանւելով Խուսիայի հետ։ Այդ մի եղելութիւն է, որի մասին մենք մեր անցեալ տեսութիւնների մէջ խօսել ենք ընդարձակ կերպով և որը Խորոշական 1891 թւականի արտաքին քաղաքականութեան մէջ ամենախոշոր անցքը պէտք է համարել։ Ֆրանսիայի համար այդ զաշնակցութիւնից բղուում են որոշ պարտաւորութիւններ նաև խաղաղութեան ժամանակ՝ պաշտպանել Խուսիային Արեւելեան և Ասիական խնդիրներում, և փոխադարձաբար՝ օդաւել Խուսիայի պաշտպանութիւնից՝ աւելի մեծ ազդեցութիւն ձեռք բերելու համար Կ. Պոլսում և Խզիպտոսում։ Թւել մի առ մի բոլոր պէտքերը նոյն խկ այս վերջին ամիսների պատմութիւնից այդ առաջուցանելու համար՝ մեզ հեռուն կը տաներ. բաւական է միայն յիշել Շաբուրնի գործը, որը

ցոյց է տալիս, թէ որքան սերտ է բարեկամութիւնը Ռուսիայի հետ, որ իւր մեծահոգութիւնով յացնի Ֆրանսիան դժւարութիւններ է անումնոյն իսկ Բոլգարիայի կառավարութեան<sup>1)</sup>:

Ֆրանսիայի գուրս գալլը այն առանձնացած զիրքից, որի մէջ նա գտնուում էր մինչ 1891 թւականը, 1891 թւականի քաղաքական ամենախոշոր եղելութիւններից մէկը պէտք է համարել: Բոլորովին անկասկած է որ այդ պետութեան միջազգային զիրքը այդ վերջին տարում շատ բարձրացաւ, Միջ-եւրոպական եռապետական դաշնակցութեան անհանդիսա անելու չափ:

Իւր այդ նոր զիրքով Ֆրանսիան պարտական է այն անընդհատ աննման աշխատութեան, որ արեց նա հանրապետութիւնը վերջնականապէս հաստատելու, դպրոցական վերանորոգութիւնը գլուխ բերելու, տնտեսական ոյժը բարձրացնելու և զօրքը կատարելութեան հասցնելու համար: Այդ բոլորը գլուխ բերելու համար հարկաւոր էր մեծ տոկունութեամբ և սիստեմական ահեղ կրիս թէ միապետականների դէմ, թէ կղերականութեան դէմ, թէ ծայրայեղ արմատականների դէմ, թէ նախապաշտուակների և թէ ազիտութեան դէմ առհասարակ: Աւ այն կառավարութիւնը, որը այսպէս ասած պսակեց այս վերջին 21 տարինների ջանքերը թէ ներքին և թէ

1) Շաղուրնը Փրանսութական մի լրագրի թղթակից էր Առֆիակում: Բայց իւր տաճ լուրերամ անքան կուսակցական ողի էր մացնում Բոլգարիայի կառավարութեան զէմ, որ վերջնու, մի քանի անգամ Փրանսիական ներկալացուցչին ապարդիւն կերպով նախազգուշացնելուց իւսուց վրձուեց արտաքսել այդ թղթակցին Բոլգարիակից: Ֆրանսիական կառավարութիւնը խոկոն վիրաւուեց իւր համառակի դէմ արած այդ իր թէ ասլօրինութիւնից և, բաւարարութիւն չը ստանալով Բոլգարիայի կառավարութիւնից, խոկոն կորմոց իւր զիսլումատիական բարարերութիւնները վերջինս հետ: Աքսպիտով զէպքը դառաւ աւելի լուրջ գործ, որի համար Փրանսութական կառավարութեանը հասարակաց կարծիքը մեղազում էր չափից դուրս մնած շտապութեան և զէպքին բոլորովին անհապատասխան լուրջ կերպարանք տալու համար: Բնական է որ երկու կողմից էլ շտապիցին եղածը ուղղել: Ֆրանսիան ընդունեց որ Բոլգարիան ունի իրաւունք օտարահանգատակին լալոնի հանգամանքներում արտաքսել, բայց այդ պահմանսուրեց մի քանի պազմաններավ, որնց մասին զես վերջնական համաձայնութիւն չի կարողել:

արտաքին քաղաքականութեան նկատմամբ, եր հանրապետութեան նախագահ Կարնօի կառավարութիւնը Ֆրէյսինէ-Կոնստան - Ռիքո-Ռութիէի մինխատրութեան ժամանակ, որը երկու տարուց աւել տևելուց յիշոյ աճա այս վետրաւր ամսին խւր հրաժարականը տւեց: Այդ մինխատրների, մանաւանդ Ֆրէյսինէի, Կոնստանի և Ռիքոի անունների հետ կառւած են Փրանխական հանրապետութեան ներքին և արտաքին յաջողութիւնները այս վերջին տարիներում: Ֆրէյսինէն, որը զինւորական չէ, իրան ցոյց տւեց լաւագոյն պատերազմական մինխատր, որ երբ և իցե ունեցել է Ֆրանխամ ներկայ երրորդ հանրապետութեան օրեւոլ. այնպէս որ նա այժմ համարւում է գրեթէ մի «անհրաժեշտ մարդ», իբր պատերազմական մինխատր: Կոնստանին պարտական է Ֆրանխամ բուլանժականութիւնը ոտնակոլս անելու համար. Ռիքոն կարեւոր ծառայութիւն է մատուցել Ռուսաստանի հետ աերո բարեկանութիւն հաստատելու համար. վերջապէս Ռուսիէն կարեւորագոյն Փինանսատկան մինխատրն է որ ցայժմ ունեցել է Ֆրանխամ այս վերջին 21 տարում: Բայց այդ ամենի մէջ Ֆրէյսինէն և Կոնստանը գլխաւոր զեկավար ոյժերն էին այս վերջին տարիներում, այնպէս որ զոքա երկուսն էլ արդէն կարեւոր պետական մարդկանց նշանակութիւն են սուացած ոչ միայն Ֆրանխայում, այլև օտար երկիրների աշքում:

Որքան ուրեմն անսպասելի էր, երբ փետրարին յանկարծ մինխատրական կրիզիս եղաւ: Պարզւեց, որ Ֆրէյսինէյի և Կոնստանի մէջ անձնական ազգեցութեան խնդիր կար, և որովհետև Ֆրէյսինէի մնալը անսպացման անհրաժեշտութիւն է զառել, ուստի կազմեց մի նոր մինխատրութիւն, ուր Ֆրէյսինէն, Ռիքոն, Ռուսիէն պահպանեցին իրանց նախկին պորտֆեյնները, խակ Կոնստանը դուրս գցւեց մինխատրական այդ նոր կոմբինացիայից: Կոնստանը սակայն այնքան շատ համակրողներ ունի շափաւոր հանրապետականների և մանաւանդ մամնուլի մէջ, որ նրան հասցրած վիրաւորանքը դուցէ արժան չը նստի ոչ միայն Ֆրէյսինէին, այլև նոյն խակ հանրապետութեան նախագահ Կարնօին, որի գէմ առաջին անգամ՝ թշնամական ձացներ են սկսում լւուել հանրապետական բանակում, քանի որ Կոնստանին գուրս մղելը մինխատրութիւնից հանրապետականների մի մասի համար հասկացւում է որպէս ապերախտութիւն Կոնստանի

մեծ ծառայութիւնների դէմ և նախանձ նորս անձնական զիրքի համար: Այդ թշնամները ի հարկէ ուղղած է առելի Ֆրէյսին!ի քան թէ Կարնօի դէմ: Կոնստանտին բացարձակ վեսաողները եզւն նոյն թշւառական բուլանմիստները, որոնց պարագլիսին այնքան սարսափելի կերպով ջարդեց Կոնստանտը:

Այժմեայ նոր մինխոտրութիւնը կազմւած է այսպէս՝ Լուրէ— նախագահ և ներքին գործերի մինխոտր. Ֆրէյսինէ պատերազմական, Արքօն՝ արտաքին գործերի, Առութի՛ Փինանսների, Կառւենեակ՝ ծովացին, Առշ՝ առեւտրի, Արիկար՝ արդարադատութեան և դաւանանքների մինխոտր և այլն: Այդ նոյնն էր թէ շարունակութիւն Ֆրէյսինէի մինխոտրութեան, առանց Կոնստանտի:

---

Վերջին ամիսների կարեոր դէռքերի թւին է պատկանում Փրանսիական կարգինալների հոչակաւոր յայտարարութիւնը: Բայց այդ դէռքը շատ է նշանաւոր, այնպէս որ մենք այդ դրկումենալ առաջ կը բերենք առանց այլ ևս վերաշառնալու մինխոտրական կրիզիսի խնդրին:

Ահա այդ դրկումենալը, որը կաթոլիկական կուսակցութեան պատմութեան մէջ անկասկած կարեոր տեղ է բոնելու, և որովէս այդպիսին՝ պատմական դրկումենալի կարեւորութիւն է ստացել: Պէտք է նկատած, որ այդ յայտարարութիւնը տպեց երբ Հռոմի պապը մի նախակով Պարիզի արքեպիսկոպոսին պարւիրել էր հաշտել հանրապետութեան կառավարութեան ձեւի հետ:

Ահա այդ յայտարարութիւնը:

«Ամենից առաջ յայտարարում ենք նորից, համաձայն Սուրբ Աթոռի կարգադրութիւններին և կաթոլիկական առանդրութեան, որ մենք ոչ մի ընդդիմադրութիւն չենք անում այն կառավարչական ձեւին, որ Ֆրանսիան իրան տւել է: Մենք կարծում ենք որ երկիրը կարոտ է կառավարութեան տևողականութեան և կրօնական ազատութեան:»

Այդ դժւար խոսովանութիւնը անելուց յետոյ կարգինալները վկայում են որ հանրապետութիւնը տասներկու տարուց դէս, այսինքն այն օրից, երբ հանրապետականներն են զեկավարները, մի ծրագիր է մարմնացնում, որը կաթոլիկական հաւաաի դէմ է, և որ ոչինչ՝ ոչ անձնաւորութիւններ, ոչ հիմնարկութիւններ և ոչ շահեր չեն խնայւած հալածանքից, ասորացումից և կործանումից:

I. Ամենից առաջ նոցա (կաթոլիկների) պար սականութիւնն է՝ քաղաքական երկագուռակութիւնները լոեցնել, վճռողաբար իրանց գնելով սահմանադրութեան հողի վերաց, և ամենից առաջ ընդունելով վտանգւած հաւատի պաշտպանութիւնը:

II. Եկեղեցին չի ուզում իրան զնել կառավարութեան և քաղաքացիների մէջ տեղը՝ քաղաքական իշխանութիւնները սահմանափակելու համար սուրբ նորա սուրբադրեալների գիհայց: Բայց և պետութիւնը չը պետք է եկեղեցու և հաւատացեալների մէջ տեղը կանգնի: մի հոգեւոր կոչման պաշտօնակառարութիւնը խանգարելու, որը ոչ թէ նրանից, այլ Ասութուց է բղխում:

III. Կաթոլիկները ամենեին յաւակնութիւն չոնին պետութեան մէջ մի պետութիւն կազմելու: բայց նոքա չն էլ թոյլ տալիս որ քաղաքական իշխանութիւնը գրաւի եկեղեցին իր իւր վարչական ճիւղերից մէկը:

IV. Կաթոլիկները պետք է ընդունեն զինուրական և զոլորացական օրէնքները որպիս վաստ նոքա կարող են հարկադրւած լինել այդ օրէնքները տանելու, բայց ոչ երբեք նոցա ընդունելու: Աւատի նոցա պարագն է՝ բոլոր օրինաւոր ճանապարհներով այն մոքով գործելու, որ այդ օրէնքները յետո կոչւեն, կամ առնւտղն որ այն ամենը հետացնաի նոցա միջից, ինչ վիրաւորում է քրիստոնէական խղձմանքը:

V. Կաթոլիկները պետք է յարգեն Կոնկորդասոի<sup>1)</sup> մէջ տւած

<sup>1)</sup> Կոնկորդասո, ալտուեկ Փրանչական Կոնկորդասոն է համացւում, ալտինքն այն համաձայնութիւնը, այն դաշնը որ կապեց Նապոլեոն Առաջնի և պատ Պիտո Էօմներուպալի հետ 1801 թ. լուլա՛ 15-ին: Դա մի օրէնք է, որը սահմանում է Փրանչական պետութեան և կաթոլիկական հոգեւոր իշխանութեան փոխազարձ չարաբերութիւնները և իշխանութեան սահմանները Ֆրանչական և Կոնկորդասո մէնչ այժմ ել օրէնքի զօրութիւն ունի: Արմատական կուսակցութիւնը շատ սարիներից ի վեր աշխատաւում է Կոնկորդասո վիրացնել և թողնել որ կաթոլիկները իրանց սեպհական (և ոչ պետական) միջոցներավ կաթոլիկ հոգեւորականութիւնը պահպանեն: պահանջում է որ Ֆրանչական չ'ունինալ Սուրբ Աթոռի համար առանձին գեսարան և այն: Արմատականների այդ պահանջները ամփոփում են այս խօսքի մէջ՝ Եկեղեցու բաժանումն պետութիւնից—Séparation de l'Eglise et de l'Etat.

խօսքը, ձեռք բերած իրաւունքները, բարոցական խաղաղութեան պայմանը — որը մի դարուց ի վեր ձեն է այն ներդաշնակութեան, որը երկու իշխանութեան մէջ ողէտք է տիրէ և որը վերջապէս մի խոստովանութիւն է, որ աշխարհական իշխանութիւնը անում է եկեղեցու քաղաքակրթական կոչման համար մարդկացին հասարակութիւնների գրկում:

ՎI. Այն օժանդակութիւնների մէջ, որ պետական գանձարանը տալիս է կաթոլիկ եկեղեցականներին և որոնք ապահովւած են Կոնկորդասով, նոքա (կաթոլիկները) պէտք է տեսնեն պետութեան սրբազործւած մի պարագ եկեղեցու գիմաց, այն եկեղեցու, որը պետական գանձարանից արւածից շատ աւելի մեծ եկամուաններ հարիւր տարի առաջ ազգի կարգաբրութիւնների ներքոյ դրեց:

ՎII. Մենք գործ չունինք զբաղւելու կոնկորդատը քանդելու կարելիութեան հետ: Աշխարհական իշխանութիւնը մեզնից սպասում է որ յարգենք գոյութիւն ունեցող դաշնադրութիւնները, որպէս և մենք համոզւած ենք որ պապը ամենածանր հանգամանքնեւում կը մնարելի սուրբ Անականի այսպահն յաճախ կրկնւած խօսքը թէ՝ «Ուինչ չը կայ Աստծուն այնքան հաճելի երկրիս վերաց, որքան եկեղեցու ազատութիւնը»:

ՎIII. Մի խօսքով՝ յարգանք դէպի երկրի օրէնքները բացի այն դէպքում, երբ նոքա խղճի պահանջների դէմ են. յարգանք դէպի իշխանութեան ներկայացուցիչները. պարզ և շխակ ընդունումն քաղաքական հիմնարկութիւնների. բայց միւնոցն ժամանակ զօրեղ ընդդիմադրութիւն աշխարհական իշխանութեան ունաձութիւններին հողեւոր ասպարիզի վերաց, ներգործական և զոհաբերական անձնի իրութիւն դէպի հիմնարկութիւնները, որոնց նպատակն է մասաւ անդգամառանդութիւնով՝ քրիստոնէական հասարակութեան, առաքելականութեան և բարեգործութեան համար անկախութեան պայմանները առեղծել. վերջապէս հաւասարիմ կատարումն ընտրողական պարտականութեան, որով բոլոր բարեմիանները կարողանան ապահովել մի ազգացին ներկայացուցչութիւն, որը երկրի յանկութիւններին իսկապէս համապատասխանէ և կարող լինի օրէնսդրութեան մէջ քաղաքական խաղաղութիւնը ապահովող ըեփորմներ մնայնեւ:

Դոկումենտը վերջանում է ցաւակյութիւնով որ հոգևոր առաջնորդները հանգահանքների ծանրութիւններից առխպաց են առաջքերել եկեղեցու գանդասանները նոցա զեմ, որոնք կրօնին հակառակ գիտաւորութիւններ են մացնում իրանց քաղաքականութեան մեջ: Թղթին սոորագրող հինգ ֆրանսիական կարդինալները անկակած զգում են որ նոքա ՎՀՕ ԽIII-ի մաքով չեն վարւում, երբ իրանք իրանց հապատակութիւնից առաջ (Ֆրանսիացի հանրապետական կառավարութեան) միաժամանակ զանգա ոներ ենք անում կառավարութեան վերաց: Բայց նոքա միմիթարւում են պարոք կառարած լինելու գիտակցութիւնով:

Ստորագրել են կարգինալներ՝ Դեպրէ (Տուլուզի արքեպիսկո), Լանժենիո (արքեպ. Աննսի), Պլաս (արքեպ. Աննիի), Թիշար (արքեպ. Պարիզի), և Ֆուլրն (արքեպ. Լիոնի):

Ահա այն դոկումենտը, որ հրատարակել են հինգ ֆրանսիական կարդինալները և որին յետոյ յարեց նաև կարդինալ Լաւիժըրի: Այդ զրութիւնը, որպէս հասկանալի է, ահազին աղմուկ հանեց. նա բնորոշ է կաթոլիկ կուսակցութեան համար առհասարակ: Եւ շատ տարբեր կերպով մեկնեց նորա իմաստը: Յամենացն դէպս ացժմ կատարւած իրողութիւն է որ կաթոլիկութիւնը հաշուում է հանրապետական կառավարութեան ձեի հետ: Գաղափարների այդ փոփոխութեան գլխաւոր հեղինակը հենց ինքը պատ Լեռն ԽIII-ն է: «Մուրճ»-ի ընթերցողներին մենք իւր ժամանակ (1890 № 12) հարկ համարեցինք խօսել ֆրանսիական կարգինալ Լաւիժըրիի մի ճառի մասին, որը զարմացրեց ամենքին իւր խոսանվանութիւնով յօդուա հանրապետութեան: Այժմ, որպէս տեսնում ենք, պապի այդ քաղաքականութիւնը վերջնականապէս լինգունւում է ֆրանսիական հոգևորականներից, թէ և, որպէս կարելի է եղակացնել, իրանց աւանդութեան և սրտի հակառակ:

Հանրապետականները, մի կողմից ուրախացած իրանց այն յաղթութեան համար, որ իրանց ոյժը առիսել է կաթոլիկ յամակուսակցութիւնը խոնարհւել հանրապետութեան առաջ, այնուամենացնիւ թշնամանքով վերաբերւեցին դէպի հինգ կարդինալների այդ յայտարարութիւնը: Վասնգը այն է, որ կաթոլիկ կուսակցութիւնը իրան հանրապետական անւանելով, այժմ կարող է միանալ

ցայծմեաց հանրապետական պահպանողականների հետ և պարլամենտում այզպիսով կազմել մի մեծամասնութիւն յօգուտ կաթողիկոների քաղաքականութեան։ Անկեղծ հանրապետականները ուրեմն ջանք են անում որ այդ վտանգը չիրականանայ և այդ պատճառով այժմ ամեն մի մինիստրութիւնից պահանջում են որ կասկածաւոր տարրեր չը մտնեն նորա մէջ։

Աերջին ամիսների կարևոր անցքերի շարքին պատկանում է մի կողմից Դերմանիայի, Աւարիա-Աւնդարիայի և Խտալիայի միջեկապած առևտրական դաշնակցութիւնը (12 տարով, սկսած ներկայ փետրուար ամսից), միւս կողմից ֆրանսիական մաքսային բերքորմը։ Թէ որ աստիճանի մեծ քաղաքական նշանակութիւն է արևում Միջին-Եւրոպայի պետութիւնների մէջ գլուխ բերած առևտրական կամ մաքսային դաշնակցութեանը, այդ երեսում է նրանից, որ գերմանական կայսր Վիլհելմ II իւր կանցլեր ֆոն Կապրիւիին կոմնի ախտղոս շնորհեց հենց այն բողէին, երբ հեռազեր ստացաւ դաշնը ստորագրելու մտախն։ Ուրեմն այն քաղաքական բարեկամութիւնը որ ասրիներից ի վեր կապում է Միջին-Եւրոպայի երեք առաջնակարգ տէրութիւններին, հետևցը երեք պետութիւնների առևտրական բարեկամութիւնը, որ ահազին նշանակութիւն ունի ազգերի կեանքում։

Կատարեալ վոփոխութեան և նաև Ֆրանսիայի մաքսային սիստեմը Սկսած երեսուն տարիներից ի վեր, նապոլէօն III-ի ժամանակից, 60-ական թւականների սկզբից եւրոպական միջազգային առևտուրի համար պետութիւնները իրար հետ առևտրական դաշնքներ են կապում, որոնցով ամեն մի երկիր աշխատում է իւր ապրանքները միւս երկիրը անցկացնելու համար՝ կարելիին չափ քիչ մաքս նշանակել կամ, եթէ կարելի է՝ բոլորովին առանց մաքսի ներմուծելու իրաւունք ստանալ։ Այսպիսով առևտրական դաշնքներով իրար հետ կապւածները օգտուում են մաքսի կողմից արտօնութիւններով, որ չեն վայելում այն երկիրները, որոնց հետ առևտրական դաշնքներ չը կան կապւած։ Դրանով առաջւանից շատ աւելի նպաստեց միջազգային առուտուրը։

Այդ, միջազգային առևտորին կարելիին չափ ազատ ընթացք տալու քաղաքականութեանը առաջին մեծ հարւածը աւեց 70-ական թւականների վերջում իշխան Տիամարկը, որը սկսեց հետեւել պրոտեկցիոնիստ, այսինքն հովանաւորող քաղաքականութեան, բարձրացնելով մաքսերը օտար ապրանքների վերաց, որ ներմուծւում էին Գերմանիա: Գերմանիայի օրինակից խրախուսւեց մանաւանդ Ուռասաստանը, և ամենքին յայտնի է թէ որքան ուռասական մաքսերը բարձրացել են այս վերջին տասնեակ տարիներում: Եւրոպական մեծ տէրութիւնների քաղաքական լարւած յարաբերութիւնները շատ նպաստեցին որ առևտորական բարեկամութիւնները շատ երկիրների միջև գաղարեն, տեղի տալով իրար վռնտող քաղաքականութեան:— Դորա հակառակ այժմ, երբ միջնեւրոպական երեք ողեառութիւնների մէջ քաղաքական սերու բարեկամութիւն կաց, նոցա մէջ էլ բնական է որ պէտք է հաստատուեր նաև առևտորական բարեկամութիւն:

Ֆրանսիայում, քաղաքականապէս լարւած լինելով եւրոպական տէրութիւնների մեծամասնութեան հետ, այս վերջին տարիներս սկսեց զօրեզանալ հովանաւորող կուսակցութիւնը, որի ճանաչւած առաջնորդն էնախիլին մինիստր և այժմ՝ պարլամենտի անդամ՝ Մելինը: Այդ կուսակցութեան անւանում են նաև ադրաբականների կուսակցութիւն, որովհետև նորա կարծիքով՝ մինչ այժմ տիրապետող տնտեսական քաղաքականութիւնը որքան նպաստաւոր էր ֆաբրիկային (գործարանական) արդիւնաբերութեան, նոյնիքան նա վեասակար էր երկրագործութեան և առհասարակ հում նիւթերի արդիւնաբերութեանը. և այդ պատճառով, նոցա ասելով՝ այժմ՝ պէտք է աշխատել հաւասարակշռութիւն առեղծել հում նիւթերի արդիւնաբերութեան և գործարանական արդիւնաբերութեան մէջ, որ կարելի է միայն մեծ մաքսեր նշանակելով օտար երկիրների հում բերքերի վերաց:

Այս կուսակցութիւնը անսպասելի մեծ ոյժ տառայաւ Ֆրանսիայում, և պարլամենտում նորա գէմ ոչինչ չը կարողացաւ գիմանալ, այնպէս որ ամեն մի մինիստրութիւն կարող էր յոյս ունենալ քիչ թէ շատ ապրելու. եթէ միայն մաքսային խնդիրներում հետեւող լինէր Մելինի կուսակցութեան:

Ստեղծւեց մաքսերի մի նոր սիստեմ՝ երեք աստիճաններով. այն

երկիրների համար, որոնք կը համաձայնեն ֆրանսիական ապրանքների համար փոքր մաքս նշանակել՝ ֆրանսիան կը զործադրի առաջին աստիճանի, այսինքն ամենափոքր մաքսերը, աւելի խստավահանջների համար՝ միջակ մաքսեր, իսկ ամենախստավահանջների համար՝ ամենաբարձր մաքսեր։ Բայց նոյն իսկ նշանակւած ամենափոքր մաքսերը առաջւայ համեմատութեամբ շատ բարձր էն, իսկ ամենաբարձր մաքսերը այնքան բարձր էն, որ արգելք դնելու հաւասար նշանակութիւն ունին:

Ֆրանսիայի մաքսային այդ սիստեմը սկսեց կործադրւել ներկայ գետարւար ամսի 1-ից։ Խւր տեսակում գա մի նորաձեռւթիւն է դեռ ևս անյայտ ապազայով։ Բայց, բացի Խսղանիայից, որի հետ առանձին համաձայնութիւն կարելի չեղաւ կայացնել, պետութիւնների մեծադրյն մասը արգէն համաձայնութիւն է տուել ընդհանուր տարիի փոքրադրյն մաքսերի վտարելու առանձին արտօնութիւններ տալ ֆրանսիական ապրանքների համար։

Քաղաքակրթութեան աշխարհի համար մի վերին աստիճանի հետաքրքրական կարեւոր մի խնդիր ներկայ բոլորումն կլանել է ամբողջ Գերմանիայի ուշադրութիւնը։ Դա պրուսական դպրոցական բեֆորմի խնդիրն է, որի առիթով պրուսական կառավարութիւնը առաջարկել է պրուսական պարլամենտին մի օրինագիծ մօտ երկու հարիւր յօւթածներով։ Այդ օրինագիծը, որը ուղղում է Պրուսիայի դպրոցական դործը կրօնական գաւանակների հողի վերայ գնել՝ դրականապէս ամբողջ Գերմանիան բաժանել է երկու կուսակցութիւնների, որոնցից ազատամիտ կուսակցութիւնը վերջին ծալը ջանքեր է անում խանդարել այդ օրինագիծի իրականակարուն, նորանով խախտած տեսնելով ներկայիս քաղաքակրթութեան սկզբունքները։ Բայց դա արգէն մի նիւթ է, որին հարկաւոր ենք համարում այլ անգամ վերադառնալ:

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՍԻՑ

ՍԻՄՖՈՆԻԱՊՈԼԻ, Պ. Առաքել Նալբանդյանին։ Զեր քողւածի խմաստը սա է, որ Թիֆլիսում կամ Պոլսամ մի մասնաժողով կազմել՝ արևելքան և արևմտան գրական լիգուններից մի ընդհանուր հաջկական գրական-դպրոցական լեզու ստեղծելու համար։ Զը տպեցինք քողւածը, համարելով այդ տուաշարկը անպործնական։

ԹԱԻՐԻՁԻ ԼԻԱ.Ա.Ի. թաղի Հայոց երկնելու դպր. հոգաբարձութիւնը «ինդրում է ոռուահակ բարեմիտ պարոններից, որ նոքա ըստ չափու կարեաց նպաստն զանազան գրքերով զպրոցի աղքատիկ գրադարանին, որը նիւթական միջոցների ուղղութեան պատճառով զանափում է աննախանձ վիճակի մէջ»։

Ա. ՇԱՀԱԶԲԻՁԻ ՅՕԲԵԼԵԱՆԻ, «Մուրճ»-ի անցեալ Հ-ում մենք հաղորդեցինք որ պ. Ամբատ Շահազիլեանի օրելեանը Մոսկվաի հոսարակութիւնը մասդիր է աօնել Զատկի տօններին։ Այժմ մենք ստանում ենք օրելեանը կարգավորված լանձնաժողովից հետևեալ տպագրւած գրութիւնը։

«Ներկայ 1892 թ. լրանում է լավոնի բանաստեղծ Սմբատ Շահազիլեանի ուսուցչութեան երեսնամեակը, այդ առիթով Մոսկվաի հայ հստարակութիւնը վճռել է առաջիկաց ապրիլի 9.ին տօնել նորա մանկավարժական և գրականական գործունեութիւնը։

Կարգագրիչ լանձնաժողովը հրաւիրում է բանաստեղծի տաղանդը լարզողներին և վաղեմի աշակերտներին մասնակցել այդ աօնախմբութեանը։

Ռուգերձներ, նորհաւորական նստակիներ և հեռագիրներ կարելի է ուղարկել լանձնաժողովի անդամ պ. Յովհաննէս ՏերՅակոբեանին հետևեալ հասցէտ. Մոսկվա, Պոկրովկա, Լյալինը, պր., դ. Ստրյու։

Օգտում ենք դէպքից հաղորդելու, որ Թիֆլիսի Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը պատրաստում է պ. Շահազիլի բանաստեղծական բոլոր գրւածները զոյա մէջ և «Անոնի վիշտը» պոէմանի նոր տպագրութիւնը։

ԿԱՐԱՍՈՒԻ-ԲԱԶԱՐ, հակոց զպրոցինս Սխալմամբ ուղարկւած №-ի տեղ ուղարկւեց ներկայ թւ. № 1.

ՎՐԻՊԱԿՆԵՐ «Մուրճ» № 1. երես 20 տպւած է՝ ներկայ 1891 թւականին, պէտք է լինի՝ Անցեալ 1891 թւականին. «Երուսաղէմի պատերի առաջ» ոսանաւորի մէջ երես 78 տող 11 տպւած է՝ բաւան չեն քեզ, ուղիղն է՝ բոււական չեն քեզ.

Երաժշտական նկատողութիւնների մէջ երես 163, տող 9 վերեից տպւած է՝ աւելի համարձակ ուղիղնէ՝ աւելի համարձակին.

Պ. Շռումպիփի նամակում՝ երես 173, տող 10-դ ներքեւից տպւած է՝ պատասխանում է, ուղիղն է՝ պատրաստում է մի աշխատութիւն:


Խմբագրութեան կողմից բամնում երես 177, տող 18 վերեից տպւած է՝ Վարդազեան Փիլիպպոս, պիտի լինի՝ Վարդազարեան Փիլիպպոս:

ԱՄԹՈՂԻԿՈՍԱՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ: «Մուրճ» № 1 տպւած «Ամթողիկոսական թիկնածուներ» օգևածում վշատակւած էին Խրիմնանից վետոչ չորս ալի անուններ, սրբնք, մեր, որպէս ասել էինք՝ թերի տեղեկութիւնների համեմատ, կարող էին «Մուրճ»-ի աւուակէտից տեղ ըռնել կաթողիկոսական թիկնածուների քառանուն ցանկի մէջ. Ալդ անուններից տաճկահայերից «Մուրճ»-ը վիշել էր երկուսին՝ Մատթէոս եղ. Խղմիրլեանին և Գրիգորիս եղ. Ալէաթ-ձեանին. Մեր ալս ամսում ստացած տեղեկութիւնների համեմատ, եթէ ինպիր լինի ալդ երկուսի համար, գերադասութիւն պէտք է տալ Գրիգորիս եղ. Ալէաթձեանին, որը Տաճկաստանի կարող և արգիւնաւէտ եկեղեցականներից մէկը լինելով՝ Խրիմնանական զոյն կրող ցուցակում աւելի դրական իրաւունք ունի տեղ բռնելու:

## ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

## ԱՐՏԱՏՊԻԱԾ „ՄՈՒՐՃ“ ԱՄՍԱԳՐԻՑ

	թ.
1. «ՄՈՒՐՃ» ամսագիր, 1889 թ., երկու հատորով . . .	12 —
Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . . .	7 —
2. «ՄՈՒՐՃ» ամսագիր 1890 թւականի, երկու հատորով . . .	12 —
Նոյնը «Մուրճ»-ի այժմեայ բաժանորդների համար . . .	7 —
3. ՊՌՈՅԵԱՆՅ, Պերձ.—«ՑԵՅԵԲ» (վէպ) . . . . .	1 —
4. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ, ԳՐԻԳՈՐ (Ղ.ՂՂԱՐԳԻ)՝ «Մանուկների մարտողութ. գործարանների հիւանդութիւնները» . . .	— 05
5. ԱՏՐՊԵՏԵԱՆ, Ս. — «ԽԵԽ-ԿԱՐԱՎԱՅԵՏ», վէպ հայկաթողիկ-ների կեանքից . . . . .	1 —
6. ԼԵՕ. — «ԿՈՐԱԾՆԵԲ» (վէպ) . . . . .	— 50
7. Մ.-ՇԱՀԱԶԱՐԵԱՆՅ, Ս. — «ՀԱՅ ԳԻՒՂԱՅՈՒ ՍԵՒ ՕՐԸ»: (Կեանքից պատկեր) . . . . .	— 40
8. ՍԱՐԳՍԵԱՆՅ, ԼԵԽՈՆ. — «ԱՅՅ ԹԻՒՐՔԱՅ-ՀԱՅԱՏԱՆԻՆ» .	— 60
9. ՊՈ-ՇԵԵԱՆՅ, ՊԵՐՁ. — «ԲՂԴԵԿ», վէպ . . . . .	1 20
10. ՓԱՓԱԶԵԱՆՅ, Վ. — «ԽԱԹ-ՍԱԲԱ» (Հայ բոշան. կեանքից)	— 15
11. ՄԱՐԴՍԵԱՆ, ՄԻԿԻՆ Մ. — «ՀԵՂԻՆԵ» (մեծ վէպ), ա. մասը	— 50
12.     »         »         »         »         բ. մասը	— 75
12. ՊԱՐԱԳԵԶՋԵԱՆՅ, Յ. — «ՍԵԽ-ԼԵԽ-ՆՅԻՔ» (տոհմագ. պատկ.)	— 15
13. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ. — «ՀԱՐԵՒԱՆՆԵԲ» . . . . .	— 03
14.     »         »         »         »         » ՄԻՒՆԱՍԻ ԵԶԸ» . . . . .	— 03
15.     »         »         »         »         » «ԵԶԻԴ ԱՂՋԻԿԵ» . . . . .	— 05
16.     »         »         »         »         » «ԾԱՆՐ ՔԱՐԵ» . . . . .	— 03
17.     »         »         »         »         » «ՆԻՍՉԻԱԾ ԿԵԱՆՔ» . . . . .	— 03
18.     »         »         »         »         » ՄԵՐ ԻՆՉԸ ԿԸ ՊԱԿՍԻ . . . . .	— 03
19. ՔԵՆՄԻՇԵԱՆՅ, ԱԼ. — «ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔ» . . . . .	— 15
20. ԲԱԼԱԳԵԱՆ, ՍԱՄՈՒԵԼ. — «ՄԻԿՐՈԲԵՆԵՐԸ» . . . . .	— 10
21. ՄԱՆՈՒԵԼԵԱՆՅ, ԼԵԽՈՆ. — «ԶԱԼԱԲԻՆՆԵՐԻ ԱՐՆԱՒԱՆՔ» .	— 10
22. ՏՈՒԵՆ, ՄԱՐԿ. — «ԶԻԱՐՃԱԼԻ ՊԱՏՄԻԱԾՔՆԵԲ» . . . . .	— 15
23. ՎՐՈՅՐ, Մ. — «ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ» . . . . .	— 20
Դիմել ՎԵ Ռեդակցիո յշրալա „ՄՈՐՎԵ“. Վճարել կարիլ է նաև պոստի մարկաներով:	



# Մ Ո Ւ Բ Շ

ՔԱՂԱՔԱԿԱՆ – ՀԱՍՏԱԿԱԿԱՆ – ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ա Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1892 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ԲԱՑԻԱԾ Է

Տարեկան գինն է 10 ր.

Բաժանորդագրութեան համար զիմել՝

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ. { Տիֆլիս. Въ редакцію журнала „МУРЧЪ“.  
Tiflis. Rédaction de la Revue „MOURTOH“.

Կամ մեր գործակալութիւններին՝

Թիֆլիս. — Կինորոնայան դրավաճառանոց:

» աղ. Յովհաննէս Թումեանց, Սիօնի փողոց № 27:

ԲԱՔՈՒ. — աղ. Աւետիս Դաւթեանց (Մարգար. ընկ, ընթերցարան):

» աղ. Ստեփան Սուլլաննեանց („Надежда“ լնկ., Набережная,  
домъ Шагерданова).

ԲԱԹՈՒՄ. — աղ. Մարգիս Մակարեանց (գրաս., եղբ., Ծովեանների):

ԵՐԵՒԱՆ. — աղ. Սիրական Տէր-Մարտիրոսեանցի դրասենեակ:

ԱԳՈՒԼԻՄ. — աղ. Ստեփան Արամիսանեանց:

ՄԱՍԿԻՄ. — աղ. Վարդան Թումաննեանց (Чистые Пруды, д. Тупицына,  
գրասենեակ Ս. Թումաննեանց):

» աղ. Ստեփան Վարդազարեանց, (Բ. Харитоньевскій, № 6):

ՕԴԻՍՍ. — աղ. Միքայէլ Մուրագեանց (գրաս., եղբ., Ծովեանների):

ԹԱՒՐԻԶ. — աղ. Աստուր-բէկ Միքայէլեանց:

ԶՄԻՒՐՆԻՄ. — աղ. Յ. Տէր-Միքարեանց (Մելրոպ., վարժարան):

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ. — աղ. Յակոբ Յ. Տէր-Պօղոսեանին:

ՄԱՐՍԵՅԼ. — աղ. Սիմէօն Միքայէլեանց:

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ գտանւում է Թիֆլիս, Վեհամինեան փողոց, տուն № 8: